

ՀԱՅՐԵՆԻՓԻ ԶԱՒԱԿՆԵՐԸ

Հրապարակելու է 2. Վահան Յովհաննէսեանի կրթական, բարոյական եւ հայրենաշունչ պատմա-լածօճներու շարքը. հայ տուններուն զարգմ է, մա-նուկներու երգանկութիւնը՝ իրենց հետաքրքրական բովանդակութեամբ:

Ամէն սրտի յարմար հատորներ.

- 1.- Անիէն ԳԱՐ ՄԸ ԲԵՐ
- 2.- ԱՐԳԻՆԱՅԻ ԶԱՆԳԱԿՆԵՐԸ
- 3.- ՍՄԲԱՏԻ ԳԱՆՁԵՐԸ
- 4.- ՇԵՄՔՈՐԻ ԱՓԻՆ
ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ
- 5.- ԳԱՅԻԱՆԷԻ ՎՐԷԺԸ
- 6.- ԼԵՌՆԵՐՈՒ ԵՐԳԸ
- 7.- ԲԱԿԻՆ ՊԶՏԻԿԸ
- 8.- ԼԵՁՈՒՆ ՈՐ ԿԸ ՄԵՌԻՆԻ
- 9.- ՓՈՔՐԻԿ ՍԱՍՈՒՆՑԻՆ
(Շարունակելի)

2. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ԳԱՅԻԱՆԷԻ

ՎՐԷԺԸ



Հայրենիքի

Զանկները

5

863.7
3847
Գ.5

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶԱԻԱԿՆԵՐԸ

Հրապարակ ելաւ 2- վահան Յովհաննէսեանի կրթական, բարոյական եւ հայրենաշունչ պատմութեամբ շարքը. հայ տուններուն զարդն է, մանուկներու երջանկութիւնը՝ իրենց հետաքրքրական բովանդակութեամբ:

Ամէն սրտի յարմար հատորներ.

- 1.- ԱՆԻԷՆ ՔԱՐ ՄԸ ԲԵՐ
- 2.- ԱՐԳԻՆԱՅԻ ԶԱՆԳԱԿՆԵՐԸ
- 3.- ՍՄԲԱՏԻ ԳԱՆՁԵՐԸ
- 4.- ՇԵՄՔՈՐԻ ԱՓԻՆ
ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ
- 5.- ԳԱՅԻԱՆԷԻ ՎՐԷԺԸ
- 6.- ԼԵՌՆԵՐՈՒ ԵՐԳԸ
- 7.- ԲԱԿԻՆ ՊԶՏԻԿԸ
- 8.- ԼԵԶՈՒՆ ՈՐ ԿԸ ՄԵՌՆԻ
- 9.- ՓՈՔՐԻԿ ՍԱՍՈՒՆՅԻՆ
(Շարունակելի)

2. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ՇԵՄՔՈՐԻ ԱՓԻՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ
ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ



Հայրենիքի

Զանգերը

4

863.7
3847
9.4

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶԱՒԱԿՆԵՐԸ

ԹԻԻ 5

863.7

3847

հ. 5

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ԳԱՅԻԱՆԷԻ ՎՐԷԺԸ

ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

10921

— Կը տեսնե՞ս այդ դրօշակը, ըսաւ Գայիանէ իր Կատար ընկերուհիին, ես իմ ձեռքովս հիւսած եմ, տես ի՞նչ գեղեցիկ է, հարազատ մետաքս է:

— Ծիրանիի պէս կը փայլի վերջին շողերուն տակ: Մատներդ յաւերժահարսի մատներ են:

— Հինը մաշած ու պատուտած էր մեր Արցախի լեռներուն կատաղի հովերէն ու բուքերէն: Հայրս, կ'ուզէ որ միշտ մեր բերդին վրայ ծածանի եւ դեռ թշնամի մը չկրցաւ զայն վար առնել:

— Աստուած չընէ, Գայիանէ. դրօշակէն աւելի մենք զո՞հ կ'երթանք այդ այլադաւաններուն:

— Ե՞ս, ե՞ս Կատար, Մելիք Աւանի աղջիկ՞ը. այս լեռները վկայ, արիւն կը հանեմ արիւնի դէմ:

— Մենք ի՞նչ ոյժ ունինք երկաթէ մարդերուն դէմ, շատ շատ ինքզինքնիս ժայռերէն վար նետել մեր պատիւը պահելու համար:

— Թող իրենք սատկին, ես ինչո՞ւ պիտի մեռնիմ, պատասխանեց Գայիանէ առնական կորովով:

Երկու աղջնակները, Գայիանէն տասներեք տարեկան եւ Կատար տասներկու տարեկան, Յուլիսի գեղեցիկ երեկոյ մը Վարանդայի մելիքութեան Աւետարա-

նոց գիւղը կը դառնային Արցախի լեռներէն: Վայրի ծաղիկներ հաւաքած էին, սարի կարօտ ունէին: Բնութիւնը մերկացած ձմրան թանձր ձիւներէն, սիւսած էր փափուկ կանաչ մը այդ բիրտ սարերուն վրայ: Ո՞վ պիտի չփափաքէր լեռ բարձրանալ եւ ծծել թարմ օդը, զգալ հազար գունեան ծաղիկներու բոյրը:

Կ'իջնէին ու կը մօտենային գիւղին: Երկու գիւղ ու քաղցր ձայներ մեղմ հովին հետ դրօշակի պէս կը ծածանէին:

Գարձիբ արեւ, ետ դարձիբ
Ոսկի շողերդ սըփռէ.
Արցախն ազատ աշխարհ է,
Հոն քըշնամին չի հանգչիր:

Փափուկ մատներ հիւսեցին
Դըրօշակը մեր ծիրանի,
Թող յաւիտեան սաւառնի,
Հովերուն հետ միասին:

Աղջիկներու ձայնն հասաւ գիւղի առաջին տուներուն, որոնք ոչխարներու պէս ամփոփուած էին Մելիք Աւանի բերդին շուրջը:

Գայիանէն գիւղին զեղեցիկ աղջիկն էր, սեւ սաթի պէս երկայն մազերով, սեւ սալորի պէս աչքերով եւ կարապի կուրծքի նման սպիտակ մորթով: Մելիք Աւանի միակ ծաղիկն էր. Աւետարանոց գիւղի փերին:

Կատար հարուստ գիւղացի, անասուններով եւ արտերով ճոր՝ տանուտէր Գիսակի աղջիկն էր. ինքն ալ սեւուլիկ մազերով, անոյշ աչքերով եւ կանացի փափուկ կազմով եղեւին մ'էր, ինչպէս իր մայրը պիտի փափաքէր:

Երբ աղջիկները գիւղ մտան, պառաւներ տուներու առջեւ նստած, նախանձոտ աչքերով չափեցին զիրենք, հաճոյքով լեցուեցան տեսնելով գիւղին երկու յաւեր-ժահարները:

— Երանի իրենց մայրերուն, ըսաւ պառաւ մը:

— Աստուած երկու աստղեր զրկած է մեր գիւղը, վրայ բերաւ ուրիշ մը:

— Գայիանէ, աղջիկս, ըսաւ կին մը, այդ ի՞նչ սիրուն ծաղիկներ հաւաքած ես, ո՞ր սարը բարձրացար:

— Գրեթէ մինչեւ Տիգակ լեռան դադաթը բարձրացանք. տեսնէիր, Սոնա մայրիկ, ի՞նչ գեղեցկութիւն, զմբուխտէ արօտավայրեր և ոչխարներու խումբեր կարծես թէ սպիտակ ամպի կոյտեր ըլլային:

— Ես ալ էլած եմ այդ լեռը, բայց հիմա ծունկերս չեն բռներ. ալ տարիքս շատ առաջ դացած է:

Կատար Գայիանէին հետ ուղեց ծաղիկները Մելիք Աւանին տանիլ:

— Թող իր անսահման սարերուն բոյրն առնէ, ըսաւ:

— Բայց ես մայրիկիս գիւղը պիտի նետեմ, պատասխանեց Գայիանէ:

Գայիանէի մայրը մելիքի աղջիկ էր, անունը Ոսկինար, հազիւ երեսունըհինգ տարեկան կար, հինգ տարի փոքր իր ամուսինէն. պահած էր իր թարմ գոյնը եւ երիտասարդ հոգին: Բայց միայն անոյշ մայր էր, չունէր իր աղջկան առնացի կորովը. քնքուշ էր վարդի նման եւ երբ ժպտէր՝ դարուն կը բացուէր:

Մելիք Աւանը նստած էր իր դահլիճին մէջ, ընկողմանած մետաքսէ բարձի մը վրայ մտիկ կ'ընէր նորեկի մը հեղեղային խօսքերը: Իր մօտն էր տանուտէր Գի-

սակ, իրարմէ անբաժան էին խորհուրդի եւ ժամանցի պահերուն:

Գայիանէ Կատարին հետ դահլիճ մտաւ եւ մէկ մէկ հատ ծաղիկ նետեց երեքին առջեւ:

— Մէկ ծաղիկ դուն, մէկ ծաղիկ մեր սարերուն պտուղ, ո՞րն է աւելի գեղեցիկ, չեմ գիտեր, յանկարծ ընդմիջելով եկուորին խօսքն ըսաւ իր աղջկան:

— Այս խուրճը մամայիս համար, պատասխանեց Գայիանէ:

Այդ պահուն տիկին Ոսկինար ներս մտաւ կարկանդակի պնակ մը ձեռքը, մինչ աղախին մը թէյ կը լեցնէր զաւաթներուն մէջ:

— Կծողի խմեցէք (չոր շաքարը բերնին մէջ պահելով) աւելի համով կ'ըլլայ, ըսաւ մելիքուհին:

— Մամա, այս ծաղիկները քեզի համար են, եւ նետեց մօրը գիրկը:

— Ուսկի՞ց դտար այս չքնաղ ծաղիկները, ի՞նչպէս չօրհնեմ այն սարերը, ձորերն ու դաշտերը որ դրախտի ծաղիկ կը բուսցնեն, ըսաւ աղջկան մայրը, խուրճն իր քթին տանելով:

— Մինչեւ Տիգակի կատարն ելանք, ո՞րքան գեղեցիկ է մեր Արցախը, կարծես թէ մինչեւ Ազատեւ գետը կը տեսնուէր:

— Մանչ պէտք էր ծնիլ ասիկա, ոչ թէ աղջիկ, ըսաւ Մելիք Աւանը:

— Մանչերն ի՞նչ ունին աւելի, իրենց դունչին վըրայ պելս ու մօրուք, այծերն ալ ունին, լաւ է կորովի աղջիկ մը քան թուլամորթ երիտասարդ մը:

— Աղջիկ, ի՞նչ կ'ըսես, մենք այծե՞ր ենք:

— Ո՛չ, հայրիկ, թոյլ երիտասարդներուն համար ըսի: Անցեալ օր սարը բարձրացանք քանի մը երիտա-

սարդներու հետ, հրացան առած էինք կաքաւ որսալու: Ես միայն մէկ հարուածով հետու ծառին վրայէն զարկի թռչունը. իսկ մանչերը ծառէն տերեւներ վար թափեցին:

Երիտասարդ եկուորը զարմացած նայեցաւ Գայիանէին:

— Հալիճորի բերդին արժանի հերոս մը պիտի ըլլար այս աղջիկը:

— Առաջ տար խօսքդ Հալիճորի մասին:

— Ուրեմն ըսի թէ Ռուսներու թագաւորը խոստացաւ մեր հողերը մահմետականներէն ազատել, բայց համաձայնեցաւ Օսմանցիին հետ, Կուր գետէն վեր ինքն առաւ, Կուր գետէն վար թուրքին տուաւ:

— Որո՞ւն հողը որուն կու տայ, պոռաց Գիսակ. կաթիլ մ'արիւն թափե՞ր է այս աշխարհին համար. տէր ողորմեա, տէր ողորմեա, հիմա իր ցեղին ալ իր հաւատքին ալ պիտի հայհոյէի:

— Մենք քաջալերուած կանչեցինք Գաւիթ բեկը. կը ճանչնաք այդ անվախ հերոսը. քանի մը մելիքներ միացան. մելիք Փարսաղանը դաւաճանեց:

— Առանց Յուզայի առաքեալ չկայ, պատասխանեց Գիսակ:

— Մաքրեցինք լեռնային բոլոր քոչուորները, թիւրքմէնները եւ աւազակ ցեղերը:

— Աղջիկ, դուն հոս ի՞նչ կ'ընես, դարձաւ Աւանը Գայիանէին:

— Մտիկ կ'ընեմ, հայրիկ, ասիկա դատարկ վէպ չէ, սրտի խօսող պատմութիւն է: Առաջ տար հայրենակից. մաքրեցինք լեռները:

— Այո՛, մաքրեցինք բոլոր աւելորդ ցեղերը որ

տղրուկի նման մեր ժողովուրդին փակած՝ արևն կը ծծէին :

— Լաւ ըրիք, դոչեց Գայիանէ, յուսանք թէ հաս մ'ալ հունտի համար չմնաց :

— Օսմանցիներն իրրեւ հարագատ տէրեր մեր հոգերուն, գրաւեցին դաշտային Հայաստանը. թաւանեցին ու սպանեցին անմեղ բնակչութիւնը եւ թնդանօթնեւրով, 140 դրօշակներով, շունէն շատ բազմութեամբ եկան կանդնեցան Հալիճորի դիմաց : Մենք 300 հոգի ենք, անոնք յիսուն հազար, իրենց դրօշակները կրնան ստուեր ձգել մեր փոքրիկ բերդին վրայ, բայց մեր քաջութիւնը վճռած է դիմադրել մինչեւ մահ :

— Կեցցեն, պոռաց Գայիանէ, ուժգին ծափ զարնելով :

— Այո՛, փառք մեր հերոսներուն : Բերդին մէջ կոյսեր ու կրօնաւորներ կ'աղօթեն, կոչնակները կը հնչեն եւ թշնամին վարը կատաղի ծովի պէս փրփրած ալիք ալիք կը դառնայ : Եթէ մեր բոլոր մելիքներն իրենց ուժերը միացնեն՝ զանոնք ճանճերու պէս կը քշենք :

— Ես յիսուն հազարի մարդ ունիմ, պատասխանեց Աւանը : Արցախի վրայէն թռչուն չ'անցնիր առանց իմ հրամանիս : Մարդ չունէիք, ինչո՞ւ հօր թշնամիի մը դէմն ելաք : Լաւ է եղէդի պէս ծախ փոթորիկին զիմաց քան թէ հպարտ կաղնիի պէս դէմ դնել ու ջախջախուիլ : Երե՛ք հարիւր հոգի յիսուն հազարի դէմ, երեք հարիւր խենթեր ըսէ, արկածախնդիրներ՝ որոնք հետեւանքները չեն մտածեր :

— Կեցէք, դեռ աւելին պատմեմ, ասկից քառասուն օր առաջ կատաղի յարձակում եղաւ. Դաւիթ բեկ բերդին վրայ կը ճեմէր, մտածկոտ էր. քանի մը զօրավար-

ներ սարսափած՝ կ'ուզէին խոյ տալ դադանի դռներէն : Դաւիթ կանչեց մեզ եւ ըսաւ .

— Երթանք բոլորս աղօթելու, Աստուած մեր կողմն է : Գացինք աղօթեցինք, լացինք եւ զիրար գրկեցինք, վերջին համբոյրն էր կարծես, մահը իր կարմիր աչքերով մեզի կը նայէր. ով որ խոտված էր ընկերոջ հետ՝ մանուկի պէս գրկեց զայն եւ հաշտուեցաւ :

Դուրս ելանք եկեղեցիէն, կրօնաւորներ եւ կոյսեր տակաւին մնացին եւ անոնց պաղատանքներուն ձայները դուրսը կը լսէինք : Խենթութիւն էր մեր ըրածը, պիտի ըսես, բայց հերոսական խենթութիւն :

— Ի՞նչ եղաւ յետոյ, հարցուց Գայիանէ, որ յափըշտակուած մտիկ կ'ընէր, երեսը գրեթէ երխասարդին երեսին մօտ :

— Դուրս ելանք ժամէն : Ովկեանուն այնքան փոթորկոտ չէ եղած քան այդ թրքական բանակը : Յարձակում լսեցինք կրկին. փողեր, թմբուկներ, աղմուկ, անորոշ կանչեր լեցուցին դաշտ ու ձոր : Ալլահ, Ալլահ կը դոչէր թուրք զինուորը եւ բերդին տակ սանդուղներէն կը ջանար վեր բարձրանալ. թնդանօթները կ'որոտային եւ հսկայ սումբեր կը նետէին բերդին մէջ, բարերախտարար գրեթէ չէին պայթեր : Քաջարի աղջիկներ, այս աղջկանդ պէս ալ փոքրահասակ, թաց լաթերով խկոյն կը պլլէին եւ կը դառնային անվնաս :

Անշուշտ այսպէս երկար պիտի չտեւէր կռիւը, մեր ուժերը քիչ էին եւ ոմանք նոյնիսկ անձնատուր ըլլալ կը խորհէին : Պիտի չհաւատաս, Մելիք Աւան, բայց երկինք վկայ, վաղուան արեւը չտեսնեմ եթէ սուտ եմ կամ կը չափազանցեմ : Յանկարծ Միթար սպարապետը դոչեց. Ով որ քաջ է թող հտեւէս դայ, մեռնիմ իր ասաւոր սուրին, Աստուած թող հրեղէն դարձնէ, նա

դուրս թուաւ բերդին գաղտնի դռներէն, երկու հարիւր զինուոր ետեւն ինկան, ես ալ կայի. անցանք թուրք բանակին կռնակը: Չեմ գիտեր ի՛նչ ոյժ ունէինք, ի՛նչ գաղտնի գորութիւն մեզ զինեց: Սոսկալի կոտորած մը սկսանք. քչեցինք անոնց շարքերն իրար վրայ, խառնակութիւն տիրեց թրքական բանակին մէջ. մեր ահանջներով կը լսէինք — Փախէք, փախէք, սարերէն կեաւուրներ կը հասնին: Այդ օրը 13·000 հոգի սպաննեցինք, հարիւրի չափ դրօշակ դրաւեցինք եւ ով կրնար համբել թողած աւարն ու հարստութիւնը:

— Կեցցե՛ն, կեցցե՛ն, կանչեցին Գայիանէ եւ Կատար. համբոյր մը քու ճակտիդ, ըսաւ մեկիւրքին աղջիկը եւ համբուրեց եկուորը:

— Բայց ես կը զարմանամ, շարունակեց եկուորը, Գաւիթ բեկի զինուորական հանճարին եւ Մխիթար ըսպարապետի սուրին վրայ: Դուք տեսեր էք թէ ինչպէս գերանդին ցորեն կը հնձէ, ոչինչ էր անոր սուրին համեմատ, մէկ չէ, երկու չէ, երեք, չորս գլուխ կամ թեւ կը նետուէին հեռուն եւ այդ դիւահար մարդը թշնամի անտառին մէջ առաջ կ'երթար, ետ չէր դառնար: Այժմ Հալիձորը խաղաղ է, բայց պատերազմը դեռ չէ վերջացած, թշնամին անշուշտ նոր ուժերով յարձակումի պիտի գայ եւ հայրենիքը իր գաւակները կը կանչէ մեր կրօնքն ու ցեղը պաշտպանելու համար:

— Կը մոլորիս, բարեկամ, մեզի հէքեաթ կը պատմես թէ մանուկներ գտեր ես երեւակայութիւննիս վառելու համար. ի՞նչպէս կարելի է երկու հարիւր հոգիով տասներեք հազար մարդ ջարդել: Քանի՞ օր դրիք. ոչխարնե՞ր էին թէ հաւեր, պատասխանեց Աւան մեւրիքը:

— Մի՛ զարմանար, բարեկամ Մեյիք, հէքեաթ չեմ

պատմեր, այս սուրը գիտէ թէ քանի փաթթոցաւորներ միւս աշխարհ զրկեց: Երբ գայլն ոչխարներու հօտին մէջ մտնէ՝ քանի մը ժամէն հարիւրներ կը խեղդէ, դուն ասիկա լաւ գիտես, պատասխանեց եկուորը:

Գիսակ բոլորովին յափշտակուած էր, բայց Աւանը պաղ սիրտ ունէր: Գայիանէ եւ Կատար կուրծք չունէին որ դիմանար իրենց յուզուած ուրախութեան:

— Փա՛ռք մեր հերոսներուն, փա՛ռք մեր հերոսներուն, գոչեցին երկու աղջնակները եւ Գայիանէ վազեց իր մօրը, խլեց սարի ծաղիկները ու բերաւ նետեց եկուորին գիրկը. թող իմ նուէրս ըլլան ձեր հերոս ճակատին, ըսաւ ինքնիրմէն դուրս ելած:

— Ես այն կարծիքէն եմ, ըսաւ Գիսակ, որ կրնանք դէթ տասը հազար զինեալ զրկել. լաւ առիթն է մեր երկիրը մաքրելու այդ գիշատիչներէն: Երկու առիւծի պէս մանչերս Գուրգէն ու Միսակ, սիրով կը զրկեմ: Այդ կրակն այսօր Ղափանի կողմն է, վաղը կրնայ հըրդեհել ամբողջ Սիւնիքը եւ մեզի հասնիլ: Ձղջալու համար շատ ուշ պիտի ըլլայ:

— Ես ծովերէն ջուր կը բերեմ կրակը մարելու համար: Չեմ կրնար Վարանդան, ամբողջ Արցախը դատարկել ուրիշի տան կրակը մարելու համար. նախ մեր տունն ու ընտանիքը, յետոյ օտարին տունը:

— Կը սխալիս, հայրիկ, պոռթկումով ընդմիջեց Գայիանէ, շարաշար կը սխալիս, երբ դրացիիդ տունը կրակ ինկեր է, քու տունդ ալ կ'այրի: Ես փոքրիկ եմ, թերեւս ինծի խօսք չ'իյնար, բայց կը սխալիս, մեր տունը Արաքսէն Կուր դետն է, Եփրատէն Կասպից ծովը: Վարդան Մամիկոնեան Տարօնի համար չ'կուուեցաւ, այլ ամբողջ Հայաստանի սիրոյն արիւն թափեց:

— Քու զիտնալու բանդ չէ, սաստեց հայրը, դուն

խոհանոց դնա՛ եւ մօրդ օգնէ, խելքդ այս բաներուն չի հասնիր:

— Ես խոհանոցի աղջիկ չեմ, մայրս՝ մայր է, թող աշխատի եւ հսկէ սպասուհիներուն վրայ:

— Այս աղջիկն աւելի խելացի է քան թէ հայրը, փսփսաց եկուորն առանձին:

— Բերդը դեռ կը դիմանա՞յ, հարցուց Գայիանէ:

— Ասիւծի պէս բաշերը ցցած, անվախ հեռուները կը դիտէ:

— Իսկ մեր բերդը, Աստուած չընէ, եթէ թշնամին հասնի, կարծեմ թէ թղթէ աշտարակի պէս պիտի այրի:

— Հեռացիր Գայիանէ, սաստեց դարձեալ հայրը, այս բերդը պապերուս պապերուն ժամանակներէն թըշնամի չէ տեսած. թղթէ չէ շինուած այլ Արցախի կրանիթ քարերով կոփուած է: Ժամանակին Պարսիկներուն մեծ Ծահ Արաս թագաւորն երբ տեսած է, դուրսը ցընցելով գոչած է. Եթէ կարենայի՛ կը շալկէի Սպահան կը տանէի:

— Է՛, հայրիկ, Պատասխանեց Գայիանէ, կ'ըսեն թէ ժամանակին Հայաստան հազարաւոր ամրոց ու բերդ ունէր, հիմա դրեթէ բոլորն ալ աւերակ են: Փառաւոր Անին ալ ինկաւ իր երկինք հասնող պարիսպներով, կըրնայ Աւետարանոց գիւղին բերդն ալ իյնալ:

— Հիմա այս աղջիկը մեզի պատմութեան դասատու դարձաւ, ըսաւ Աւան, քեզի ո՞վ սորվեցուց այս բաները:

— Մեր գիւղի Սիմոն տէրհայրը շատ բաներ պատմեց, եւ ըսաւ թէ այն ազգը որ մէկ սիրտ մէկ հոգի չէ, շուտով կը կործանի:

— Գնա՛, Տէր հօր ըսէ որ թող ժամին մէջ Աւետա-

բանը շիտակ կարդայ, ոչ թէ Հայոց պատմութեան մասին հէքեաթներ պատմէ:

— Գայիանէ, ըսաւ Կատար, կարծես թէ հիմա դուն ալ դինուոր պիտի երթաս. նայէ հայրիկդ ինչ կ'ըսէ. եթէ մեր քաջերն երթան, մեզ ո՞վ պիտի պաշտպանէ:

— Ես քեզ կը պաշտպանեմ, իմ եղնիկ Կատարս, պատասխանեց Գայիանէ:

— Լապտերները վառեցէք, հրամայեց Աւան իր ըսպասուհիներուն: Պէտք չկայ ըսելու, դարձաւ եկուորին, թէ դու մեր հիւրն ես, ուղածիդ չափ կեցիր, այնքան օր քեզ սիրով կ'ընդունինք, որքան դիտուս վրայ մազեր կան:

— Մեղիք Աւան, ոչ պառկիլը եւ ոչ կերակուրը զիս կը մտահոգեն, այլ հայրենիքը. ժամանակները սոսկալի են, յղի են ծանր հարցերով, կամ թրքական ծովին մէջ կը խեղդուինք, կամ կը փրկենք մեր ժողովուրդը. մահ կամ կեանք:

— Իմ կեանքս սպահով է, բարեկամ, իմ ժողովուրդս գիտէ իր աշխարհը պաշտպանել: Կը տեսնե՞ս այդ Տիգրակ լեռը, դեռ հոն թշնամի մը ոտք չէ դրած:

Գիտակ համաձայն չէր Մեղիքին հետ, բայց ի՞նչ կրնար ընել, նա էր աշխարհին տէրը, Արցախի իշխանը, կիսանկախ թագաւորը: Մեղիք Աւան յամառ էր իր կարծիքներուն վրայ: Արցախէն դուրս ուրիշ հայրենիք չկար իրեն համար: Թէպէտ պարսկական շուքը կար այդ կողմերն ալ, սակայն դրամով, կաշառքով, երբեմն ըսպառնալիքներով յաջողեր էր իր բոյնը պաշտպանել: Ինչո՞ւ հիմա արկածներու մէջ իյնալ, եթէ Օսմանցին յաջողէր, որ անկարելի էր, իր թաթն այդ կողմերն ալ երկարել, կրնար բռն մը ոսկիով կաշառել Ստամպուլի սուլթանն ալ:

Ընթրիքը նոյն դահլիճին մէջ ըրին. եկուորը յոգնած էր երկար ճամբորդութենէն, ուղեց շտաով հանգչիլ, առաւօտ կանուխ պէտք էր ուրիշ Մեղիքներու գիմել:

— Գայիանէ, ըսաւ մելիք Աւանը, կանչէ սպասուհի մը որ հիւրն իր սենեակն առաջնորդէ:

— Ես կը տանիմ, հայրիկ, պատասխանեց աղջիկը: Կատար, միասին տանինք:

Գայիանէ շատ համակրած էր այդ սիրուն երիտասարդին, նա ազնուական բան մ'ունէր իր վրան, սովորական զինուոր մը կամ առետրական մը չէր: Բռնեց եկուորին ձեռքէն եւ դուրս ելան:

— Հայրենակից, ըսաւ Գայիանէ, ես քեզ շատ սիրեցի, դուն ճշմարիտ հայ ես, անկեղծ զինուոր հայրենիքին: Անշուշտ աղուոր անուն մ'ալ ունիս:

— Անունը բան մը կ'ըսէ՞, Գայիանէ:

— Աղուոր մարդիկ աղուոր անուն ալ կ'ունենան, ո՞վ պեխաւոր կ'նոջ մը Նագենիկ կ'ըսէ, կամ վախկոտ երիտասարդ մը Վարդան կը կոչէ:

— Ես Ստեփան Ծահումեան կը կոչուիմ, Պոռեանց հին եւ անուանի տոհմէն եմ:

— Պոռեանց...

Գայիանէ վաղեց իր հօրը.

— Հայրիկ, դիտե՞ս ով է այդ եկուորը. Պոռեանց ազնուական տոհմէն է:

— Աղէկ, աղջիկս, ինչ ընեմ. մենք ալ Արցախի իշխանական տոհմէն ենք:

— Բայց շատ հաւանեցայ, հայրիկ, աղուոր երիտասարդ է, ինչ ալ անոյշ կը խօսէր, ի՞նչ սիրտ ունի. գիտե՞ս, լաւ գրել կարդալ ալ գիտէ, ուսումնական մարդ է: Ինձ ըսաւ՝ եթէ Հայոց պատմութիւնը կ'ուզես գիտ-

նալ, Մովսէս Խորենացին կարդա՛: Ո՞ւր կրնաս այդ գիրքը գտնել:

— Տէր հօր հարցուր, Հայոց պատմութեամբ կը զբաղի, քեզի կը գտնէ այդ ըսած գիրքը: Ես գրքերու հետ գլուխ չունիմ:

Գիտակ բռնեց իր աղջկան ձեռքէն եւ գլուխը ցնցելով տուն դնաց.

— Ի՞նչպէս համոզենք այդ քարի պէս մարդը, ըսաւ ինքնիրեն, դանակն իր ոսկրին չէ հասած եւ կը կարծէ թէ Արցախը միշտ ազատ պիտի մնայ: Աղուհսի վարպետութիւնը չէ կաշառքը, ոսկին չէ որ ազգեր կը փրկեն, այլ սուրն է անոր պահապանը:

Գայիանէ այդ գիշեր գրեթէ չքնացաւ, իր աչքին առջեւ էր Հալիճորի բերդը: Ի՞նչ տեսակ բերդ էր, արդեօք պողպատէ պարիսպնե՞ր ունէր, լեռնե՞ր կը բռնէր, թէ երկինքէն իջած էր: Յետոյ աչքերուն առջեւ կու գային Դաւիթ բեկը, Մխիթար սպարապետը. մէկ մէկ հսկաներ, որոնց բազուկները Տիգակ լերան կաղնիներուն պէս էին: Ապա աղուամազ մօրուքով Ստեփանը կը տեսնէր, քիչ մը անդին պառկած, ազնիւ ու նուրբ երեսով: Անոր անոյշ խօսքերը դուլալ աղբուրի խոխոջի կը նմանէին: Փորձութիւն զգաց սենեակն երթալ, արթնցնել եւ կրկին պատմել տալ Հալիճորի պատերազմը, բայց նա յոգնած էր ճամբորդութենէն, պէտք ունէր հանգչելու եւ մանուկի պէս կը քնանար:

Մելիքուհի Ոսկինար, յաճախ սովորութիւն ունէր երթալ դիտելու իր միամօր աղջնակին քունը, քովը նստիլ, լսել անոր մուշ մուշ հեւքը. տեսնել իր կուրծքը որ այնպիսի պէս կ'ելլէր ու կ'իջէր եւ սիրտը մանուկի պէս կը խաղար: Ամառ էր, Գայիանէի սենեակին պատուհանը բաց էր. դուրսը երկինքն աստղալից էր, Տի-

զակ լեռնէն զով քամին կու գար եւ խոր հանդարտութիւնը մետաքսէ թեւերով բռնած էր երկինք եւ երկիր:

Հապտերը ձեռքը ներս մտաւ, յանկարծ երկու փոքրիկ աստղեր, սեւ յօնքերու տակէն պլպլացին:

— Գայիանէ, դեռ չե՞ս քնացած, ինչո՞ւ արթուն ես:

— Մայրիկ, Հալիճոր ի՞նչ տեսակ բերդ է: Դուն տեսե՞ր ես:

— Միտքդ ի՞նչ ինկաւ հողիս, եւ ոչ անունը լսեր եմ:

— Եթէ գիտնայիր մայրիկ, ի՞նչ բերդ է. ի՞նչ հերոսներու բոյն: Պատմեց, պատմեց այդ եկուորը, ոչ թէ գիշերը պիտի չքնանայիր, այլ լսելով պիտի ուզէիր թոչիլ եւ հոն երթալ, կամ ոսկի երազներուն մէջ մեռնիլ: Բայց հայրս ոչինչ հասկեցաւ, քարի պէս մնաց եւ Հալիճորի բերդին մէջ հերոսներ կը կուռէին:

Մայրը նստաւ Գայիանէի սնարին մօտ, շոյեց անոր սեւ սաթէ մազերը, սատափէ ճակատը:

— Քուն եղիր բալաս, ըսաւ անձկութեամբ, ամէն բան Աստուծոյ կամքէն կախում ունի. հայրդ ինձմէ, քեզմէ աւելի խելացի է, նա հեռաւոր ապագան կը տեսնէ, մենք շատ անգամ զգացումով կը մտածենք: Հիմա այնպէս ժամանակներ են որ ամէն ոք իր տունն ու տեղը կը մտածէ:

— Ո՞րն է մեր տունն ու տեղը, այս խեղճ ու կրակ Աւետարանոց զիւզն իր անգրոտ փողոցներով, իր հին ու խարխուլ բերդով, որուն վրայ դարերով նոր քար մը չեն դրած. թէ անդին Ս. Էջմիածինը, կամ հրաշալի տաճարները օտարին ձեռքն ինկած:

— Քեզի ո՞վ սորվեցուց այս բաները, մենք միտք ունինք քեզ օր մը թագուհի ընել, ոչ թէ զինուորական:

— Նախ զինուոր ապա թագուհի: Մե՛ղք որ դեռ փոքր եմ, գէնք չեմ կրնար բռնել: Բայց ես այդ Պոս-

չեանց իշխանէն պիտի խնդրեմ որ ինձի հրացան մը տայ եւ գէնք բռնել սորվեցնէ: Ճշմարիտ հայը այդ եկուորն էր, ազնուական եւ քաջ զինուորական:

— Ինչ սիրահարուեցա՞ր:

— Ի՞նչ կ'ըսես, մայրիկ, իմ հայրիկս կրնայ ըլլալ: Սիրահարուեցայ իր ազնուական քաջութեան:

— Քնացիր բալաս, վազն առաւօտ իրեն հետ երկար կը խօսինք. ես ալ կ'ուզեմ լսել Հալիճորի մասին:

Գայիանէ դռն եղաւ, անոյշ ժպիտ մը սահեցաւ վարդազոյն այտերուն վրայէն. կոպերն իրար եկան եւ մայրը ալանջն ի վար փսփոսաց մեղմ ձայնով...

— Քնացիր բալաս, աչքերդ խուփ արա.

Թող սրբտիդ ձայնն Աստուած իմանայ.

Աստղերն ըլլան քեզ պահապան հրեշտակ

Քրնացիր բալաս Տիրամօր քեւին տակ:

Ոտքերու ծայրով հեռացաւ աղջկան սենեակէն: Երկինքն էր խաղաղ, աստղերը բոցավառ. Աստուած կը հսկէր մեր հողին վրայ:

Առաւօտեան կանուխ արթնցած էր Ստեփան Շահումեան, բայց Գայիանէ դեռ կը քնանար: Եկուորն ուղեց շուտ մեկնիլ, Արցախէն յոյսեր չունէր. բայց ի՞նչ պէս մեկնիլ առանց այդ սրտազրաւ աղջկան մնաս բարով ըսելու: Սպասեց. Ոսկինար համով նախաճաշ մը պատրաստեց. ինքն ալ հետաքրքիր աչքերով նայեցաւ երիտասարդին. իրաւունք տուաւ Գայիանէին. նա ուրիշ մարդ էր: Ա՛խ, թէ քիչ մ'իրեն ալ խօսէր Հալիճորի մասին:

— Կ'ուզէք շուտով մեկնիլ, հարցուց փափաքելի տարակուսանքով. կարող չէ՞ք մնալ մեր քով քիչ մը

Ժամանակ ալ: Գայիանէ գիշերը չքնացաւ. Ստեփան եւ
Հալիճոր կը կրկնէր: Ի՞նչ ըրիր որ հմայեցիր աղջիկս:

— Ոչինչ. տեսածս պատմեցի, ցանեցի ոսկի ցորեն
եւ այդ փոքրիկ սիրտը միայն պարարտ արտի պէս հաս-
կեր տուաւ:

Գայիանէ շատ ուշ արթնցաւ. անապարանքով հագ-
ուեցաւ եւ վազեց Ծահումեանի քով:

— Լաւ որ եկար Գայիանէ, ըսաւ եկուորը. ես հիմա
պիտի մեկնիմ, չէի ուզեր առանց քեզ տեսնելու ճամ-
բայ իյնալ: Մնաս բարով, դուն հազար մելիք եւ զին-
ուորական կ'արժես:

— Ո՛չ, դուն պիտի չմեկնիս, ես դեռ շատ բաներ
կ'ուզեմ հարցնել. թերեւս օգտակար ըլլամ հայրենի
սուրբ գործին. փոքրիկ եմ, աղջիկ եմ, բայց այդ բեր-
դին արծուենչան դրօշակը ես հիւսեր եմ եւ արծիւը ոյժ
ու սրտի թռիչք կը նշանակէ: Այսօր դուն, Կատար եւ
ես բարձրանանք մեր Տիգրակ լեռան գագաթը. տես Ար-
ցախի անասման աշխարհը. եթէ Աստուած չընէ, Հա-
լիճորն իյնայ, Տիգրակ լեռը պիտի ըլլայ մեր բերդն ու
պաշտպանը: Երթանք գէպի Տիգրակ:

Ստեփան Ծահումեան չկրցաւ մերժել աղջկան փա-
փաքը, խորհեցաւ թէ երկիր մը լաւ ճանչնալ՝ կէս պա-
տերազմ շահիլ է, ով զիտէ, կրնայ ըլլալ որ այդ կող-
մերն ստիպուին անցնիլ:

— Գայիանէ, երթանք Տիգրակ, քեզի պիտի պատ-
մեմ քաջ Հայկ նահապետէն մինչեւ հերոս Դաւիթ բեկի
զիւցազնութիւնները: Հերոսներ ունինք՝ չենք ճանչնար,
սիրուն աշխարհ մ'ունինք չենք սիրեր: Երթանք տես-
նենք հայրենի հողերը եւ մօր նման սիրենք:

Երկու աղջիկները բռնեցին Ծահումեանի ձեռքերէն

եւ եղնիկի պէս ոստոստելով ճամբայ ելան, կարծես թէ
կ'ուզէին թռչիլ գէպի սարերը:

— Կեցէք վայրկեան մը, ըսաւ Գայիանէ, կարեւոր
բան մը մոռցայ: Հոս նստեցէք ես շուտով կը վերադառ-
նամ:

— Աղջիկ ի՞նչ կայ, հարցուց Կատար:

— Ոչինչ, հինգ վայրկեանէն ձեր քովն եմ:

Քիչ մը վար վազեց եւ հեռուէն պոռաց.

— Ծողի՛կ, Ծողի՛կ, աղջի Ծողի՛կ:

— Ի՞նչ կայ Գայիանէ, շատ խորէն պատասխան
մ'եկաւ:

— Մենք Տիգրակ լեռան ստորոտը, պաղ աղբիւրին
մօտ պիտի կենանք եւ ճաշենք. մեզի լաւ ուտելիք բեր:

— Գայիանէ մինակ ի՞նչպէս դամ, ես կը վախեմ
անտառներէն: Յանկարծ արջ մը դուրս ելլէ:

— Խենթ մի՛ ըլլար, ո՛չ արջ կայ, ոչ ալ քեզ փախ-
ցընող, լեռները լեցուն են սարւորներով:

— Թող Սուսամն ալ հետս դայ, ըսաւ Ծողիկ:

— Լաւ, Սուսամին ալ ըսէ միասին եկէք. շուտ
ճամբայ ելէք:

Գայիանէ արագ վեր վազեց, կարծես թէ վայրկեան
մը Ստեփանէն բաժնուելով սիրտը պարագ պիտի մնար:

— Տես, ինչ կորովի քայլերով վեր կը բարձրանայ,
ըսաւ Ծահումեան ինքնիրեն, մտրուկի քայլեր ունի:

— Հոս եմ, ըսաւ Գայիանէ խնդում երես, զիտէ՞ք
ինչ մոռցեր էի:

— Հետո դաշոյն մ'առնել, պատասխանեց Կատար:

— Երբ Ստեփանը կայ՝ դաշոյնը հարկաւոր չէ. ու-
տելիք մոռցեր էի:

Երբ բարձրացան տափարակ սարի մը կատարը, բաց
դաշտ էր. կանաչը կարծես հաստ գորգ մ'ըլլար. խումբ

խումբ ոչխարներ կ'արածէին, հեռուն ծուխ մը կը բարձրանար, անշուշտ հովիւներն էին. բայց իրենք կանգ առին սարի արտեւանին վրայ. վարը, հեռուն, հորիզոնին հետ միացած ընդարձակ աշխարհ մը սարգուեցաւ. ասա Աւետարանոց գիւղը, Աւանի բերդը, ժայռերուն մէջ կորսուած էին, փոքրացած քարի կոյտ մը:

— Ահա՛ հայրիկիդ նշանաւոր բերդը, որուն վրայ Շահ Աբաս հիացած է եղեր, ըսաւ Շահումեան, կրնա՞ս ժայռերէն դանազանել:

Գայիանէ կարծես ամչցաւ տեսնելով իրենց թղուկ բերդը:

— Ոչինչ, աղջիկս, ըսաւ Ստեփան, բերդը չէ որ աղբ մը կը պաշտպանէ, այլ իր զաւակներուն սիրտը: Յետոյ նա մտածկոտ կեցաւ, կարծես թէ աչքերը պիտի դամուէին կանաչին մէջ: Գետին նայեցաւ, սրտէն դող մ'անցաւ, յետոյ դիտեց անհուն հեռաւորութիւնը եւ դառնալով երկու օրիորդներուն հարցոյ:

— Ձեր ոտքերուն տակ սարսուռ մը չէ՞ք զգար. չէ՞ք լսեր պատերազմի աղաղակներ. ես կը լսեմ, Աշոտ Երկաթին ձա՛յնն է, Աշոտ Երկաթին ձա՛յնն է: Ելի՛ր հայրենի հերոս. ելի՛ր կանաչ գերեզմանէդ, հայրենիքը քեզի պէտք ունի:

— Ի՞նչ եղար Ստեփան, հարցոյց Գայիանէ յուզուած, անհանգի՞ստ ես, ողբ՞ մը խօսեցաւ քեզի հետ:

— Ոչինչ, Գայիանէ, ոչինչ, ասկից հարիւրաւոր տարիներ առաջ, հոն այդ հեռաւոր դաշտին մէջ, Աշոտ Երկաթը, մեռնիմ իր անունին, թող ժայռերն իր փառքին կոթող ըլլան, սուրի մէկ հարուածով դաւաճան հայ իշխանի մը գլուխը կտրեց: Երեք հարիւր հոգիով հազարներ քչեց եւ բարձրացոյց իր յաղթական երկաթէ

խաչը. հիմա այդ խաչը էջմիածին կը դանուի: Եւ հայրիկդ ըսաւ թէ Հալիճորի մէջ երեքհարիւր արկածախնդիր խենթեր կան:

Թէպէտ Գայիանէի սիրտը կսկծեցաւ իր հօրը մասին, բայց ոչինչ ըսաւ. կախեց գլուխը եւ չուզեց նայել դէպի Աւետարանոց գիւղը ուր թղուկ բերդ մը կարծես քարէ թագ մ'էր աղքատ գիւղի մը գլխուն վրայ:

— Աւելի վեր բարձրանանք, ըսաւ Գայիանէ: Կարծեմ թէ մեր աշխարհին մէջ ամէն մէկ ժայռի տակ հերոս մը կը պառկի, ամէն ափ մը հող սրբազան նշխար է:

— Այո՛, այդպէս է, պատասխանեց Ստեփան: Հիներն ինչ որ պէտք էր ըրին, մենք հիմա շարունակելու ենք իրենց գործը: Երանի այն ծնողքին՝ որ հարստութեան տեղ, արժանաւոր զաւակ մը կը թողնէ իբր ժառանգ:

Այդ պահուն հովիւներուն շուներն սկսան հաջել, խռպոտ եւ մատաղ ձայներ իրար խառնուած առաջ կու գային: Պատանի հովիւ մը վազեց եկուորներուն կողմը եւ կեցոյց յարձակող անասունները:

— Գայիանէն է, ըսաւ, յարգալից կանգ առնելով:

Աղջիկները ծանօթ էին հովիւներուն, մեկիքին ոչխարներն էին որ սարերը բռնած էին: Մօտեցան հովիւներուն, արժարժուն կրակը կը վառէր եւ վրան հողէ պտուկը կ'եռար թանձր ապուր մը մէջը:

— Ձեմ համարձակիր ձեզ ճաշի հրաւիրել, ըսաւ ծերունի հովիւ մը, աղքատի ճաշ է: Կը փափաքէի՞ք արդեօք նոր կ'թուած եղի կաթ խմել:

— Ստեփան, կը փափաքի՞ս, հարցոյց Գայիանէ:

— Ոչ, չնորհակալ եմ:

— Դուն կատար՞ր:

— Ձէ, չէ, ես արդէն կաթ չեմ սիրեր:

— Այս կողմերն ալ թաթար քոչուորներ կա՞ն, հարցուց Շահումեան ծեր հովիւին:

— Կան, Տիղակէն անդին են:

— Ձեզ կը նեղե՞ն, կենդանի կը գողնա՞ն, դարձեալ հարցուց Ստեփան:

— Ստէպ կռիւի կը բռնուինք, բոլորն ալ գողեր են: Անցեալ տարի մեր հովիւներէն մէկը սպաննեցին: Ինչ ընենք, բաղմաթիւ զինուած բեկեր ունին, մեր մելիքը ողջ ըլլալ, ապա թէ ոչ բոլորս կը սատկեցնէին:

— Դաւիթ բեկը պէտք է, Դաւիթ բեկը, ըսաւ Շահումեան: Լսե՞ր ես Դաւիթ բեկին անունը:

— Ոչ, տէր իմ, պատասխանեց ծերունին: Մենք այս լեռներէն անդին աշխարհ չենք ճանչնար. Տիղակը մեր երկիրնքն է, Աւետարանոցը մեր բոյնը: Հաւերու պէս արշալոյսին կ'արթնանք եւ արեւմուտքին կը քնանանք:

— Սուր, հրացան չունի՞ք ձեզ պաշտպանելու համար, հարցուց Ստեփան:

— Ես ունիմ հրացան մը, պատասխանեց երիտասարդ հովիւ մը:

Շահումեան ձեռքն առաւ զէնքը, փողը հոտուրտաց, ափերուն մէջ դարձուց եւ հովիւին տալով, ըսաւ.

— Կարծես թէ տարիներով չէ կրակած, վառողի հոտն իսկ չկայ, հին տեսակ է: Տասը վայրկեան մէյ մը հազիւ կարելի է լեցնել եւ կրակել: Այս զէնքերո՞վ հայրիկ Արցախը պիտի պաշտպանէ, հարցուց Գայիանէին: Կը մազթեմ որ թշնամի չանցնի այս կողմերէն, ձեզ հաւի պէս կը մորթեն:

Դարձեալ առաւ հրացանը.

— Վառող եւ զնդակ ունի՞ս, հարցուց երիտասարդ հովիւին:

Հովիւը հիւղակէն բերաւ կաշիէ քսակ մը, բաւա-

կան վառող կար մէջը, զնդակ մ'ալ տուաւ: Ստեփան վարժ ձեռքերով դրաւ զնդակը, վառողն ետեւէն թխեց երկաթէ ձողիկով եւ արեթը դրաւ ու կրակեց: Փողէն բոց ելաւ, պայթիւնը լեռներ անցաւ եւ թանձր ծուխ մը իրենց վրան տարածուեցաւ:

— Ի՞նչ ըրիր, ըսաւ ծեր հովիւը, գրեթէ սարսափած, հիմա թաթար քոչուորներ կը լսեն եւ մեր վրան կու գան:

— Թող գան, պատասխանեց Գայիանէ. դու չես դիտեր, ով կայ մեր քովը. չան պէս բիրերով զիրենք կը վռնտենք:

— Մէկ հատ չէ, աղջիկս, ըսաւ ծերունին, հարիւրներ են, չունէն շատ են: Կրակին հետ պէտք չէ խաղալ:

— Առ հրացանդ եւ մեզի հետ եկուր, ըսաւ Ստեփան երիտասարդ հովիւին: Տիղակ լեռը շատ հեռո՞ւ է հարցուց Գայիանէին:

— Ոչ, այդ ցած դադաթն ալ անցնինք, արդէն պող աղբիւրը կը հասնինք: Կատար, յոգնեցա՞ր, հարցուց աղջկան:

— Կրնամ մինչեւ երեկոյ քալել:

— Վեր բարձրանանք, ըսաւ Ստեփան: Կը տեսնես, Գայիանէ, այս խեղճ հովիւները սարսափի տակ կ'ալրին. պէտք է զիրենք պաշտպանել, մեր արօտավայրերն այդ այլադաւաններուն ձեռքն անցած են, անպատիժ կը յափշտակեն, իրենց հօտերը կը մղեն խեղճ գիւղացիներուն արտերն ու արօտները: Ժամանակին ոչ թէ ձեռք Տիղակը, այլ մինչեւ Կասպից ծովը մերն էր, եւ երբ մեր անձնասէր իշխանները ձեռք ձեռքի չտուին եւ ամէն մարդ իր բոյնը քաշուեցաւ, եկաւ թշնամին եւ մէկիկ մէկիկ դրակեց սար ու ձոր:

Ստեփան պատմեց ճամբուն վրայ մեր հին պատմու-

թեան հերոսական օրերը: Երկու աղջիկներն յափշտակուած մտիկ կ'ընէին. անոնք ոչինչ զիտէին մեր անցեալէն, միայն իրենց զիւզին արեւը տեսած էին, եւ Տիգակէն անդին աշխարհ չէին ճանչնար: Ստեփան յաճախ կանգ կ'առնէր եւ ջրազրդիւ կը պոռար:

— Սէր, միութիւն պէտք է, դրացի դրացիի օղնական, մարդ մարդու պաշտպան եւ հայ հայու եղբայր: Հալիճորը մեզի շատ բան պիտի սորվեցնէ, վայ այն ժողովուրդին որ աչքերն այն կողմը չի դարձներ եւ չի հասկնար անոր պատմական դերը:

Յանկարծ բլրան դադաթէն Տիգակն իրենց առջեւ ցցուեցաւ վեհապանձ զեղեցկութեամբ: Սուր դադաթներն երկիրը ցցուած էին եւ անոնց մէջէն խոր ձորերը կապոյտ շղարշ մը ձղած էին մուլթ կանաչին վրայ: Լեւրան բարձր կողերուն սպիտակ ամպեր կը շարժէին. թաթար հօտեր էին:

— Որո՞ւն են այդ հօտերը, հարցուց Շահումեան երիտասարդ հովիւին:

— Թաթարներուն են, տէր իմ: Դարձեալ մեր կողմն եկեր են. լիրբ են, անզգամ են. ոչ մէկ պայման կը յարգեն, մեր Մելիք իշխանը բեկերուն հետ սահման դժած է, բայց անոնք օր մը մեր տուններն ալ պիտի իջնեն:

— Կ'իջնեն տղաս, կ'իջնեն, պատասխանեց Ստեփան, քանի մեզի պէս պաշտպաններ ունի այս երկիրը: Երեք հատ հսկայ ծառեր զիրար զրկած կանաչներ էին բացաստանի մը մէջ:

— Ահաւասիկ, պաղ աղբիւրն այդ ծառերուն տակն է, ըսաւ Կատար:

Հայելիէն աւելի վճիտ աղբերակ մը, փոքրիկ խոխոջներով, դուրս կու գար կանաչէն եւ կը հօսէր դէպի

վար. այնքան պայծառ էր որ եօթներորդ երկինքն ալ իր մէջը կը ցոլանար: Կատար խսկոյն ջրին վրայ ինկաւ:

— Մի՛ խմեր, ըսաւ Ստեփան, քրտնած ես, վնաս կ'ընէ. պաղ ջուրով քիչ մը երեսդ չփէ, քիչ վերջը կը խմես:

Ինքը ձեռքը մէջը դրաւ եւ մանրկրորդ մը յետոյ դուրս քաշեց:

— Ասիկա սառած ջուր է, ըսաւ. ի՞նչ պաղ է. ուշադիր ըլլալու է խմելու համար:

Նստեցան կանաչին վրայ: Իրենց զիմաց նոր հովիտներ բացուած էին, նոր ձորեր կ'երկարէին Տիգակի լանջերուն վրայ եւ հօտերու ճերմակ կոյտերը դեռ աւելի վար կ'իջնէին:

— Տուր սա հրացանը, ըսաւ Շահումեան հովիւին: Վառող ունի՞ս:

— Այո՛, պատասխանեց հովիւը եւ գօտիէն քակեց կաշիէ քսակը:

— Տուր ես լեցնեմ, ըսաւ Գայիանէ. բայց մի՛ պարպեր. թող պատրաստ ըլլայ:

— Առանց գնդակի աղուոր ձայն մը տանք:

— Լաւ, այն ատեն ես պիտի կրակեմ, պատասխանեց Գայիանէ:

Լեցուց հրացանը եւ իր կորովի բազուկներով բռնեց ու կրակեց դէպի Տիգակի կողմը: Քառորդ ժամ չանցած՝ լեռներէն հրացանի պատասխան եկաւ:

— Աստուած իմ, չգտն այդ անշնորհները, ըսաւ Կատար քիչ մը վախցած:

— Քեզ կը պաշտպանեմ, անուշիկ եղնիկս, ըսաւ Գայիանէ խնդալով:

Վարի բլրան դադաթէն տեսնուեցան Շողիկ եւ Սուսամ, որոնք իրենց զլխուն վրայ կապոցներ բռնած դէ-

պի պաղ աղբիւրը կը բարձրանային: Կէսօրը մօտ էր. արեւը Տիզակէն շատ հեռացած՝ դէպի Արարատեան դաշտը կ'երկարէր:

— Մեզի ի՞նչ ուտելիք բերիք, հարցուց Գայիանէ, հազիւ սպասուհիները վար դրին իրենց կապոցները:

— Ամէն բան ես եփեցի, ըսաւ Շողիկ. հաւը, կարկանդակը, ձուածեղը, խաւիժը:

— Սուտ ես, դու միայն եղինձ (փիլաւ) եփեցիր, վրայ բերաւ Սուսամ:

— Հոգ չէ, երկուքիդ մատներն ալ անոյշ են, ըսաւ Ստեփան:

Ճաշը հազիւ վերջացուցած էին, երբ թաթար ոչխարներն արածելով մօտեցան աղբիւրին, չունեցու հաջիւնը եւ հովիւներուն խօսակցութիւնը որոշ կը լսուէին:

— Հօտերը ջրելու կու դան, ըսաւ հայ հովիւը, նեղելու չէ, բանը դէշ կ'երթայ:

— Լեռներուն վրայ ուրիշ աղբիւրներ չկա՞ն, հարցուց Շահումեան քիչ մը նեղացած:

— Կան, շատ կան, բայց ասոնք այսպէս են, ուրիշին ունեցածին միշտ աչք կը տնկեն:

— Տուր սա հրացանդ, հրամայեց Ստեփան:

— Հոգիդ սիրես, մի՛ պարպեր, աղաչեց հայ հովիւը: Ասոնց աչքերը արիւնոտ են:

Բայց Ստեփան մտիկ չըրաւ, քաշեց բլթակը եւ հրացանը պայթեցաւ:

Յանկարծ չորս հուժկու հովիւներ տեսնուեցան: Երկուքը հրացան ունէին, միւսները ոստոտ հաստ բերեր: Կանգ առին աղբիւրին վերեւ:

— Առաջ եկէք, պողաց Ստեփան, առաջ եկէք:

Թաթարները խրոխտ մօտեցան:

— Ո՞ւր է ձեր սահմանը. ինչո՞ւ Տիզակէն ասդին

անցեր էք: Այս երկիրն անտէր անպաշտպա՞ն կը կարծէք:

Թաթարներն առաջին անգամ կը հանդիպէին այդ ամայի լեռներուն վրայ երիտասարդի մը՝ որ Մելիք Աւանի պէս չէր խօսեր, ոչ թէ աղաչական շեշտ ունէր, այլ սպառնալիք: Ի՞նչ դիտնային թէ այդ ազնուականին հողին վառած էր, թէ Հալիճորէն կու դար. ամէն այլադաւան անոր աչքին թշնամի էր:

— Ո՞վ է այդ մարդը, հարցուցին հայ հովիւին:

— Ձեր բեկերուն բեկն է, պատասխանեց Գայիանէ:

— Մեր բեկերը իրենց գլխուն իշխան չունին, միայն Աստուած եւ արեւն ունին, պատասխանեց հրացանաւոր երիտասարդ թաթարը:

— Իսկոյն հաւաքեցէք ձեր հօտը եւ Տիզակէն անդին անցէք. ժամանակ պիտի դայ որ հոն ալ պիտի չմնաք, ըսաւ Ստեփան:

Թաթարներն ապուշ ապուշ նայեցան այդ նորեկին. չէր նմաներ հայ հովիւներու, որոնք ոչխարի մորթէ զգեստ ունէին, տրեխ հագուած էին եւ բերանին խօսք չունէին՝ իրենց խօսքը կոտրելու. նա երիտասարդ էր, բարբախը գլխուն, սուրը մէջքին, պիսերը սրած եւ ազնուական կերպարանքով. բայց իրենցմէ երիտասարդ մը, վարժ բռնութեան, ըսաւ.

— Մենք հո՛ս ենք, հո՛ս կը մնանք. նախ մեր հօտը, մենք կը խմենք աղբիւրէն, յետոյ դուք, եթէ թոյլ տանք. եւ ձեռքը հրացանի բլթակին տարաւ:

— Դո՞ւք, դո՞ւք շան զաւակներ, պողաց Շահումեան եւ թաւ ու խլեց անոր հրացանը. իր շարժումն այնքան արագ եղաւ, որ թաթարը ինքզինքը չկրցաւ ժողվել:

Նետեց հրացանը գետին եւ սուրը քաշելով սպառնաց չորսն ալ սատկեցնել, եթէ խսկոյն չհեռանային:

— Ալի, ըսաւ իրենց մէջ ծեր հովիւ մը, երթանք, առ ուրիշ բան է, ասիկա զինուոր է, հովիւ չէ:

— Հրացանս կ'ուզեմ:

— Հրացանդ զնա՛ ձեր բեկերէն ուզէ, պատասխանեց Ստեփան:

Հաւաքեցին իրենց հօտը եւ աճապարանքով հեռացան:

— Պիտի լուր տանք մեր բեկերուն, պոռաց երիտասարդը, քար ու քանդ պիտի ընենք Աւետարանոց զիւղն ու բերդը:

— Եկէք, եկէք, պատասխանեց Գայիանէ, մէկ հատ ողջ չէք վերադառնար:

— Գայիանէ, այս հրացանը քեզի կը նուիրեմ, ըսաւ Ստեփան խնդալով. ասոնք հերոս են, երբ թոյլ մարդիկ գտնեն, վախկոտ ազուէսներ՝ երբ բռունցք ցոյց տրուի:

— Տէր իմ, ըսաւ հայ հովիւը, քիչ մը վախցած, եթէ դուք երթալու ըլլաք, մեզ ո՞վ պիտի պաշտպանէ, ասոնք բեկերով կու գան, բազմութեամբ կու գան, շուներով կու գան, ո՛չ Աստուած ունին, ո՛չ գութ, կը սպաննեն, կը ջարդեն, կը թալանեն եւ Ալլահ, Ալլահ պոռալով կ'երթան, մեզ ո՞վ պիտի պաշտպանէ:

— Եթէ Մելիքն ոյժ չունի, Գայիանէն կը պաշտպանէ ձեզ, պատասխանեց Շահումեան:

— Իմ եղբայրներս ալ քաջ են, ըսաւ Կատար, ես կ'ըսեմ որ զինուած այս սարերը պտըտին:

— Ես պիտի երթամ, արդէն ուշացայ, ըսաւ Ստեփան, բայց քիչ ատենէն հոս ենք հայ բանակներով եւ Տիրակէն անդին ողջ հաւ մ'ալ չէք գտներ:

Այդ պահուն վերերէն հրացան մը պայթեցաւ եւ զնդակ մը ծառերէն տերեւներ թափեց:

— Շուներն են, ըսաւ Ստեփան. տուր սա թաթարին հրացանն, աւելի աղուոր է: Դուք սա քարերուն հոտե անցէք:

Լեցուց հրացանը եւ ուղղակի նշան առաւ դէպի չորս թաթարները որ կանգնած էին բարձունքի մը կատարին: Մէկը գետին ինկաւ եւ նորէն ոտքի ելաւ, բայց քաշկոտելով հեռացաւ բարձունքէն, երկրորդ հրացան մը զնաց դէպի վեր, բլուրէն հող քանդելով:

— Ահաւասիկ իրենց պատասխանը, ըսաւ Շահումեան, հրացանը Գայիանէին տալով:

— Ե՛ս ալ անգամ մը պայթեցնեմ, ըսաւ աղջիկը: Զէնքը լեցուց եւ սողոսկելով դիտեց բարձունքները. կարծես շարժումներ կային:

— Ստեփան, շարժումներ կը տեսնեմ. կարծես թէ քանի մը հողի են:

— Քաշէ այդ ուղղութեամբ, հրամայեց Շահումեան:

Աղջիկը սեղմեց հրացանն իր անութին տակ եւ աչքերը կէս մը խփած, կրակեց շարժումին կողմը. գընդակը սուլելով մխրճուեցաւ բլրան զազաթին վրայ, բայց շարժումներ ա՛լ չտեսնուեցան:

— Ապրիս, Գայիանէ, ըսաւ Ստեփան. դուն մինակդ կրնաս Աւետարանաց զիւղն ու բերդը պաշտպանել, ինչո՞ւ չէ, նաեւ ամբողջ Արցախը:

Աղջիկը ուրախ կարմրութիւն մ'առաւ, գոհ եղաւ այս ասպետական խօսքերէն, կարծես երակներուն մէջ մարտիկի արիւն իջաւ:

— Հիմա կրնան աւելի բազմութեամբ գալ, ըսաւ հովիւը, ի՞նչ պիտի ըլլայ մեր վիճակը:

— Թող դան, հազարներ դան, պատասխանեց Ես-
նուամեան. մէկ դամբու դայլերու վոհմակը կը հալածէ:
Դուն իջիր վար. հաւաքեցէք ձեր հօտն ու գիւղ իջէք,
արդէն ժամանակն է:

— Պապայիս բան մի՛ ըսէք, ապսպրեց Գայիանէ,
ես պիտի պատմեմ, թող իր աղջկան բերնէն լսէ՝ թէ
աշխարհիս մէջ ազատ մարդու պէս ապրիլ կայ, ոչ թէ
ոչխարի պէս:

Երբ հովիւը մեկնեցաւ, իրենք տակաւին մնացին
աղբիւրին մօտ: Կատար ձեռքն առաւ թաթարին հրա-
ցանը, բայց ծանր էր իր փափուկ թեւերուն համար.

— Ի՞նչպէս վերցուցիր Գայիանէ, ըսաւ խնդալով,
դու զոմէջի ոյժ ունիս:

— Եւ հերոսի արիւն, պատասխանեց Ստեփան:
Մե՛ղք այս սքանչելի երկիրն ունենալ եւ այդ շուներուն
ձեռքը թողնել. տեսէք սա անտառները, կանաչ արօտա-
վայրերը, հեռուն արգաւանդ դաշտերն ու արտերը. եւ
դան այդ նետուելիք ցեղերը եւ ըսեն թէ նախ մենք պի-
տի խմենք ձեր ջուրը, մենք պիտի ուտենք ձեր հացը,
յետոյ դուք պիտի հաւաքէք մեր փշրանքները: Զիդերս
կրակ կ'առնեն եւ հողիս կը վառի: Տեսա՞ք թէ ինչպէս
շան պէս կաղկանձելով հեռացան: Գայիանէ, եթէ յան-
կարծ օր մը Օսմանցիներն այս կողմերը դան հասնին,
դուն ի՞նչ պիտի ընես:

— Աստուած չընէ, պատասխանեց աղջիկը, ես հրա-
ցան առած անտառները կ'երթամ եւ աւազակ կը դառ-
նամ:

Գիտէի թէ այդպէս պիտի պատասխանես: Իսկ դուն
Կատա՞ր:

— Գայիանէին հետ անտառ կ'երթամ իր հրացանը
լեցնելու:

— Ինչո՞ւ տխուր բաներու վրայ կը խօսիք, ըսաւ
Շողիկ, մեր Մելիքը մեռա՞ծ է որ թշնամի դայ այս
կողմերը: Գիտէ՞ք, օր մը ուրախութեան ժամանակ ը-
սաւ իր բարեկամներուն՝ թէ մէկ հրամանով կրնայ յի-
սուն հազար ոտքի հանել:

— Ըսելու եւ ընելու մէջ ծովեր կան, պատասխա-
նեց Ստեփան, բայց մելիք Աւանը... Կամաց կամաց
վար իջնենք, մութին կը մնանք. ես պէտք է այս երե-
կոյ մեկնիմ Հալիճոր. Դաւիթ բեկն ինձի կը սպասէ.
բայց ես տանելու ուրախ լուր չունիմ:

Լեռներուն գաղաթները ծիրանի դոյն առած էին,
արեւը հովտէ հովիտ կ'իյնար, աւելի կարմրած ու մեծ-
ցած էր, ինչպէս հրեղէն անիւ մը: Իրենք կ'իջնէին ու
կ'իջնէին, կարծես կ'ուզէին ձեռքով բռնել հորիզոնին
կպած արեղակը:

— Ո՛վ Աստուծմէ օրհնած Հայաստան, ե՞րբ խա-
ղաղ գիշերներ պիտի ունենաս, ե՞րբ ծոցիդ վրայ քու
զաւակներդ կաթ պիտի ծծեն, փոխանակ թափառական
ցեղերու, հառաչեց Ստեփան, աչքերը գրեթէ չվերցնե-
լով գեղեցիկ տեսարաններուն վրայէն:

— Երբ քեզի պէս զաւակներ ունենայ, պատասխա-
նեց Կատար, հիմա կը դղամ թէ ինչ ըսել է քաջութեամբ
ապրիլ, զէնք ունենալ: Մեղք որ հայրիկս մելիք չէ,
աշխատաւոր հողատէր է: Հողն առանց պահակի ուրի-
շին կը պատկանի. երկիր մը առանց զինուորի՝ տուն
մ'է առանց զոներու:

— Ապրիս, Կատար, իմաստուն խօսեցար, ըսաւ
Գայիանէ, քու հայրդ սիրտ ունի, զէնք չունի, իսկ իմ
հայրս...:

Գայիանէ գոցեց երեսը, կարծես թէ ամչցաւ իր
հօրն անունը տալու, զայն ծնողք կոչելու: Գիտէր թէ

Գրասկ կ'ուզէր բանակներ զրկել Հալիճոր, իսկ իր հայրը կը նախընտրէր խոնարհ կենակցութիւն այլադաւաններուն հետ :

Երբ Աւետարանոց գիւղն հասան, մեկիք Աւան արդէն լսած էր թէ Տիգակի պաղ աղբիւրին քով հրացանածդութիւն եղած է, որոշ բան չէր գիտեր, բայց կը դուշակէր :

— Ի՞նչ հրացանի ձայներ էին, հարցուց Ստեփանին :

— Ես էի, հայրիկ, պատասխանեց Գայիանէ, պաղ աղբիւրին քով նստած էինք, եկան չորս թաթարներ, երկուքն հրացանով, երկուքը վայրի դաւազաններով եւ պահանջեցին որ նախ իրենք խմեն ջուր, յետոյ իրենց անհամար հօտը, ապա մենք : Կրնայի՞նք համբերել :

— Թող թոյլ տայիք, ջո՞ւր կը պակսէր, պատասխանեց Աւանը, ինչո՞ւ փշոտ խնդիրներ կը հանէք :

— Թոյլ տայի՞նք, որո՞ւն ջուրը, որո՞ւն անունն ու պատիւն այդ շուներուն առջեւ նետէինք :

— Կարծեմ, ըսաւ Շահումեան, դուն պայման ունիս անոնց բեկերուն հետ որ Տիգակէն ասդին պիտի շանցնին :

— Այո, մենք համաձայնած ենք խաղաղ ապրիլ :

— Պահեցի՞ն այդ պայմանը : Մեր Խորենացի պատմիչը լաւ խօսք մ'ունի. Քաջերու սահմանն իրենց գէնցն է :

— Ի՞նչ հրաշալի խօսք է, ըսաւ Գայիանէ, բերանը պազնեմ :

— Գուն քաջ մէկը կը տեսնուիս, ըսաւ Աւան Ստեփանին, բայց քաջութիւնն ամէն տեղ չի յարմարիր. խոհեմին մայրը չէ լացած, կ'ըսէ մեր իմաստուն ժողովուրդը. իմ հայրս, պապերս այսպէս խաղաղ ապրեր են. ես ալ այդ ճամբայէն չեմ շեղիր. ամէն մարդ իր

դործելակերպն ունի. քեզի պէսներն աշխարհիս կրակ կու տան, ինձի պէսները խաղաղ երջանկութիւն :

— Շատ լաւ, պատասխանեց Ստեփան, բա՛ց կըռնակդ, թող այդ Թաթարները խարազանեն, եւ դուն ծառայ եմ ըսէ : Թող քու ոչխարներդ, հարստութիւնդ տանին, արօտաւայրդ հօտերով լեցնեն, դուն խոնարհարար ծառայ եմ ըսէ :

Մինչ կը խօսէին, Գայիանէ կոթնած թաթարի հրացանին փայլուն փողը կը շփէր :

— Այդ որո՞ւն հրացանն է, Գայիանէ, հարցուց հայրը խիստ շեշտով :

— Պատերազմի աւար է, թաթարին ձեռքէն խլեցի եւ հիմա իմ է :

— Կը տեսնես, վաղն հինգ վեց հատ բեկեր կու գան եւ հրացանէն դատ ուրիշ բան կը տանին :

— Հինգն ալ կը պառկեցնեմ, պատասխանեց աղջիկը :

— Եթէ տասը քսան հատ գա՞ն :

— Աւելի լաւ, քսան հատ կը դարնեմ :

— Ոսկինար, պոռաց Աւան իր կնոջը. սա աղջիկդ ա՛ր եւ յիմարանոց տար : Տուր այդ հրացանն ինձի, դարձաւ աղջկան :

— Ո՛չ, ասիկա իմ բազուկիս նուէրն է, մարդու չեմ տար, եթէ հարիւր բեկ ալ գան, ձեռքէս չեն կրնար խլել :

— Տէր Աստուած, այս ինչ փորձանքի հանդիպեցանք ըսաւ Աւան :

— Աչքերդ ուղեցինք բանալ, բայց դուն, հայրիկ, սեւ ամպով ծածկեր ես եւ չես տեսներ դառն իրականութիւնը, ըսաւ Գայիանէ : Աստուած տայ որ չզղջաս :

— Բարեկամ, դարձաւ Աւան Ստեփանին, ձիդ պա-

տրաստ է բերդին տակ: Բարեւներս տար Դաւիթ բեկին, ըսէ որ զէնքերը վար դնէ եւ համաձայնութեան գայ Օսմանցիներուն հետ. անոնց բանակները չեն վերջանար: Երեք հարիւր հոգիով Սուլթանին մօրուքէն մազ մ'ալ չէք կրնար փրցնել: Դիւրին է անտառի մը կրակ տալ, բայց մարելը շատ դժուար է: Երթաս բարով:

— Մելիք Աւան, ես կ'երթամ եւ պէտք է աճապարեմ, բայց օր մը, կամ Դաւիթ բեկը կու գայ Աւետարանոց բերդը կամ Օսմանցիները. Աստուած երկրորդէն ազատէ:

Ձին կը սպասէր բերդին դրան առջեւ, Ստեփան դուրս ելաւ, Մելիքը չհետեւեցաւ իրեն, բայց Գալիանէ եւ Կատար դուրս վազեցին, չէին ուզեր որ նա մեկնէր, եւ այսպէս պազ հօր մը բիրտ հրամանով՝ դրեթէ բերդէն դուրս դուռէր:

Ստեփան համբուրեց երկու աղջնակները: Իր սիրտը սեղմուած էր երկու հակասական յուզումներով, հօր մը չոր եւ եսասէր վերաբերմունքը աղջկան մը տաք եւ առնական սիրտը: Երբ ոտքերը դրաւ ասպանդակներուն վրայ, քաշեց վերաբերուն ուսերուն.

— Գալիանէ՛, Գալիանէ՛, ըսաւ, պատերազմի տաք օրերուն քեզ պիտի յիշեմ:

Աստղերն սկսած էին երեւալ. լիալուսինը Տիզակի կատարէն կը բարձրանար. վերջալոյսը մարելու վրայ էր եւ Շահումեանի սեւ ձին բռնեց լեռնային ճամբան, գէպի հարաւ արեւմուտք: Գալիանէ եւ Կատար զիրար դրկած նայեցան այդ երազային ստուերին որ կը հեռանար եւ ոչինչ կը դառնար հորիզոնին վրայ:

Աղջիկներն երկար նայեցան այդ անսովոր ասպետին ետեւէն, որ ասուպի պէս եկաւ, եւ ասուպի պէս հեռացաւ:

Գալիանէ արցունք ունէր աչքերուն մէջ, Կատար երազի մէջ էր:

— Մեկնեցա՛ւ Կատար, ըսաւ Գալիանէ, պիտի տեսնե՞նք անդամ մ'ալ, պիտի լսե՞նք իր տաք խօսքերը: Հօրս չքեզ տունն ինձ համար պարապ է հիմա, հոն կեանքը գերութիւն է կարծես:

— Հայրդ շատ դէժ վարուեցաւ Ստեփանին հետ, ըսաւ Կատար, դրեթէ զինքը տունէն դուրս դրաւ:

— Գիտեմ, դիտեմ, սիրելիս, բայց ես մեր տան մէջ Ստեփան պիտի ըլլամ: Վստահ եղիր թաթարին հրացանը պիտի ուզէ որ բեկերուն յանձնէ, բայց ես, հրացան չէ, չոր փայտ մ'ալ պիտի չտամ:

— Եթէ բռնի ձեռքէդ առնէ՞, պատասխանեց Կատար:

— Վաղը կը տեսնես, այդ շուն բեկերը պիտի դան, հայրս դողալով ներողութիւն պիտի խնդրէ. բայց ես դիտեմ ընելիքս:

— Ի՞նչ:

— Գիւղէն վեր անտառին մէջ պիտի սպասեմ որ անոնք վերէն վար դան, պիտի սկսիմ հրացան պայթեցընել: Տղայ մը կը գտնեմ եւ կը պատուիրեմ անոնց ճամբուն վրայ սպասել, երբ հարցնեն թէ ո՞վ է հրացան արձակողը, պիտի պատասխանէ թէ օտարական ասպետն է, նայինք ինչ պիտի ընեն այդ հերոս բեկերը:

— Լաւ խորհեր ես Գալիանէ. ինչո՞ւ իմ եղբայրս չդնենք ճամբուն վրայ. Գուրգէնը արդէն մարդ է, նա վախ չունի: Պէ՞տք է որ հօրս իմաց տամ ծրագրերդ:

— Ո՛չ, քիչ մարդ, շատ գործ:

Գալիանէ հրացանը տուն չտարաւ, Կատարին հետ դնաց անոր տունը եւ մարազին մէջ պահեցին:

Մելիք Աւանը խիստ նայեցաւ իր աղջկան, յօնքերը

Արագածի մութ ամպ դարձեր էին, աչքերը կրակ կուտային, եթէ ձեռքէն դար զայն պիտի մորթէր:

— Հրացանը բե'ր, դռաց ամպի պէս, հրացանը բե'ր, եթէ ոչ ոտքիս տակ կ'առնեմ եւ մագերդ կը խուզեմ:

— Ես արդէն որոշած եմ մագերս կտրել, արդէլք կ'ըլլան անտառներու մէջ քայելու, պատասխանեց Գալիանէ. իսկ հրացանը՝ Ստեփան հետը տարաւ:

— Տունս փլա՛ւ, տունս փլա՛ւ, գոչեց հայրը. վաղը մէկ չէ, տաս բեկեր կու դան եւ մեր ունեցածը կ'առնեն կը տանին: Աղջիկ չե՞ս խորհիր ասոնք, չե՞ս հասկընար թէ դադաններ են, արիւնոտ աչքեր ունին:

— Երբ պահապան շուն չկայ, աղուէսն ուղած ատեն հաւնոց կը մտնէ: Հսկայ աշխարհ մ'ունիս, ըսիր թէ յիտուն հաղար հրացանաւոր կրնաս հանել եւ հիմա քանի մը բեկերէ կը դողաս: Մեր հայրերն այդպէս չեն ապրած, սուրի դէմ սուր քաշեր են, եւ այս աշխարհը քեզի ժառանգութիւն ձգեր են:

Մեյիքն աչքերը լայն լայն բացաւ, ճիշտ էր Գալիանէի ըսածը, բայց ժամանակները փոխուած էին, հիմա ամէն կողմ թրքութիւն կը տիրէ. Տիզակէն անդին մինչեւ Կասպից ծովն անոնք բռնած են, հարաւը Պարսիկը կայ, արեւմուտք՝ Օսմանցին, իսկ Հայաստան կղզի մ'է անոնց մէջ. իր աղջիկը չէր հասկնար այս կացութիւնը, նա միայն եռանդ ունէր եւ անխոհեմ մարդու մը խօսքերուն զերի դարձած էր:

— Վաղը դուն կը պատասխանես բեկերուն, ըսաւ աղջկան:

— Այո՛, ես կը պատասխանեմ, դուն հանդիստ քընացի:

— Գալիանէ՛, կանչեց անդիէն Ծովինար մայրը,

դուն աղջի՞կ ես թէ մանչ, երբեք տան դործերով չես գրադիր, կեանքդ անտառներու մէջն է, սարերուն վըրայ. ի՞նչ պիտի ըլլաս:

— Երկուքն ալ եմ, մայրիկ, թէ աղջիկ եմ եւ թէ մանչ: Հայրիկս մանչու սրտով մէկու մը պէտք ունի. իր ընդարձակ աշխարհին մէջ միայն ոչխարներու անթիւ հօտեր ունի:

— Ճիշտ իմ հայրս ալ այդպէս էր, Գուգարքի անտառներէն դուրս չէր ելլեր. ըսաւ Ծովինար ինքնիրեն, արիւնը քաշեր է:

Բայց մեյիք Աւան այդ գիշեր չընացաւ, բռներ շարեց իրար քու թէ ինչ պիտի պատասխանէր բեկերուն, մէկ միտքը միւսին չէր յարմարիր, մէկ խօսքը միւսին հետ չէր կապուիր: Ներողութի՛ւն ինդրել, սպաննօ՛ւ, թէ ոսկի տալով ետ ճամբել: Անոնք շատ բան պիտի ուզէին, անկուշտ են, վարժ են յափշտակելու: Մէկ հրացանի տեղ թերեւս տասը պահանջեն, ինչ գիտնար գալիք փորձանքը:

Մտքէն անիծեց այդ օտարական ասպետը, հայհոյեց բախտին դէմ, հայհոյեց բեկերուն, մինչ աստղերը խաղաղ եւ ժպտուն կ'անցնէին Աւետարանոց գիւղին վրայէն:

Յաջորդ օրը դնաց Գալիանէի սենեակը, աղջիկը հանդիստ կը քնանար:

— Երբ բեկերը դան, ըսաւ, իր կնոջը, աղջիկդ արթընցուր թող դայ ինքն իր մանածը քակէ:

— Ամօթ է որ տասներեք տարեկան աղջիկ մը դայ եւ պատասխանէ, ես չեմ ուզեր որ այդ շուներն աղջկանս երեսը տեսնեն, պատասխանեց Ծովինար: Յետոյ աղջիկս ի՞նչ յանցանք ունի, եթէ այն օտարականը հրացանը թաթարին ձեռքէն խլեր, տարեր է:

— Ես չեմ հաւատար թէ առեր տարեր է հրացանը, նա աղջկանս նուիրեր է, բայց պէտք է հաւատամ :

— Եւ այդպէս ըսէ բեկերուն, թող ետեւէն երթան եւ ետ առնեն իրենց զէնքը, պատասխանեց Մովինար լաւ է որ այսօր Գայիանէ նոյնիսկ տունը չդռնուի, մարդրիտը խոզերուն առջեւ չեն նետեր :

— Իրաւունք ալ ունիս, ըսաւ մելիքը, մէկ աղջիկ ունինք, ան ալ անհաւատներուն աչքը չենք կրնար նետել :

— Յետոյ ի՞նչ պիտի ըսեն բեկերը, նայեցէք սա մարդուն, հսկայ աշխարհի մը տէրն է, քաջութիւն չունի մեղի հետ խօսելու, բերանը խօսք չունի եւ աղջնակ մը մեր դէմ հաներ է :

— Աս ալ իրաւունք ունիս Մովինար, պատասխանեց Աւան : Միտքս չփոթած է, գիշերն ամբողջ ելք մը մտածեցի եւ բան չգտայ : Դուն լաւ թէյ պատրաստէ, անուշեղէններով, գինի ալ հանէ, թերեւս բանն անուշի կապենք :

— Բայց անոնց օրէնքը գինին կ'արդիլէ, ըսաւ կինը :

— Երբ մոլլային առջեւն են, սուրբ կը ձեւանան, բայց առանձին չոր հողի պէս կը ծծեն :

Գայիանէ արգէն ելած էր եւ տեսնելով մօրը պատրաստութիւններն ըսաւ .

— Յուսանք ժամանակ չունենան մեր աղն ու հացն ուտելու :

— Դուն այսօր Կատարենց տունը գնա՛, հայրդ եւ ես խորհեցանք որ այդ շուները քու սուրբ երեսօղ չտեսնեն . միայն Կատարին հօրն ըսէ որ շուտով մեր տունը գայ, լաւ է որ հայրիկիդ կողքին ըլլայ :

Գայիանէին ուզածն էր, թաւ Կատարին քով :

— Գիսա՛կ ամի, Գիսա՛կ ամի, հայրիկս քեզ կ'ուզէ, շուտով գնա՛, կարծեմ բեկեր պիտի գան հրացան ուղերու, կանչեց, հաղիւ անոնց տունն հասաւ :

— Ա՛խ, ինչ ըսեմ, քանի անգամ այդ սրիկաներն եկան ու կչտացած դացին :

— Գնա՛, գնա՛, այս անգամ դժուար թէ կչտանան : Կատարին հայրիկն իսկոյն մեկնեցաւ : Այժմ ազատ էին իրենց ծրագիրը դործադրելու :

— Գուրգէն, ըսաւ Գայիանէ Կատարին եղբօրը, դուն այսօր շատ կարեւոր դործ մը պիտի ընես . դուն պիտի երթաս Տիզակէն Աւետարանոց իջնող ճամբուն վրայ պիտի կենաս . փայտ մը կ'առնես եւ իբր թէ կը տաչես : Հոն սպասէ, երբ տեսնես որ բեկեր կու գան դէպի մեր դիւղը, կը սկսիս անտարբեր սուլել : Հրացանի ձայներ պիտի լսես, եթէ հարցնեն թէ ո՞վ է հրացան պարսողը, կ'ըսես թէ օտարական հայ սպայ մը եկած է, քանի մը հոգի ալ այս գիշեր հասան եւ հրացանի փորձ կ'ընեն : Ուրիշ բան մի խօսիր :

— Բայց հոս մարդ չկայ, ասպետ չկայ, պատասխանեց Գուրգէն :

— Դուն այդպէս ըսէ եւ մի՛ խորհիր :

— Եթէ հարցնեն թէ ի՞նչ տեսակ մարդ է, ի՞նչ ըսեմ :

— Գուրգէն կեցիր մեր դերերը փոխենք, պատասխանեց Գայիանէ . կը վախնամ թէ դերդ լաւ չկատարես : Նայէ, քեզի պիտի տամ փառաւոր հրացան մը, վառօդ եւ գնդակ . դուն կը կենաս ճամբայէն հեռու ծառերուն ետեւը, ես եւ Կատար քու տեղը ճամբուն վրայ կը սպասենք բեկերուն . ես կը սուլեմ, դու հատ մը կը պարպես յետոյ կը հեռանաս եւ ձորէն ուրիշ մ'ալ կը պարպես . մնացածն, Աստուած ողորմած է :

Հրացանն հանեց մարագէն եւ Գուրգէնին տուաւ .
իրենք դացին ճամբուն վրայ սպասելու : Ճիշտ կէսօր-
ուան մօտ երէկուան չորս հովիւները երկու հրացանով
եւ չորս հատ բեկեր տեսնուեցան գիւղի վերի ճամբուն
վրայ : Գայիանէ եւ Կատար քարի մը վրայ նստած ծա-
ղիկներով փունջ կը շինէին :

— Կատար, վեր նայէ, կու գան . կարծես երէկուան
հովիւներն ալ հետերնին են :

— Այո՛, հովիւներն ալ կան . մէկը կազ կը քալէ :

— Իմ դարկածս պիտի ըլլայ :

Գայիանէ քիչ մը հեռացաւ եւ սուլեց քանի մը ան-
դամ՝ յետոյ ձայնեց .

— Գուրգէն հեռացիր եւ քաշէ :

Ազջիկը կեղծեց թէ ծաղիկ կը հաւաքէ : Բեկերը մօ-
տեցան :

— Աս ազջիկները նախ կը տանինք, ըսաւ բեկ մը :

— Տէր իմ, մելիքին ազջիկն է, սարի եղնիկ է,
դժուար է բռնել տանիլ, պատասխանեց ծեր հովիւը :

Հրացանն որոտաց անտառին մէջ :

— Ո՞վ է այդ հրացան նետողը, հարցուցին ազջիկ-
ներուն :

— Օտարական ասպետն է, պատասխանեց Գայիա-
նէ, ուղմափորձ կ'ընեն :

— Շատե՞ր են, որ կ'ընեն ըսիր :

— Այո՛, այս գիշեր հասան ուրիշներ, դեռ կ'ըսեն
թէ ետեւէն բանակը պիտի գայ : Ղափանցիներ են, Հա-
լիճորի մէջ Թուրքերը ջարդեր են . հիմա այս կողմերը
պիտի գան :

Ետեւէ ետեւ երկու հրացանի պայթումներ ալ լըս-
ուեցան :

— Տէր իմ, ըսաւ ծեր հովիւը, ասոնց հետ խաղալ

չ'ըլլար . մենք տեսանք, արծիւն ամպերուն մէջ կը զար-
նեն . մէկ հրացանի համար կեանքերնիս վրայ չտանք :

Բեկերը մտածկոտ կեցան . եթէ լսեն թէ եկած են
մելիքին դաս տալու, կրնան զիրենք ծառերէն կախել :

— Քամալ, ըսաւ տարէց բեկ մը, լաւ է ետ դառ-
նանք :

— Մելիք Աւանը տո՞ւնն է, հարցուց բեկ մը Գա-
յիանէին :

— Այո՛, տունն է, հրամմեցէք, վար իջէք թէյ մը
խմելու, յոգնած պիտի ըլլաք :

— Այդ աւագակներն յանկարծ գիւղ չգան, մեզ
չտեսնեն : Մենք կին գաւազ ունինք . մեր կեանքը բեկի
կեանք է, թանկ է, ըսին բեկերը :

— Հայրիկս զիրենք վաճակեց . ըսաւ թէ՛ բեկերուն
հետ աղբօր պէս է, պէտք չունի պաշտպանութեան .
հոս, ըսաւ, մենք դարերով իրար հետ խաղաղ կ'ապ-
րինք, չունեցողին ունեցողը կու տայ, դռներնիս բաց է
մեր բարեկամ բեկերուն առջեւ :

— Ճիշտ է, ըսին բեկերը, մենք միշտ բարեկամ ե-
ղեր ենք . Մելիքը մեր եղբայրն է :

Քաջալերուած, բեկերն իջան գիւղ :

— Դուք, ըսին հովիւներուն, սարը դարձէք, թող
մեզ զինուած չտեսնեն, տարէք հրացանները վեր եւ ոչ-
խարները Տիղակէն անդին քշեցէք : Մենք քիչ ատենէն կը
դառնանք :

Մելիքը զիրենք պատուով ընդունեցաւ, տեսաւ՝ որ
ամպոտ յօնքերով չեն, խրոխտ կերպարանք չունին,
ինչպէս ուրիշ անգամներ :

— Բարի եկեր էք, մեծապատիւ բեկեր, տունս ձերն
է, ըսաւ խոնարհարար, հրամմեցէք : Շողիկ, Սուսամ,
պոռաց աղախիներուն, հիւրանոցին դուռը բացէք :

Եւ բեկերը բազմեցան մետաքսէ բարձրուն վրայ, հարցուցին Աւանին, Մովինարին, գիւղին առողջութեան մասին, հարցուցին Գիսակին տան մասին:

— Տեսանք սարին վրայ ձեր աղջիկը, ծաղիկ կը հաւաքէր, ինքը մեզ հրաւիրեց վար իջնել թէյ խմել. մաշալլա, շատ սիրուն աղջիկ ունիս. Աստուած լոյս երես տայ:

— Երբ Գայիանէ տեսաւ որ հովիւները չորս ոտքերով սար կը բարձրանան, հասկցաւ թէ վախը փորերունին է:

— Կատար, ըսաւ խնդալով, կարծեմ լաւ յաջողեցանք. հիմա պէտք է Գուրգէնին ըսել որ գիւղին մօտենալով մէկ երկու անգամ ալ հրացան պայթեցնէ. լաւ դեղ է: Մենք իսկոյն տուն վերադառնանք, չորս ըսելիք ունիմ:

— Լաւ, դուն տուն դարձիր, ես Գուրգէնին կ'իմացնեմ իր ընկիւթը եւ կու գամ:

Գայիանէ իսկոյն տուն իջաւ, բեկերը նստած թէյ կը խմէին եւ կեղծ ու պատիր քաղաքավարութեամբ կը խօսէին: Մեկիք Աւան տեսաւ Գայիանէն դռնէն դուրս սրահին մէջ. բեկերը զբաղած էին թէյ խմելու եւ անուշեղէն կլլելու:

— Հիմա կու գամ աղաներ, ըսաւ բեկերուն, դուք հանդիստ ըրէք. Գիսակ ձեզ մինակ չի ձգեր:

Գուրս ելաւ եւ բռնելով աղջկան թեւէն հեռուն տալու:

— Ինչո՞ւ տուն եկար, քեզի չըսի՞ թէ Կատարենց տունը մնացիր:

— Կեցիր հայրիկ, ես թատրոն կը խաղամ:

— Ի՞նչ թատրոն է:

— Երբ աղուէսը լսէ պահապան շան անունը՝ պոչը

չորս ոտքերուն մէջ սարերը կը փախչի. լսէ ինծի. հիմա մէկ երկու հրացանի պայթում պիտի լսես, երբ բեկերը հարցնեն թէ ո՞վ են, դուն պատասխանէ թէ օտարական ասպետն է եւ հետը զինուորներ ունի, ռազմափորձ կ'ընեն, թէ փորձանք են մեր կողմերը, թէ դուն զերենք վռնտեցիր եւ բեկերուն հետ բարեկամ ես: Պատմէ Հալիճորի մասին լսածդ, քիչ մ'աւելի զարդարէ եւ սարսափելի դարձուր. յետոյ կը տեսնես:

Մեկիքը զարմացած աղջկան նայեցաւ, չհասկցաւ թէ ինչ կ'ուզէր ընել. բայց գիտէր թէ Գայիանէ խեղացի է, իր գործը գիտէ, ընկիւթը լաւ կը կշռէ:

— Լաւ, պատասխանեց ու ներս վազեց:

Բեկերուն անոյշ կերպարանքը, յարգալիք վերաբերմունքը նոր կը տեսնէր, անշուշտ բան մը պիտի ըլլայ, խորհեցաւ ինքն իրեն: Բեկերն երբորդ թէյի գաւաթը կը խմէին, երբ հեռուէն, շատ հեռուէն հրացանի խուլ պայթում մը լսուեցաւ: Յնցուեցան:

— Ի՞նչ պայթում է, մեկիք Աւան, հարցուցին չորսը մէկ բերան:

— Ինչ պիտի ըլլայ, այն երէկուան ասպետն է, հետը զինուորներ բերած է եւ ռազմափորձ կ'ընէ. ես զինքը տունս չառի: Արիւն չեմ ուզեր, մենք եղբայր ենք եւ խաղաղ սպրիլ կը սիրենք: Անոնց աչքերն արիւնով լեցուած է. Հալիճոր, գիտէ՞ք ինչ է Հալիճորը, Ղափանի կողմերը հսկայ, սա Տիզգալի պէս ամբողջ մ'է, հոն Հայերը Սուլթանի հարիւր հազար բանակին ջարդ տըւին եւ քչեցին, հիմա այս կողմերը եկեր են փախստական զինուորներ փնտռելու: Բայց ես չեմ ձգեր որ ձեր մաղին ալ դաչին:

— Այո, մեզի պատմեցին մեր հովիւները թէ սարսափելի մէկն էր այդ սպան, զեղեցիկ հագուած եւ լաւ

զինուած, ըսին թէ արծիւն ամպերուն մէջ կը զարնէ: Բայց մենք եղբայրներ ենք. տարիներով ու պապերով խաղաղ սպրեր ենք. մաշալլա, ասկից վերջին ալ աղբօր պէս կ'ապրինք: Շնորհակալ ենք ձեր հիւրասիրութեան, երբ բանի մը պէտք ունիք՝ մեր սիրան ու դուռները բաց են ձեր առջեւ: Մեր հովիւին հրացանն առեր տարեր է, դուք ի՞նչ յանցանք ունիք. յետոյ հրացանի մը համար պատերազմ պիտի չընենք, մենք խաղաղ մարդիկ ենք, սիրոյ մարդիկ, սէրը տուն կը շինէ, ոխը տուն կը քակէ:

Գիտակ ապշած մտիկ կ'ընէր.

— Գայլերն ոչխարի մօրթ հազած են, ըսաւ մըտքէն, ասոր տակ բան մը կայ, բայց չեմ հասկնար:

Բեկերը շնորհակալ եղան ու մեկնեցան:

— Լաւ է, ըսաւ տարեց բեկ մը, սովորական ճամբէն չեքթանք, աւելի հիւսիս դարնենք, ով գիտէ, չարը ամէն ճամբայ ունի:

Եւ զարկին դէպի հիւսիս ու հեռացան երբեմն երբեմն ծառերու շուքերուն նայելով, ու ջանալով ծածկուիլ թուփերու ետեւ:

Գայլանէ սոսկալի քրքիջ մը փրցուց, բոլոր տունն իր ձայնէն արձագանգ տուաւ: Հասաւ նաեւ Կատար: Այնքան խնդացին ու խնդացին որ չկրցան մեկիքին հարցումներուն պատասխան տալ: Երբ հանդարտեցան ըսաւ Գայլանէ.

— Հայրիկ վերը ձորին մէջ ո՛չ ասպետ կայ, ո՛չ զինուոր, մենք սարքեցինք. Գուրգէն հրացան առած ասդին անդին պայթեցուց: Տղու պէս խարեցինք այդ հերոս բեկերը. տեսա՞ր թէ ինչպէս խոնարհ էին, ինչպէս կը զոզային ասպետին անունէն: Հիմա հանդիստ

քնացիր, անոնք Տիգակէն ասդին ա՛լ չեն դար, եւ թող իրենք չքնանան:

— Ձեմ գիտեր, հաւատա՞մ եղածին թէ տղայական գտնեմ, բայց դուն հերոս աղջիկ ես. քեզի մանչու ըզդեստ պիտի հագուեցնեմ, հրացան պիտի տամ, սուր պիտի տամ:

Գիտակ չհամբերեց, բռնեց Գայլանէն եւ ուժով մը համբուրեց:

— Հօրդ եւ ինծի ամէնէն գեղեցիկ դասը դուն տըւիր, ըսաւ յուզուած: Սուրբ ըլլայ խմած կաթը, քեզ ո՞վ սորվեցուց արծիւներուն ետեւէն իյնալ. սարերուն վըրայ արջ սրսալ: Երանի այն ծնողքին որ քեզի պէս աղջիկ մ'ունի:

— Ինչո՞ւ Կատարին ալ չես ըսեր, զինքն ալ չե՞ս համբուրեր, նա շատ փոխուած է, փափուկ օրիորդ չէ, սարի զինուոր է:

— Քեզի հետ ճնճողուկն ալ արծիւ կը դառնայ, սիրելիս, կ'ուզե՞ս որ Կատարին ալ հրացան մը տամ:

— Տուր, փայլուն եւ նոր հրացան մը, այս անգամ աւելի վեր կը բարձրանանք եւ մէկ ասպետ չէ, հազար ասպետ կը ձեւանանք ու բեկերն իրենց որջերուն մէջ կը պահենք, պատասխանեց Գայլանէ:

Մեղիքն այս երեկոյ գեղեցիկ հանդէս մը տուաւ ի պատիւ իր աղջկան, կանչեց նուազողներ, քանի մը գիւղին մեծամեծները: Գայլանէն իր սրտին վրայէն խոշոր քար մը վերցուցած էր, այժմ կրնար հանդիստ շունչ առնել եւ քնանալ:

— Կատար, ըսաւ Գայլանէ, ես մանչու զգեստ կը հագուիմ եւ քեզի հետ հարս ու փեսայ կը պարենք, թող մարդ չգիտնայ, յանկարծակիի բերենք:

Եւ պարեցին հարս ու փեսայ: Կատար նազելի էր, Գայիանէ կորովի երիտասարդ:

— Ծովինար, կանչեց մեկը, ձեռք ձեռքի եկուր մենք ալ պարենք:

Եւ պարեցին ու ծափ զարկին, պարեցին բոլորը: Աստղերն երկինքի մէջ խաղաղ եւ ժպտուն կ'անցնէին Աւետարանոց զիւղին վրայէն:

Յաջորդ օրն երբ Աւան արթնցաւ, երկա՛ր երկա՛ր ձկաեցաւ անկողինին մէջ, առատօրէն յօրանջեց, բազուկները տարաւ ու բերաւ. կարծես թէ քսան տարի կեանքէն ետք դնաց ու դարձաւ երիտասարդ:

— Վայ, շուն շանորդի աղջիկ Գայիանէ, ըսաւ ինքնիրեն. ապա մտքի եկաւ. վախ, ինչ ըսի, ես դիս նախատեցի: Վայ սարի արծիւ Գայիանէ, մտքէս չէր անցնէր բեկերու քթին այսպէս խնդալ. անոնց թաւ մօրուքը ձեռքդ առիւր եւ իշու պէս քաշեցիր: Ծովինա՛ր, Ծովինա՛ր:

— Ի՞նչ կայ Աւան:

— Գայիանէն ո՞ւր է, հոս կանչէ:

— Դրան սուջեւ Գուրգէնին հետ կը խօսի եւ կը խնդայ բեկերուն վրայ:

— Խնդալիք բան է, հա՛, հա՛, հա՛. հերոս բեկեր, ձեր հէքն անիծեմ, կը հասկնա՞ք, ձեր հէքն անիծեմ:

Աւան մօտեցաւ իր սենեակի պատուհանին եւ կուշտ աչքերով զիտեց դէպի Տիգրակ լեռ. նա բարձր էր, երկինքին կը հասնէր, կարծես բնական պարիսպ էր իր Աւետարանոց զիւղին եւ բերդին:

— Անցէք նայիմ այս կողմը, աներես բեկեր եւ սողացող հովիւներ, աղջիկ մը ձեզ խայտառակեց եւ դեղին ցաւ տուաւ:

— Ծովինա՛ր, դարձաւ իր կնոջը, բա՛յց սա ընկոյզէ

արկղը ուր ընտանեկան թանկագին առարկաները կը պահենք, հանէ՛ իմ երիտասարդութեանս փայլուն հագուստը, տարատ, բաճկոն, ոսկի կոճակներով ելակա եւ վերարկուս, արծաթէ կամարս ու դաշոյնս:

— Ի՞նչ պիտի ընես, ալ քեզի չեն ըլլար, դու լեռան պէս մեծցեր ես:

— Բեր քեզի կ'ըսեմ, ամուսինին խօսքը չեն կտարեր:

— Այո՛, շաքարով կտարեմ, բայց ի՞նչ պիտի ընես, արդեօք միտքդ ծախե՞լ է:

— Ի՞նչ զարմանալի կին ես, ալ ուտելիք հաց չունի՞մ որ ընտանեկան սրբութիւնները ծախեմ. հանէ կը տեսնես:

Ծովինար մտաւ քովի սենեակը եւ խոշոր բանալին խոթելով արկղին մէջ երկու անգամ դարձուց, ճոճուչաց կղպանքը եւ արկղը բացուեցաւ: Աւանի հագուստները մաքուր ծալած դրած էր մէկ կողմը, դուրս հանեց: Ձեռքը տարաւ արկղին խորը եւ դտաւ դաշոյնը պատեանին մէջ մխրճուած, այն ալ դուրս հանեց. մէկ կողմէն կը խօսէր քթին տակէն, ինքնիրեն հարցումներ կ'ընէր եւ լուծում չէր դտներ. ի՞նչ պիտի ընէ այս հագուստները: Ախ, երանի թէ մանչ մ'ալ ունեցած ըլլայինք, հօրը հագուստին հետ պապերուն հողին ալ վերան կու գար, ըսաւ ու փոքրիկ արցունք մը սրբեց: Ապա մխրթարեց ինքզինքը. խենթ ես Ծովինար, ո՞ր մանչը Գայիանէին պէս քաջ պիտի ըլլար, բոլոր զիւղը զարմացուց իր խելքով ու քաջութեամբ:

Տարաւ հագուստներն ու դրաւ ընկոյզէ սեղանի մը վրայ: Աւան ձեռքն առաւ, մէկիկ մէկիկ բացաւ տաբատը, բաճկոնը, ելակը, առաւ դաշոյնը, քաշեց պատեանէն դուրս, շեղբը արծաթի պէս կը փայլէր, պա-

տեանը նաչխած էին, իր պապին անունը կար վրան. կոթը փղոսկրէ զարդ մ'ունէր. համբուրեց եւ դարձեալ պատեան դրաւ:

— Մեռնիմ քեզի Արցախ, ահա քու իշխանութեանդ զինանշանը, դաշոյն մը որ սիրտ կը ծակէ եւ արդարութեան պահակ է: Ծովինար, ո՞ւր է սա աղջիկը, կանչէ ինձի:

— Գայիանէ՛, Գայիանէ՛, պոռաց կինը դէպի դուռը:

— Ի՞նչ կայ մամի:

— Եկուր, հայրիկդ քեզ կ'ուզէ:

Աղջիկը ներս վազեց Գուրգէնի ձեռքէն բռնած:

— Հոս եմ հայրիկ:

Հայրը տեսաւ անոր աչքերուն մէջ արդար հպարտութեան մը փայլը. Գայիանէ կը շողար, ինչպէս դողդըղացող բարակ սուր մը: Բոլորովին վստահ էր իր ուժերուն եւ խելքին վրայ, կարծես թէ կորիւնի մը առաջին թափը կը զգար իր երակներուն մէջ:

— Ա՛ռ, այս հագուստները եւ մտիւր քովի սենեակը, հագուէ, կ'ուզեմ քեզ մանչու տարագով տեսնել, դուն ալ շատ կը փափաքէիր. դէթ պատրանքն ունենամ տանս մէջ ամազոն մ'ունենալու:

Գայիանէ քիչ վերջ դուրս ելաւ. հօրը հագուստներն իրեն շատ յարմար եկած էին, կարծես թէ իր վրան չափած էին, նա բարձրահասակ էր եւ չափաւոր կերպով լեցուն մարմին ունէր:

— Ծնրադրէ, ըսաւ հայրը:

Աղջիկը ծնրադրեց գետին:

— Համբուրէ այս սրբազան դաշոյնը:

Աղջիկը համբուրեց դաշոյնը:

— Ոտքի ելիր:

Գայիանէ ոտքի ելաւ եւ ուղիղ կանգ առաւ հօրն առջեւ:

— Այս արծաթէ կամարը քու մէջքդ կը կապեմ, քեզ մասնակից կ'ընեմ իմ մելիքական իշխանութեանս, իմ պապերուս հողին թող եօթն անգամ վրադ իջնէ: Սովորական բան է որ մանչ անդրանիկ մը յաջորդէ իր հօրը, բայց աշխարհ պիտի զարմանայ թէ հազիւ տասնըճինգ տարեկան աղջիկ մը հօրը սուրը կը բռնէ եւ ժողովուրդի մը առաջնորդը կ'ըլլայ: Դուն իմ սիրտս եղիր, ես քու վրադ ամպ ըլլամ: Դուն Հայոց պատմութիւնը կը ձանչնաս. եղա՞ծ են քեզի պէս քաջ աղջիկներ:

— Այո՛, հայրիկ, եղած են, Փառանձեմ թագուհին հերոսարար Արտազէրս ամբողջ պաշտպանեց, իսկ Այծմենիկ անունով քաջարի կին մը Անիի պարիսպներուն վրայ թշնամի Սելճուքներուն դէմ կը կռուէր. վէրք կու տար, վէրք կ'առնէր, եկած սլաքները ոտքերէն կը հանէր ու թշնամիին կը դարձնէր: Եղած են հայրիկ, քանիներո՞ւ անունները տամ:

— Ուրեմն քու մէջք ալ մեր պապերը կը խօսին. եղիւր Արցախի սարերու իշխանուհի:

Այդ պահուն եկաւ Ծովինար եւ ապաւնեց նայեցաւ աղջկան. ապա երկու ձեռքերը աչքերուն տարաւ.

— Վա՛խ, քոռնամ, սա ինչ խամաճիկ դարձեր ես Գայիանէ. գնա՛, գնա՛ փոխէ հագուստներդ, երկար մազերդ կը մատնեն թէ աղջիկ ես, մանչու հագուստն լ՞ոնչ կը յարմարի:

— Ծովինար, հողիս, պատասխանեց Աւան, Գայիանէն աղջիկ-մանչ է, մէկ հատ ունինք, վաղն երկուքս ալ հող պիտի մտնենք, կ'ուզես վա՞րդ մը ժառանգել թէ քամիներուն դիմադրող կաղնի մը: Արցա-

խը թէ՛ գեղեցիկ եւ թէ՛ քաջարի իշխանուհի մը պիտի ունենայ: Ժամանակը մեզի իրաւունք պիտի տայ:

Կինը ձայն չհանեց, մանաւանդ զնաց եւ աղջկան զգեստը շտկեց ու կոկկեց:

— Բայց ի՞նչ պիտի ըսեն դուրսը, մարդիկ, գիւղացիները, բարեկամ իշխանները: Պիտի չըսեն թէ դուրսը ինկած աղջիկ է, երեսի ջուր չունի:

— Ո՞վ կը համարձակի մելիքի աղջկան այդպիսի խօսք նետել. մելիքը ինչ որ ընէ՝ միշտ լաւ է, միշտ իրաւունք ունի. պիտի ըսեն թէ ասոր մէջ խորհուրդ մը կայ, ինչք մը կայ: Ծովինար, հոգ մի՛ ըներ, Գայիանէ շատերուն խելքը պիտի տանի:

Գուրդէն երբեք չխօսեցաւ, բայց հաճոյք զգաց տեսնելով մելիքի աղջիկը առնական տարազով, գիտէր թէ ինչ սիրտ կար անոր կուրծքին տակ. գիտէր թէ իսկապէս փոքրիկ ամազոն մ'էր Գայիանէ:

Աւան իր գլխէն հանեց նորածին ուլիկի մորթէ շինուած բարբախը եւ անցուց աղջկան գլուխը. մազերն երկար էին, դուրս մնացին. քիչ մը անյարմար եկաւ գըլխանոցը:

— Գիտե՞ս ինչ կ'ընեմ հայրիկ, ըսաւ աղջիկը, շատ երկար մազեր ունիմ, քիչ մը կը յապաւեմ, աւելի աղուոր կը տեսնուին:

— Դուն խելացի ես, գիտցածդ ըրէ, թող դուրսն ինչ կ'ուզեն տրտան:

Այդ պահուն տանուտէր Գիսակ Կատարին ձեռքէն բռնած եկաւ մելիքին տունը: Երբ Գայիանէն տեսաւ, ետ ետ զնաց եւ համակրելի զարմանքով նայեցաւ անոր վերէն վար հասակը չափեց լայն բացած աչքերով:

— Ապրի՛ս, կը վայելէ, կը վայելէ Գայիանէ: Աչ-

խարհիս մէջ մէկ Արցախ կայ եւ մէկ Գայիանէ: Ապրին քեզ լոյսին բերողները:

— Հայրիկ, ես ալ մանչու զգեստ հագուիմ, աղաչեց Կատար:

— Ձէ, աղջիկս, երէկ հարս ու փեսայ պարեցիք, այսօր մէկ տան մէջ երկու փեսայ չ'ըլլար: Գայիանէն արեւ կ'ըլլայ, դուն անոր քով ոսկի ամպ. Գայիանէն կարկուտ կ'ըլլայ, դուն անոր քով հեղիկ անձրեւ. դուն անոր հողիին սպիտակ շուքը պիտի ըլլաս:

Կատար չզնդեց, գիտէր թէ մելիքի աղջկան քով ինքը փափուկ եղնիկ մ'էր, քաջ էր երբ Գայիանէն քովն էր, տերեւի պէս կը դողար երբ մի՛նակ էր: Յետոյ երկու դրեթէ հասած եղբայրներ ունէր, անոնք ամօթ պիտի զգային տան մը շուքը վեր բռնելու:

— Այսօր իշխանութեանս առաջին փորձը պիտի ընեմ, ըսաւ Գայիանէ. Գուրդէն, Կատար, առնենք մեր զէնքերն ու քիչ մը վեր բարձրանանք:

— Միտքդ ի՞նչ է, աղջիկս, հարցուց Աւան:

— Երբեմն երբեմն պէտք է երեւնալ թաթար հովիւներուն եւ հրացան մը պայթեցնել որ չմոռնան թէ այս երկիրը պահապան շուներ ունի:

— Քաւ լիցի, պահապան առիւծներ ըսէ, վրայ բերաւ Գիսակ:

Երեքը դուրս ելան, գիւղացի կիներ զարմանքով դիտեցին Գայիանէն իր առնական հագուստներուն մէջ:

— Է՛հ, զարմանալու բան չէ, ըսաւ պառաւ մը, աս աղջիկն այսպէս է:

— Մանչ պէտք էր ըլլալ. ըսաւ ուրիշ մը:

— Թող ծիրանի գօտիին տակէն անցնի, մանչու կը փոխուի, պատասխանեց երիտասարդ հարս մը:

Գայիանէ ստէպ կ'անցնէր Սուսամբար անունով

պառաւի մը տան առջեւէն: Սուսամբար բախտ կը գու-
շակէր, բոլորն ալ կը հաւատային անոր գուշակութիւն-
ներուն. ոմանց եղունգին վրայ կը կարգար, ուրիշնե-
րու աչքերուն մէջ կը կարգար. կամ մազին մէջ հատիկ-
ներ նետելով կը շարժէր եւ անոնց շարուելը տեսնելով
գուշակութիւններ կ'ընէր: Շատ կիներ կու գային ի-
րենց ցաւերուն դարման խնդրելու: Երբ Գայիանէ եւ
միւսներն իր դրան առջեւ հասան, պառաւը սեմին վը-
րայ նստած էր:

— Կեցիր աղջիկս, ըսաւ Գայիանէին, մէյ մը բախ-
տիդ նայիմ:

— Մամի ես այդ պարապ բաներուն չեմ հաւատար,
սուտ բաներ են:

— Մի՛ ըսեր աղջիկս, դեռ ամիս մը չկայ Հոռոմենց
հարսին ըսի թէ մանչ պիտի ունենաս, եւ այսպէս եղաւ:
Մեր դրացիին կովը կորսուած էր եւ ես դայերուն բե-
րանը կապեցի ու կովը անվնաս տուն դարձաւ: Մէյ մը
նայիմ, բան չեմ ուզեր:

— Շատ լաւ, նայէ, բայց լաւ բաներ պիտի ըսես:

— Ի՛նչ աջ բթամատիդ եղունգը:

Աղջիկն երկարեց իր աջը: Պառաւը նայեցաւ ու խոր-
հրդաւոր կերպարանք առաւ. դարձուց ասդին անդին,
աչքերը սեւեռեց. կարծես վրան դադտնի ցնցում ե-
կաւ.

— Կը տեսնե՛մ, կը տեսնե՛մ, պոռայ յուզուած:

— Ի՞նչ կը տեսնես, հարցուց Գայիանէ խոռոված:

— Կը տեսնեմ գեղեցիկ ծիրանի դօտի մը եւ աղջ-
նակ մը որ թեւերը բացած կը վազէ դէպի լոյսէ կա-
մարը. ահա հասաւ, ահա տակէն անցաւ, գեղեցիկ երի-
տասարդի մը փոխուեցաւ:

— Սուտ բան է, ըսաւ Գուրգէն. երթանք, պառաւի

խօսքեր են. ե՞րբ ծիրանի դօտին տակէն անցնելով,
մանչն աղջիկ դարձեր է, կամ աղջիկը մանչ. սուտ բան
է Գայիանէ, երթանք:

Քաշեց անոր թեւէն եւ հեռացան. բայց Գայիանէի
սրտին մէջ բան մը մնաց. կասկած մը, թերեւս ճիշտ
ըլլար, շատ լսած էր այդ բանը, կ'ըսեն թէ ժամանա-
կին իրեն պէս աղջնակ մը մանչ դարձեր է:

Ելան դիւզի վերեւի բարձունքը. օդը շատ հաճելի
էր: Երկուքը հրացան ունէին. Կատար բան մը չուէր
ձեռքին մէջ: Հեռուն, շատ հեռուն ոչխարներու հօտեր
կը տեսնուէին. անշուշտ մեկիքի անասուններն էին:

Գայիանէ նայեցաւ իր հրացանին. կոթը գետին
դրած կոթնեցաւ, դիտեց տեսարանը, մտածկոտ մնաց.
Ի՞նչ եկաւ միտքը, դիտեց հեռուն, վարը Արցախի ան-
սահման դաշտագետինները, յետոյ նայեցաւ դէպի Տի-
գակ լեռը եւ խոշոր շունչ մը քաշելով ըսաւ.

— Աշխարհ, աշխարհ որ մերն ես եւ մերը չես:

— Ինչո՞ւ մերը չէ, հարցուց Գուրգէն. փառք Աս-
տուծոյ հայրիկիդ հովանին կայ այս լեռներուն, այս
դաշտերուն վրայ:

— Այո՛, հովանին կայ, բայց մշուշի պէս նուրբ եւ
թեթեւ, որ փոքրիկ հով մը կրնայ ցրուել: Նայէ ինչ կը
խորհրմ Գուրգէն. մէկ ու կէս տարի կայ, հոս՝ այս քա-
րին վրայ նստած էր Ստեփան Շահումեանը, Կատար
լաւ կը յիշէ, նստած էր եւ աչքերը չէին բաժնուիր այս
սքանչելի տեսարաններէն: Սիրտը յուզուած էր: Ինքն
ալ ըսաւ. գեղեցիկ աշխարհ մ'ունինք եւ մերը չէ: Վեց
ամիս անցաւ եւ լուր մը չեկաւ Հալիճորէն:

— Եթէ վատ լուր մ'ըլլար, ըսաւ Գուրգէն, կայ-
ծակի արագութեամբ կը հասնէր: Երջակայ թուրք, թա-

Թար եւ սարսիկ կամ չեչէն հերոս կը դառնային. նայէ սմբեր կեցեր են :

— Թող այդպէս ըլլայ, թող այդպէս ըլլայ, պատասխանեց Գայիանէ. լաւ լուրերով ապրինք, լաւ օրերու սպասենք :

Քիչ վերջ յանկարծ թաթար մը տեսնուեցաւ. հոս վիւր կերպարանք չունէր. ձեռքին մէջ ուրորած թուղթ մը կար. համարձակ մօտեցաւ. բայց երբ Գայիանէն տեսաւ, զեղեցիկ հագուած սիրուն ասպետի մը նման, բերանը բաց նայեցաւ :

— Ան մարդը պիտի ըլլայ, ըսաւ ինքնիրեն : Տիգրակէն անդին բերնէ բերան անցած էր Ստեփանի անունը :

— Տէր իմ, ըսաւ աղաչական, ես պատգամաւոր եմ, ահա կնքուած թուղթը, մեր բեկերը տունին մելիք Աւանի համար :

— Ի՞նչ գրուած է մէջը, հարցուց Գայիանէ :

— Ես կարդալ չեմ գիտեր, Ալլահը վկայ, չեմ գիտեր թէ ինչ գրուած է :

Գայիանէ առաւ թուղթը, բացաւ եւ կարդաց : Աւան կղբայր, Արսլան բեկը մեռաւ. կը հրաւիրենք որ թաղումին ներկայ ըլլաս :

— Դուք մահ ունեցեր էք, ըսաւ Գայիանէ :

— Այո՛, Արսլան բեկը մեռաւ, հերոս մարդ էր :

— Շատ լաւ ըրեր է, պատասխանեց Կատար :

Թաթարն ապշած աղջկան երեսը նայեցաւ :

— Ի՞նչպէս թէ լաւ ըրաւ, հարցուց քիչ մը սրտնեղած :

— Այո՛, սուրբ բեկ էր. կեանքին մէջ լաւ ըրաւ եւ հիմա Մահմէտին ծոցը գնաց :

— Յետոյ, վրայ բերաւ Գայիանէ, իր հարստութիւնն ալ ձեզի ձգեց :

— Այո՛, սուրբ մարդ էր, Ղուրանը դոց գիտէր, բայց իր հարստութիւնը, բանակ մը տղայ ունի, անոնց ձգեց, ես ծառայ եմ, ծառայ կը մնամ :

— Իջիր վար, ըսաւ Գուրգէն, մելիքը տունն է. իջիր, մի՛ վախնար, այս ասպետները, ցոյց տալով Գայիանէն, թի՛ք քաջ են եւ թէ արդար, անմեղ արիւն չեն թափեր :

Թաթարը ծուռ ծուռ նայելով երիտասարդ ասպետին, կամացուկ մը վար սահեցաւ :

— Գուրգէն հատ մը քաշենք, թող լսէ պայթիւնը, այս երեկոյ Տիգրակէն անդին բոլոր թաթար ցեղեր ու քոչուորներ վրաններու տակ առասպելական ասպետներուն վրայ կը խօսին, ըսաւ Կատար :

Հրացանը դէպի ձորերը պայթեցաւ եւ թաթարը բնագլով ետ նայեցաւ ու ջանաց թուփերուն ետեւ անցնիլ : Երեքն ալ ուժով խնդացին :

Բայց Գայիանէի աչքերը հորիզոնէն չէին բաժնուեր. կարծես հեռուն մէկուն կը սպասէր, այդ մէկը չէր գար, եւ աղջիկը մտահոգ էր :

— Գիտես, Գուրգէն, ի՞նչ կը խորհիմ :

— Ըսէ Գայիանէ, պատասխանեց երիտասարդը :

— Կը խորհիմ Հալիձոր երթալ, ես շատ մտահոգ եմ. տարիէն աւելի եղաւ որ Ստեփան մեկնած է եւ տակաւին լուր մը չեկաւ. գիտե՞ս թէ մեր կեանքը քիչ մը այդ պատերազմէն կախում ունի :

— Քիչ մը չէ, ես կը կարծեմ թէ շատ կախում ունի, ըսաւ Գուրգէն : Իմ հայրիկս ալ մտահոգ է, մարդիկ չարացեր են, այլազգիներ մեղ շրջապատեր են, վա՛յ եթէ Հալիձորը գլուխը խոնարհեցնէ, Աւետարանոց բերդը դայերու որջ կը դառնայ :

— Ես ալ կու գամ, ըսաւ Կատար :

— Կամաց, պատասխանեց Գուրգէն, ծովը չտեսած լուղորդ մի՛ դառնար. հեռու աշխարհ է, ճամբաները վտանգաւոր են, ամէն քայլափոխիդ թաթար, պարսիկ կամ լեզիկ վրաններու կը հանդիպիս:

— Ուրեմն Սիւնիքի սարերուն վրայ հայ քրիստոնեայ բնակիչ բնաւ չկա՞յ:

— Կան, շատ կան Կատար, բայց օձը վախնալիք է, ոչ թէ ազնիւ մարդը:

— Երբ Գայիանէ քովս է, ես մարդէ չեմ վախնար, ըսաւ Կատար: Գուն ալ կու գաս, քանի մը քաջեր ալ կ'առնենք ու փոքրիկ հայկական վաշտ մը կը ձեւացնենք:

— Եթէ մեկիքը հրաման տայ, ըսաւ Գուրգէն, ես չեմ կարծեր, վտանգները շատ են:

— Վտանգ ամէն տեղ կայ, եւ ով որ վտանգ չի սիրեր, վտանգէն չի դիտեր ազատիլ, ըսաւ Գայիանէ: Հայրս ես կը համոզեմ, յետոյ ես ա'լ իշխանուհի եմ, մէջքիս կամար եւ դաշոյն ունիմ, միայն աղուամաղ պէխեր կը պակսին: Հայրս զիս ամազոն կը կոչէ: Բայց ի՞նչ բսել է ամազոն:

— Ամազոն կարծեմ աղջիկ զիւցազն կը նշանակէ, պատասխանեց Գուրգէն:

— Եթէ զիւցազն եմ, ինչէ՞ն պիտի վախնամ: Վար իջնենք եւ խորհինք մեր ընելիքի մասին:

Շարաթ մը Հալիճորի մասին չխօսեցան: Գայիանէ բոլորովին լուս մնաց եւ ահնարի մ'իսկ չըբաւ իր հօրը: Թերեւս յոյս ունէր թէ բարի մէկը բարի լուր մը բերէր:

— Գուրգէն, ինչո՞ւ Գայիանէն բոլորովին լռեց, արդեօք զղջա՞ց իր դադափարի մասին, հարցուց Կատար իր եղբորը:

— Ով զիտէ ինչ սատանայական հնարքներ կը խոր-

հի, պատասխանեց Գուրգէն: Այդ աղջիկը միաքը դրածն անպայման կը կատարէ:

Անոնք չէին դիտեր թէ Գայիանէ ինչ մտքերու վըրայ էր: Կ'ուզէր Հալիճոր երթալ, բայց ոչ աղջիկ, այլ մանչ փոխուած. իրեն համար մղձաւանջ մ'եղած էր աղջիկէն մանչ դառնալու փափաքը: Տարօրինակ հողերանութիւն՝ որ քիչ կը պատահի մարդկութեան մէջ, բայց Գայիանէ այդպէս էր: Ձէնքերու հետ խաղալ, բեկերը խաբել, սարէ սար անցնիլ ամէն օր՝ զինքն հոգեպէս փոխած էին, ալ տան աղջիկ չէր, խոհանոցի կամ կարի համար չէր ծնած. նա ամազոն էր, զէնքի մարդ էր:

— Հալիճոր երթալ, իմ երջանիկ օրս պիտի ըլլայ, կ'ըսէր ինքնիրեն, բայց ինչ լաւ պիտի ըլլար եթէ հրաշքով մանչ փոխուէի:

Միտքն եկաւ հարցուկ պառաւը, նա իր եղունքը նայած էր, մէջը կարգացած էր թէ օր մը ծիածանի տակէն անցնելով մանչու պիտի փոխուէր: Պառան ինչ դիտէր թէ ինքը այդ փափաքն ունէր, ուրեմն խորհըրդաւոր բան մը կար իր եղունքին մէջ, բնութիւնը դադոնի ոյժ մը դրած էր իր մէջ: Մտածեց եւ մտածեց ու ըսաւ.

— Դիւրին բան է ծիրանի գօտիին տակէն անցնիլը, ես եղնիկի պէս կրնամ վազել եւ մէկ վայրկեանէն միւս կողմ անցնիլ:

Գայիանէ որքան քաջ եւ բարի էր, այնքան դիւրահաւատ եւ միամիտ էր. շուտով կը հաւատար պառաներու խօսքերուն, եւ այդ ժամանակ շատ կային հարցուկներ, բախտ նայողներ ու խաբերաներ:

— Մայրիկ ե՞րբ անձրեւ պիտի գայ, յաճախ կը հարցնէր իր մօրը:

— Բաւական ատեն է որ չորութիւն կը տիրէ, դաշտերն ալ պէտք ունին անձրեւի, կ'ըսէր մայրը: Երբ Տիգրակի վրայ սեւ սեւ ամպեր տեսնես անպայման անձրեւ կու գայ. մեր ջուրը լեռնէն կու գայ:

Գայիանէ շարաթէն աւելի կամ բերդին աշտարակներուն վրայ կը բարձրանար, կամ տան պատուհանէն դէպի Տիգրակ լեռը կը դիտէր:

— Մայրիկ ծիրանի գօտին ե՞րբ կը տեսնուի լեռան վրայ, կը հարցնէր իր մօրը:

— Երբ անձրեւ գայ, աս ալ չե՞ս դիտեր:

— Գիտեմ մայրիկ, դիտեմ, բայց կ'ուզեմ որ շուտ անձրեւ գայ:

Կիրակի առաւօտ մը օդը պայծառ էր, գիւղացիները փողոցներու մէջ կ'աղմկէին, ինչ ինչ տուներ լուացքը դուրս ձգած էին. բայց ահա սեւ ամպ տեսնուեցաւ Տիգրակի ամէնէն բարձր գագաթին, յետոյ ամպերը շատցան, կէսօրուան մօտ դռնաց երկինքը, միջեց ամբողջ կապոյտը եւ հեղեղանման անձրեւ մը սկսաւ, պառաւները խաչերկաթը դռնէն դուրս դրին, որ Աստուած կարկուտ չհասցնէ: Լեռնային արահետներէն, ճամբաներէն սոսկալի հեղեղներ պղտոր ալիքներով վար սկսան վազել: Քիչ տեւեց անձրեւը եւ ապա բացուեցաւ կապոյտ երկինք մը: Հիանալի ծիածան մը բռնեց գիւղին վրայ, եօթը պայծառ գոյներով. ցած կախուած, կարծես կարելի էր ձեռքով կամարին դպչիլ: Գայիանէ խեղճ տունէն դուրս թռաւ եւ արագօրէն բարձրացաւ գիւղին վերեւ. ոչ ոք նկատեց. դիտէին թէ նա սարերէն չէր բաժնուեր: Աղջիկը թեւերը պարզած հասաւ գիւղին գլուխը. ծիածանը կարծես աւելի մօտեցաւ:

— Քիչ մնաց, քիչ մնաց, ըսաւ ինքնիրեն եւ աւելի առաջ գնաց, բայց ծիածանը արդէն ձորին վրայ ան-

ցեր էր. նորէն վազեց, որ կանխէ երկնային երեւոյթը դեռ աւելի հեռուն չգացած: Յանկարծ իր գլխուն վրայ տեսաւ ծիածանը, կարծեց թէ կամարին միւս կողմ անցեր է: Անգամ մը ձեռքը վերի շրթներուն տարաւ, արդեօք աղուամագեր բուսած էին. ո՛չ, նոյն կարմիր խնձորի պէս փայլուն եւ ողորկ երեսն էր: Կանգ առաւ, խոշոր շունչ մը քաշեց եւ ծիրանի գօտին արդէն սկսեր էր նուաղիլ: Նայեցաւ անոր ետեւէն, գրեթէ լացաւ որ չկրցաւ իր նպատակին հասնիլ. հաղիւ ինքնիրեն եկաւ եւ բարկացոտ դռչեց.

— Խարերայ պառաւ, դիւ խայտառակեցիր, սուտ խօսեցար: Բայց ես ալ ինչ յիմար աղջիկ եմ որ հաւատացի անոր սուտերուն:

Տրտում նայեցաւ Տիգրակ լեռան, դաշտերուն եւ ձորերուն, նայեցաւ ինքնիրեն, նա աղջիկ էր ինչպէս առաջ. ամօթէն մարդու բան չըսաւ: Յետոյ ճամբաներէն վար իջաւ:

Գուրգէն եւ Կատար իրենց տունն էին:

— Ո՞ւր գացեր էիր Գայիանէ, հարցուց Կատար:

— Ա՛խ, այնքան սիրեցի ծիրանի գօտին որ վեր ելայ, լաւ տեսնելու, դպչելու եւ համբուրելու եթէ կարելի էր. բայց նա գեղեցիկ երազի պէս անցաւ գնաց աչքերէս:

— Ծարաթէն աւելի է որ Հալիձորի մասին բան մը չըսիր, կարծեմ հրաժարեցար այդ ծրագրիցն, ըսաւ Գուրգէն:

— Ո՛չ, ամէն օր յոյս մ'ունէի թէ բարի լուր մը կը հասնէր, պատասխանեց Գայիանէ:

— Ես անորոջ լուրեր լսեցի, ըսաւ Գուրգէն, բայց ըսի ըսուներ են:

— Ըսէ, ըսէ, Ի՞նչ լսեցիր, հողիդ սիրես, Ի՞նչ լսեցիր, խնդրեց Գայիանէ :

— Իբր թէ Օսմանցիները բոլորովին պարտուած Նախնիներէն քաշուեր են, Ղափանը բոլորովին մաքրեր են թուրք, թաթար, լեզլի, պարսիկ ցեղերէ եւ փոքրիկ տէրութիւն մը հիմներ են Գաւիթ բեկի իշխանութեան տակ :

— Աստուած ըսածներդ հաստատէ, ըսաւ Գայիանէ : Ալ պէտք չենք սպասել : Ի՞նչ ըսեմ հայրս համոզելու համար :

— Հեռուները աղբականներ չունի՞ս :

— Ունիմ, քեռիներս կան, բայց անոնք Գուգարք կը բնակին :

— Ուրի՞չ :

— Հօրաքոյրս կայ, ան ալ Խաչենի մեկիքին հետ ամուսնացեր է :

— Շատ լաւ, ըսէ թէ կարօտցեր ես հօրքուրիդ եւ կ'ուզես տեսութեան երթալ :

— Լաւ խորհեցար, անկից մինչեւ Հալիճոր արդեօք շատ հեռո՞ւ է :

— Ո՛չ, կէս ճամբան է :

— Շատ լաւ, ճիշտ ժամանակն ալ է, կ'ըսեմ թէ այս տարի Վարդավառի տօնը հօրքուրիս քով կ'ուզեմ անցընել :

Գայիանէ խօսքէն դործի անցաւ, հայրը մետաքսէ բարձի մը վրայ ընկողմանած համբիւն կը դարձնէր, Գիսակն ալ քովն էր եւ պարապ բաներու վրայ կը խօսէին :

— Հայրիկ, ներս վազեց Գայիանէ, գրեթէ դուրսէն կանչելով :

— Ի՞նչ կայ աղջիկս :

— Խնդրանք մ'ունիմ, բայց չէ պիտի չըսես :

— Ի՞նչ կը փափաքիս :

— Այո՛ ըսէ, որ սիրտս բանամ :

— Ի՞նչ, ամուսնութեան հա՞րց է որ սիրտդ պիտի բանաս :

— Ո՛չ, մտքէս ալ չէ անցած. հօրքուրիս շատ կարօտցեր եմ, թոյլ տուր այս տարի Վարդավառն երթամ իրեն մօտ ընեմ : Գուրգէնը, Կատարը, եթէ կ'ուզես ուրիշ երկու զինեալներ ալ թող հետս զան որ ապահով երթանք :

— Գիսակ աղբեր, Ի՞նչպէս կ'ընանք մերժել այս աղջկան :

— Ըստ իս՝ թող երթան, աշխարհ կը տեսնեն, բան կը լսեն, փորձառու կ'ըլլան, շարժող մարդը միշտ կենսունակ կ'ըլլայ, նստողը կը փտի :

— Ես ալ շատ կը փափաքէի քոջս մօտ երթալ, կարօտցեր եմ, բայց ինչ ընեմ, ցանքի ժամանակ է, ոչխարները կը ծնին, տան դործերը հիմա շատ են, կարելի չէ դործէն հեռանալ, տիրոջ աչքը պէտք է միշտ հսկէ իր ունեցած չունեցածին վրայ :

— Որքան ժամանակ է որ հօրքուրդ չես տեսած, հարցուց Գիսակ Գայիանէին :

— Է՛հ, կարծեմ հինգ տարիէն աւելի է, պատասխանեց աղջիկը :

— Այն ատեն մէկ մատի չափ էիր. հիմա եղեւին դարձեր ես. թող հօրքուրդ ալ քիչ մը քեզ վայելէ, ըսաւ Գիսակ :

— Լաւ, մօրդ ըսէ եւ կամաց կամաց պատրաստուէ որ մեկնիս, ես վախ չունիմ խելացի եւ քաջ ես, ըսաւ հայրը :

Գայիանէ ուրախութեամբ վազեց իր մօրը .

— Նանի շուտ պատրաստութիւն տես, հօրքուրիս այցելութեան պիտի երթամ:

— Ի՞նչ կ'ըսես աղջիկս, ճամբաները վտանգաւոր են, դուն միեակ էս, հողիս կը քաղուի:

Քեզ ի՞նչպէս մինակ սարերը ձգեմ:

— Մինակ չեմ Նանի, Կատարը, Գուրդէնը եւ քանի մը երիտասարդներ ալ հետս պիտի գան: Մի՛ վախեր, նանի, հողիս. Գայիանէն սատանայէն ալ վախ չունի: Զինուած կ'երթանք: Հայրիկս արդէն հրաման տուաւ:

Պատրաստութիւնները շուտով տեսնուեցան եւ շաբաթ մը չանցած՝ հինգ հողինոց խմբակը ճամբայ ելաւ: Գայիանէի մայրը լացաւ:

— Ողջամբ երթաս, ողջամբ դառնաս, Տէրը հետդ ըլլայ, վարդերու վրայ կոխելով անցնիս:

— Քրոջս համբոյրներ, ըսաւ Աւան, մենք ողջ ենք, թող ողջ ըլլայ:

Առաւօտ էր, արեւծագին ձիաւոր խմբակը կտրեց Աւետարանոց գիւղի հարաւային ճամբան:

— Միշտ գէպի լեռները դացէք, հայ գիւղեր գիշերեցէք: Երբ Սեւանայ լիճն հասնիք, արեւելեան կողմէն գնացէք, արեւմուտքը կրնայ վտանգաւոր ըլլալ: Զգոյշ եղէք թաթար գիւղերէ, հայ բարի մարդերուն հարցուցէք ճամբան: Աստուած հետերնիդ ըլլայ, ըսաւ Աւան եւ աչքերը սրբեց:

Գիտակ ալ համբուրեց իր զաւակները. նա վախ չունէր թէ ապահով թաչէն կը հասնին. բացի Կատարէն չորսն ալ քաջ էին:

Պումբը արդէն անցաւ բլուրներու ետեւ եւ Գայիանէ իր լաւ ձիուն վրայ կարծես նստած չէր, այլ օդէն կը թռչէր:

Երբ մեկնողներն հեռացան, Ծովինար խոր հեծկըլ-

տուք մ'ունեցաւ, գլուխը տան սիւնին դրած տղու պէս լացաւ եւ յանկարծ ըմբոստացաւ իր դէմ, ամուսինին դէմ, սեւ ճակատազրին դէմ:

— Անդու՞ մարդ, պոռաց Աւանի երեսին, անգու՞թ մարդ, մէկ զաւակ ունէինք եւ ան ալ սեւ բախտին յանձնեցիր: Հիմա պիտի երթանք գերեզմա՞նը պիտի փընտուենք թէ երկուքս ալ հողը պիտի մտնենք: Խելք կա՞ր ըրածիդ մէջ, Գայիանէ դեռ խելահաս չէ, դեռ չի գիտեր թէ աշխարհիս մէջ չարութիւնն անմեղներուն ետեւէն կը քալէ:

Խեղճ աղջիկս, խեղճ աղջիկս, երեսդ պագնելով ընդունիմ քեզ:

— Մի՛ լար, Ծովինար, պատասխանեց Աւան, մայրական սիրտդ կը խօսի, գիտեմ մօր զգացումները սըրտէն կու գան, բայց ես ալ հայր եմ, ես ալ սիրտ ունիմ, յաղթեցի զգացումներուս և թոյլ տուի որ մեկնի, կեանքը շարժում է, փորձառութիւն է, Գիսակը լաւ ըսաւ: Վստահ եղիր որ պիտի դրկես աղջիկդ, ոչ Աւետարանոց գիւղի Գայիանէն, այլ աղջիկ զօրավար մը:

— Քրոջդ տան մէջ՞ զօրավարութիւն պիտի սորվի:

— Ո՛չ, Սիւնիքի ժայռերուն վրայ, մութ ձորերուն մէջ, զարանակալ թշնամիներու հետքերուն վրայ, հրացանի որոտումին մէջ:

— Ես ալ վստահ եմ, տիկին Ծովինար, ըսաւ Գիսակ, ես ալ երկու սիրտ միասին ճամբեցի, երբեք վախ չունիմ, ապահով եմ որ ողջ առողջ պիտի վերադառնան:

— Ես Գանձասար վանքը ուխտի կ'երթամ, կը խընդրեմ, կը պաղատիմ Աստուածամօր որ բոլորն ալ մեր գերկը դարձնէ:

— Գնա՛, չըջ Արցախի բոլոր վանքերը, ոչխա՞ր

կ'ուզես, ա'ռ եւ մատաղ ըրէ, համբուրէ սուրբերու պատկերները, միայն թող սիրտդ հանդարտի. հոգիդ հովանայ, լոյս իջնէ աչքերուդ մէջ:

Մովինար պատասխան չտուաւ եւ առանց աչքերը սրբելու գնաց ներս, ծածուկ աւելի լալու համար:

Բայց Գայիանէի խումբը ուրախ առաջ կ'երթար, ոչ մէկը խորհեցաւ թէ տան մէջ մայրեր ձգեցին արցունքն աչքերնուն մէջ:

Տակաւին Մելիքի հոգերուն մէջն էին, ապահով տեղեր եւ քրիստոնեայ մարդիկ. մանաւանդ երբ կը լսէին թէ մելիք Աւանի անունով կը ճամբորդէին՝ իրարու հետ կը մրցէին գիրենք հիւր ընդունելու համար:

Ամէնէն աւելի սիրտ կը գրաւէր անպէս, մաքուր հազուած եւ գեղեցիկ ասպետը. ոչ ոք տարակոյսի ձայն հանեց:

— Անշուշտ Մելիքին մանչն է, կ'ըսէին իրարու:

— Մելիքի մանչն ալ այդպէս կ'ըլլայ խնձորի պէս կարմիր ու գեղեցիկ, ոչ թէ մեզի պէս ձեռքերուն վրայ կոշտ կապած, յօնքերն հողով լեցուն կոշտ գիւղացիներ, ըսին ուրիշներ:

Լեռնային շրջան մը պէտք էին կտրել: Ճամբաները արահետներ էին, որոնք ձմեռն անանցանելի կը դառնային եւ ամառը ծաղիկներով կը զարդարուէին:

Որք ձորերու մէջ, լեռներու լանջերուն վրայ ցածկեկ տուներով գիւղերը փռուած էին, կեսնք կար, բազմաթիւ նախիրներ եւ ոչխարներու հօտեր բռնած էին ամէն կողմ:

— Շատ սիրեցի այս ճամբորդութիւնը, ըսաւ Գայիանէ. նայեցէք սա գիմացի լեռները կարծես սուր դասակներ ըլլան ցրուած երկինքի դէմ:

— Իսկ այդ խոր ձորին մէջ ցրուած գիւղերը, կար-

ծես մարգարիտներ ըլլան խիտ կանաչին մէջ, վրայ բերաւ Գուրգէն:

— Այս գիշեր մենք ո՞ւր պիտի իջեանինք, հարցուց Կատար:

— Հոն ուր եկեղեցիի մը դմբէթը տեսնենք, պատասխանեց Գուրգէն: Յոգնեցա՞ր արդէն:

— Ո՛չ, բայց քիչ մ'անօթի եմ. բան մը չունի՞նք ուտելու համար, ըսաւ աղջիկը:

— Հազիւ աղբիւրի մը մօտ հասնինք, հոն կանգ կ'առնենք եւ ծրարները կը բանանք: Կ'արծեմ բոլորս ալ անօթի ենք, ըսաւ Գայիանէ:

Ուսմբը կը դիմէր դէպի Սեւանայ լիճը, արեւելքէն արեւմուտք: Աւան այդպէս պատուիրած էր, բռնել լիճին արեւմտեան եզերքը, բայց սխալած էր, ճամբան շատ պիտի երկարէր:

— Բայց գիտէ՞ք, ըսաւ Գայիանէ, շատ հաճելի պիտի ըլլայ Սեւանը տեսնել, կ'ըսեն թէ Աստուծոյ հայելին է, չես գիտեր երկինքն աւելի գեղեցիկ է թէ անոր կապոյտ երեսը:

— Հարցնելով կրնանք ուզած տեղերնիս երթալ, պատասխանեց իրենց ընկերացող գիւղացիներէն մէկը որ Գեղամ կը կոչուէր: Կարծեմ թէ լճին արեւելեան ափերէն շատ հեռու չենք:

— Ահաւաստիկ վճիտ աղբիւր մը, ուրախ դոչեց Կատար: Այդիլի մը մէջէն կը բխի, հոս կենանք եւ ճաշենք:

Այդ լեռնային վայրերուն մէջ որքան թռչուններու գեղգեղանքներ կան, այնքան ալ առուակներու խոխոջներ կը լսուին. յաւիտենական երաժշտութիւն մը կը տիրէ ամէն կողմ, եւ այնքան մօտ է լեռ լեռան՝ որ կարծես լանջէ լանջ կարելի է խօսիլ:

Իջան ձիւրէն եւ աղբերակին մօտ բացին կապոյ-

ները: Աստուծոյ ամէն տուածը կար, իրենց մայրիկ-ներուն սիրտն ալ մէջն էր, ոչ մէկ բան մոռցուած էր:

Բոլորուեցան լաթէ սեղանին շուրջ, կանաչ խոտը Գայիանէի տան մետաքսէ բարձերէն աւելի կակուղ էր:

— Այս ջուրին մօտ չոր հացն ալ կարկանդակի պէս համով է, ըսաւ Գուրգէն:

Այդ պահուն վարէն վեր կը բարձրանար տարիքոտ գիւղացի մը փոքրիկի մը ձեռքէն բռնած, չհասկցան թէ հա՞յ էր, թէ թաթար. իրար խառնուած բազմաթիւ ցեղեր կ'ապրէին կողք կողքի. մէկ տարազ ունէին, բայց տարբեր լեզու եւ կրօնք:

— Հիմա կը հասկնանք, ըսաւ Գայիանէ: Գուրգէն, ինչ լաւ պիտի ըլլար բաժակ մը Դուինի գինին:

— Հայե՞ր էք, ըսաւ ծեր գիւղացին, հագիւ շունչ առնելով:

— Այո՛, քեռի, պատասխանեց կատար, Հայաստանի մէջ հայեր կ'ըլլան, ոչ թէ ուրիշ խառնակ ցեղեր:

— Է՛հ, ժամանակին այո՛, բայց հիմա շունէն աւելի այլազգիներ կան, ըսաւ գիւղացին: Դուք կ'երեւի այս տեղերուն ծանօթ չէք:

— Մենք Արցախի Աւետարանոց բերդէն կու գանք, պատասխանեց Գուրգէն: Լսա՞ծ ես այդ բերդին անունը:

— Լսեր եմ, ինչպէս չէ. հոն մեծ մելիք մը կը նստի, Աստուած թշնամի չանցընէ իր գլխուն վրայէն, կ'ըսեն թէ շատ հարուստ է, շատ գինուոր ունի եւ ողորմած մարդ է. վերջապէս կատարեալ հայ է եւ քրիստոնեայ:

— Քեռի, եկուր մեզի հետ նստէ եւ բան մը կեր, մանչուկդ ալ անօթի պէտք է ըլլայ, ըսաւ Գայիանէ:

Գիւղացին նստեցաւ խոմբին մէջ, այդ տեղերուն մէջ հացի հրաւէրը չընդունիլ՝ մեծ նախատինք է. հացն

Աստուծոյ պարգեւն է եւ ամէն մարդ կրնայ բաժին մը առնել:

Գայիանէ հաւի պուտ մ'առաւ եւ հացին մէջ փաթ-թելով մանչուկին տուաւ, պատանին անոյշ աչքերով նայեցաւ, այդ էր իր շնորհակալութիւնը եւ ամօթէն անկիւն մը քաջուած՝ սկսաւ խածնել եւ ուտել:

— Քեռի, հարցուց Գեղամ, այս կողմերը ի՞նչպէս են, խաղա՞ղ են, մարդ մարդու բարեկա՞մ է, կը յար-դէ՞:

— Խաղաղ ըսենք, խաղաղ ըլլայ: Հայ եւ այլազգի հովիւներու մէջ յաճախ կռիւներ կը ծագին, բայց տեղական բաներ են, մենք մէկ աչքի տեղ տասը հատ կը հանենք, ասիկա լաւ գիտեն եւ կը զգուշանան մեր կողմերը դալու:

— Լսեր ենք թէ Հալիճոր անունով բերդ մը կայ Ղափանի կողմերը, հոն բուռ մը հայեր Սուլթանի բանակը քշեր են եւ տէրութիւն հիմներ են: Ո՞վ է այդ Դաւիթ բեկը, դուն գինքը տեսե՞ր ես, լսե՞ր ես իր մասին, հարցուց Գայիանէ:

— Այո՛, լսեր եմ, այս տեղերէն ալ կամաւորներ գացին: Ճիշտ է, Սուլթանին երեսին շառաչուն ապտակ մը տուին. տէր եղան Ղափանի, բայց մեր հայերը ամանը լաւ կը շինեն, յետոյ կը կոտորեն:

— Ի՞նչ ըսել կ'ուզես, հարցուց Գայիանէ քիչ մը խռոված:

— Ի՛նչ պիտի ըլլայ, եղան դաւաճան մելիքներ, եղան դասալիք գինուորներ: Քչեցին Թուրքը, եւ հիմա կ'ըսեն թէ իրարու մէջ համաձայն չեն, եթէ սուտ կ'ըսեմ թող երկիրքէն գլխուս քար իյնայ, այսպէս լսեր եմ: Դաւիթ բեկին պէս մարդ չկայ աշխարհիս վրայ,

բայց յողնած մարդ է, հիւանդ է եւ զօրավարները վէճի մէջ են թէ ո՞վ պիտի յաջորդէ՝ եթէ բեկը մեռնի:

— Յուսանք թէ Դաւիթ երկար ապրի, ըսաւ Կատար, մէկ մարդ ունինք, շատ չէ այս խեղճ աղբին համար:

— Թող Աստուած պահէ, աւելցուց Գայիանէ:

— Թող Աստուած պահէ, ըսաւ Գուրգէն:

— Այո՛, թող Աստուած պահէ այդ հերոսը: Իր անունը բաւական է թուրք, թաթար եւ աճեմ սարսափեցնելու համար:

— Հալիճորը շատ հեռո՞ւ է ասկից, հարցուց Գայիանէ:

— Էհ, թերեւս մէկ շաբաթ տեւէ ճամբան, լաջն եւ հանդիստ ճանապարհներ չունինք. պէտք է լեռ ելլել եւ լեռ իջնել:

— Վտանգաւոր են ճամբաները, հարցուց Կատար:

— Առաջ սպանութիւն, կողոպուտ շատ կար, բայց հիմա այլազգիները ամբեր են, Դաւիթի շուքն իրենց վրայ ծանր նստած է: Իր աղագոյութիւնը մինչեւ այս կողմերն հասած է: Դուք Հալիճո՞ր կ'ուզէք երթալ:

— Այդպէս միտք ունինք, բայց նախ Խաչէն պիտի հանդիպինք, հոն հօրաքոյր ունիմ, Սիսեանի մեղիքի տիկինն է, ըսաւ Գայիանէ:

Գիւղացին ապշած աղջկան երեսը նայեցաւ, տեսաւ անոր մէջ միջնադարեան դեղեցիկ ասպետ մը, թարմ երեսով, կայտառ եւ դրաւիչ նայուածքով:

— Ուրեմն դուք մեղիքի մա՞նչ էք, հարցուց զարմացած, ներեցէք եթէ ձեր սեղանը նստեցայ:

— Ինչո՞ւ, ներեցէք, դուն ալ հայ քրիստոնեայ ես, այս երկրին գաւազը:

— Իշխանն իշխան է, գիւղացին գիւղացի, ազնիւ

պարոն. հրամանքիդ պէս դժուար է, բարեսիրտ իշխան գտնել:

— Անոյ՛ը ըրէ, ըսաւ Գայիանէ, այս հացը դիւղի գաւակներուն քրտինքով շաղուած է, կալ ընողը նախ ինքը պէտք է կշտանայ, յետոյ ուրիշներ:

— Արդեօք Սեւանը շատ հեռո՞ւ է ասկից, հարցուց Կատար:

— Ոչ, մէկ օր հազիւ կը տեւէ, դէպի արեւմուտք պէտք է դարնել, այս լեռներէն անդին դեռ քանի մը դապաթներ կան, յետոյ կու գան ուրիշ դապաթներ, ապա ծովակը. բայց դուք Սրբ իջէք, հայ գիւղ է, անկից կը բռնէք Մազրա գետը եւ ձորին մէջէն Սեւան կը հասնիք:

— Գիւղերը հա՞յ են թէ այլազգիներ, հարցուց Գեղամ:

— Ուր որ դմբէթ կայ՝ հայ են, ուր մինարէ կայ՝ այլազգի են. վախ չկայ, ասոնք ալ շան պէս ամբեր են: Հողին սիրեմ Դաւիթ բեկին, աշխարհիս մէջ մէկ հատիկ է:

— Աստուած արեւը պայծառ ընէ, ըսաւ Գայիանէ:

— Եւ շուքն իր երգիքէն շանցնի, վրայ բերաւ Կատար:

— Ամէն, ըսաւ գիւղացին եւ ոտքի ելաւ. երթա՛նք, տղաս, ձայնեց փոքրիկին որ միշտ հեռուէն զարմացած՝ աչքերը չէր հեռացներ Գայիանէի վրայէն:

— Դէ՛ դնանք, սրբի, ըսաւ մանչուկին:

Պզտիկը քաշելով առաջ տարաւ, նա աչքերը ետ, Գայիանէին կը նայէր մինչեւ հեռացաւ դէպի վեր:

— Մեկնինք մենք ալ, ըսաւ Գայիանէ, ուշ չմնանք հայ գիւղ մը հասնելու:

— Ուրեմն դէպի Սեւան:

— Այո՛, Կատար, դէպի Սեւան, պատասխանեց աղ-

Ղիկը. ես ալ փափաք ունիմ այդ երկնային հրաշալիքը տեսնելու :

Չարկին դէպի արեւմուտք եւ երեկոյեան դէմ հասան Սրբ գիւղը: Նախ շուները զգացին անոնց գալը, ապա երեխաները եւ գիւղը իմացաւ թէ օտարականներ եկած էին:

— Ո՞ւր կարելի է գիշեր մ'անցընել, հարցուց Գուրգէն պառաւի մը որ շալակ մը ձախ կռնակն առած՝ նեղ փողոցէ մը կ'անցնէր:

— Հայ քրիստոնեայ էք:

— Այո՛, չե՞ս հասկնար որ հայերէն կը խօսիմ:

— Է՛հ, այս տեղերը թաթարներ ալ կան որ հայերէն գիտեն եւ շատ անգամ խարելով կու գան հիւր կ'ըլլան եւ բան մը գողնալով կը փախչին:

— Ո՛չ, մենք հայ քրիստոնեայ ենք:

— Կարծեմ զինուորական էք, հրացան ունիք, սա մանչուկը ինչքան ալ զեղեցիկ է, մեր ձորի ծաղիկներուն կը նմանի: Ուսկի՞ց կու գաք, ո՞ւր կ'երթաք:

— Արցախէն կու գանք Հալիճոր երթալու համար:

— Հալիճո՞ր:

— Այո՛:

— Աստուծոյ դժոխքն է: Ա՛խ, ինչ արիւն թափեցին:

— Լաւ ըրին, թուրքի արիւն թափեցին, ըսաւ Գայիանէ:

— Է՛հ, ձեզի պէս զինուորականներու համար մարդու արիւնը հաւի արիւն է, ըսաւ պառաւը:

— Տեղ մը չե՞ս գիտեր գիշերն անցընելու համար, հարցուց Գեղամ:

— Քահանային մօտ գացէք, լաւ տուն ունի, բարի

ուսումնական մարդ է, էջմիածինը տեսած է, մեռնիմ սուրբ կարգին, մեզ շատ կը սիրէ:

Սուսմբը քիչ մ'ալ առաջ դնաց նեղ փողոցներէն եւ բազմութիւնը հետաքրքիր իրենց ետեւէն ինկաւ:

— Տէր հօր տունը ո՞րն է, հարցուց Գայիանէ:

— Հոն, Ժամին քովն է, ըսաւ երիտասարդ մը, ետեւէս եկէք ձեզ տանիմ:

Հասան քահանային տան առջեւ. սպիտակ մօրուքով վաթսուների չափ տարիքով տէր հայրը, իր բարձր հասակով դուրս ելաւ տունէն:

— Աստուած օգնական, տէր հայր, ըսին հինգն ալ միասին:

— Աստուած պահպան, բարի եկեր էք, ծառայ եմ, ի՞նչ կրնամ ընել:

— Գիշերուան համար տեղ մը կը խնդրենք:

— Ատ ալ խօսք է. եթէ ուզէիք մեկնիլ՝ թոյլ չէի տար: Սա ձիերը ամէն մէկդ իր ախոռը քաշէ եւ գարի տայ, հրամայեց քանի մը գիւղացիներու: Ներս հրամմեցէք: Սառա՛, կանչեց դէպի ներս, Աստուած հիւր դրկեց մեզի, սենեակը շտկէ որ հանդիստ ընեն:

Իրիցկիներ դուրս ելաւ, տէր հօր նման հսկայ հասակ ունէր. այդ աշխարհին մէջ միջահասակ կամ թըղուկ մարդ զեռ չէ տեսնուած, կարծես անտառներու ծառերէն օրինակ առած են կաղնիի պէս բարձրանալ:

— Ի՞նչ փառաւոր մարդ է, ըսաւ Կատար Գայիանէի աղանջէն:

— Լեռը լերան նայելով կը մեծնայ կ'ըսեն, պատասխանեց Գայիանէ, ասոնք ալ կաղնիներուն նայելով կը մեծնան:

Տէր հայրը շուտով պատրաստեց հանդիստ սենեակ

մը, բարձերը շարեցին եւ իրիցկինն ու երկու աղջիկները ձեռքերնին կուրծքերնուն՝ հրամանի սպասեցին :

— Սառա, հոգիս, ինչ որ ունինք հանէ. սեղան բեր :

— Մենք ուտելիք շատ ունինք, հայր սուրբ, ըսաւ Գուրգէն :

— Ճամբուն հացը՝ ճամբան կ'ուտեն. հոս Աստուծոյ տուածէն հաց եւ ջուր ունինք :

Բոլորեցան ցած սեղանին շուրջ, տաք թանապուրը փայտէ դգալներով կերան, յետոյ ոչխարի միս եւ մածուն բերին. համով էին, լեռնային օդը ախորժակ կը բանայ :

— Չհարցուցիք, տէր հայր, թէ ո՞վ էք, ուսկի՞ց կու գաք, ըսաւ Գայիանէ :

— Կը բաւէ որ հայ քրիստոնեայ էք, անշուշտ կարենոր գործի կ'երթաք, ի՞նչ հարցնեմ, որդի : Մեր կողմերէն չէք տեսնուիր, ձեր խօսքն ալ քիչ մը տարբեր է մեր գիւղի լեզուէն :

— Արցախի Աւետարանոց բերդէն կու գանք, Հալիձոր երթալու համար, ըսաւ Գայիանէ :

— Հալիձո՞ր, բայց ճամբան սխալեր էք, պէտք էիք հարաւ դարնել եւ Տաթևի վրայ իջնել :

— Ուղեցինք Սեւանայ լիճը տեսնել, պատասխանեց Կատար, կ'ըսեն թէ Աստուծոյ մէկ հրաշալիքն է :

— Սեւանը հեռու չէ, քիչ մը հարաւ Մաղրա գետը կայ, անոր եզերքէն շիտակ Սեւան կը հասնիք, բայց լաւ է լերան կողմէն երթաք եւ բարձրէն տեսնէք, չէք կրնար զանազանել թէ երկի՞նքն էք արդեօք թէ երկրիս վրայ :

— Հալիձորի մասին բաւական բաներ լսեցինք, բայց որո՞չ չենք գիտեր, մենք գինուորական ենք, կ'ուզենք երթալ եւ աչքով տեսնել, ըսաւ Գայիանէ :

— Հալիձո՞ր, Հալիձո՞ր, հառաչեց քահանան, եւ հրաշք եւ զարմանք, բայց Աստուած վերջը բարի ընէ :

— Ի՞նչ կայ, Տէր հայր, հարցուց Կատար :

— Ոչինչ, Դաւիթ բեկը, անշուշտ անուշը լսած էք, հիւանդ է, եթէ մեռնի՝ ամէն բան կորած է : Աստուած իր արեւը պակաս չընէ : Գացէք տեսէք. Հալիձորը բերդ չէ, արծիւներու բոյն է :

— Դուք տեսե՞ր էք Հալիձորը, հարցուց իրենց միւս ընկերը, որ Սահակ կը կոչուէր :

— Այո՛, տեսեր եմ, Տաթևն ալ տեսեր եմ, էջմիածին ալ գացեր եմ, մարդ պէտք է իր հայրենի աշխարհը տեսնէ՝ որ սիրէ : Հայաստանը դրախտի պէս գեղեցիկ է, մեղք որ այլազգիներ եկեր ու պղծեր են մեր սուրբ հողը, մե՛ղք, հազար մեղք :

— Ժամանակը կու գայ որ վայրի խոտերը արմատէն ջնջուին, ըսաւ Գուրգէն, մենք հաւատք ունինք Հալիձորի վրայ եւ ամբողջ Հայաստան Հալիձոր պիտի ըլլայ :

— Աստուած ձայնդ լսէ, բայց ես շատ յոյսեր չունիմ. մենք հանճարով կը շինենք եւ անխելքութեամբ կը քակենք :

— Անկողիները ձգեր եմ, ըսաւ Սառա իրիցկինը, սենեակ մտնելով. երիտասարդները միասին մէկ սենեակի մէջ պիտի հանդչին, իսկ այս աղջնակը աղջիկներուս քով թող պառկի :

Գայիանէ կարմրեցաւ, նեղ դրութիւն մը ստեղծուեցաւ իրեն համար, ի՞նչպէս ըսէր թէ ինքն ալ աղջիկ էր : Բայց շուտով պայծառացաւ իր երեսը, անշուշտ խելացի խորհուրդ մը միտքն ինկաւ եւ Գուրգէնին ահանջէն բան մը փսփսաց :

— Ներեցէք, Տէր հայր, այս երիտասարդը Արցախի

մելիք Աւանի զաւակն է, ցոյց տուաւ Գայիանէն, անոր պատիւն է առանձին սենեակ ունենալ. մենք Սրբեցիներու պէս գիւղացիներ ենք, խոտին վրան ալ կը քնանանք, բայց ասիկա թող մեզի յատկացուած սենեակը պառկի, մենք խոտնոցն երթանք:

— Ի՞նչ կ'ըսէ, մելիք Աւանի զաւակը: Ես ալ կ'ըսէի թէ ուրիշ պարտեզի ծաղիկ է: Հիմա կը հասկնամ թէ ինչո՞ւ այսքան նուրբ եւ գեղեցիկ է, հարկաւ մելիքի զաւակը մելիքի պէս պէտք է փափուկ պառկի: Սառա, դուն այս գիշեր հէրանցդ տունը գնա՛, ես երիտասարդներուն հետ անկիւն մը կ'երկարիմ, թող մելիքի զաւակը մեր սենեակը բռնէ:

Այդպէս ըրին եւ այդպէս քնացան բաց պատուհաններով, լեռնային չոր ու հեշտ օդին մէջ:

Տէր հայրն առաւօտեան օրհնեց զիրենք եւ մէկը տըլաւ որ առաջնորդէ մինչեւ Արեգունեաց լեռներու գաղաթները: Մօտ էին արգէն եւ կէս օր մը հաղիւ տեւեց երբ Սեւանի հարաւային մասը բացուեցաւ իրենց աչքերուն: Հրաշալի տեսարանը իրենց աչքերը հրաշքով լեցուց. նայեցան չկշտացան, նայեցան եւ յուզուեցան ինչպէս մարդ գեղեցիկ դէմք մը կը տեսնէ:

— Աստուած իջեր եւ ձեռքով այս լիճը շիներ է, ըսաւ Կատար:

— Աստղերու արցունքով լեցուած է, վրայ բերաւ Գայիանէ, մեռնիմ ստեղծողին:

— Երկար մնալու ժամանակ չունինք, ըսաւ Գուրգէն, պէտք է մեկնինք:

— Ասկից դէպի հարաւ պիտի գարնէք, նախ Մազրա գետը կու գայ, ապա թաթար գիւղեր պիտի հանդիպիք, երբ մինարէ տեսնէք՝ մի՛ կեանք, թէպէտ զին-

ուած էք ու վախ չկայ. երբ գմբէթ տեսնէք՝ կեցէք եւ օրհնեցէք:

— Մենք նախ Սիսեան գիւղը պիտի երթանք, ըսաւ Գայիանէ, հօրաքոյրս մելիքին արկին է, ապա Հալիճոր:

— Սիսեանը ճիշտ ձեր ճամբուն վրայ կ'իյնայ, ըսաւ գիւղացին, արգէն լեռնային ճամբաներով գիւղերն իրարու կապուած են, բայց հարցուցէք որ չսխալիք: Աստուած հետերնիդ ըլլայ:

Խումբը լերան լանջերէն վար իջաւ, ծովակը երբեմն կ'երեւէր, երբեմն կը կորսուէր: Անցան Մազրա գետը, ճիշտ կամուրջին հանդիպած էին. ապա առաջ երթալով անցան գիւղեր, այգիներ. տեսան ցեղեր եւ գանազան լեզուներով մարդեր:

— Ի՞նչ զարմանալի աշխարհ է, ըսաւ Կատար, կարծես թէ աշխարհիս ամէն կողմէն ազգեր եկեր հոս հաւաքուեր են:

— Երբ երկիր մը տէր չունի, գայլերն անոր տէր կ'ըլլան, պատասխանեց Գեղամ:

Երեկոյեան մօտ հասան գիւղ մը որ մինարէ ունէր, հարկ էր մէջէն անցնիլ, թաթար գիւղ էր: Գիւղացիները դռներուն առջեւ նստած համրիչ կը դարձնէին, հէքեաթ կը պատմէին: Երիտասարդներ ու տղաներ ճամբուն վրայ կեցած կոշտ կը խնդային:

— Ճամբայ տուէք, ըսաւ հայերէն Գեղամ:

— Հայերէն չեն հասկնար, Գեղամ, ըսաւ Գուրգէն:

— Թող հասկնան. ճամբայ տուէք, կրկնեց եւ ձին քշեց առաջ:

— Կեաւուր, կեցի՛ր, ըսաւ հուժկու երիտասարդ մը ձիուն սանձը բռնելով:

— Ալի՛, ասդին անցիր, ըսին թուրք ծերեր, ասոնք կառուցած մարդիկ են :

— Ասոնք Հալիճորին մէջ Մահմէտին զաւակները սպաննեցին :

— Թուրք բանակը փախաւ, դո՞ւն պիտի կեցնես զիրենք, անխելք երիտասարդ, պոռաց ծեր թաթար մը :

— Իմ եղբայրս հոն մեռաւ, ա՛խ, հաստ մը զարնէի ասոնցմէ : Սա զեղեցիկ երիտասարդը լաւ որս է :

Եւ մօտեցաւ Գալիանէի ձիուն, աղջիկը ձիուն ասպանդակ մը տուաւ եւ ձին ոստումով վեր ցատկեց : Գալիանէ քաշեց իր մէջքէն ատրճանակը եւ փողը թաթարի դէմքին բռնեց :

— Հեռացի՛ր, կը սատկեցնեմ :

Թուրք կիներ վայնասուն մը փրցուցին :

— Ալի, թո՛ղ որ անցնին, կրակին հետ մի՛ խաղար :

— Եղբորս արիւնը կ'ուզեմ, կեաւուրներ :

Գուրդէն վրայ հասաւ եւ իր հրացանի կոթով թաթարին հարուած մը տուաւ որ գնաց ու քարոտ ճամբուն վրայ փռուեցաւ : Գլուխը պատուեցաւ :

Գիւղացիները խումբին վրայ խուժեցին :

— Ալլահ, Ալլահ, զոչեցին :

— Գալիանէ, կրակէ՛, ըսաւ Գուրդէն եւ ինքն ալ քաշեց հրացանը ու ամբոխին վրայ պայթեցուց : Կատար իր եղբորը քովէն չբաժնուեցաւ : Սահակ եւ Գեղամ կրակեցին :

— Ալլահ, Ալլահ, լսուեցաւ աւելի :

— Մարիկ, ողբաց մէկը :

— Ա՛հ, լացաւ ուրիշ մը :

— Ոտքս, ոտքս կոտրեցաւ, ըսաւ պատանի մը :

Երկար ու ճերմակ մօրուքով մէկը մօտեցաւ եւ ետ քշեց ամբոխը :

— Տուներնիդ, անխելքներ, ասոնք Հալիճորէն կու գան, ասոնք մեր զիւղը մոխիր կը դարձնեն, տուներնիդ. Ալիին եղբայրը մեռեր է, զի՞ւղը քանդենք, զինուած են, չէ՞ք տեսներ :

Հեռուէն խոշոր քար մը եկաւ եւ մօրուքաւորի գլուխուն դպաւ. անխելքը լաւ նշան չէր առած :

— Շե՛խը, շե՛խը, պոռաց ամբոխը :

— Ե՛տ դացէք, մէջը մտան ուրիշ տարեցներ, պարապ տեղ արիւն պիտի թափէք, մէկին տեղ տասը հաստ կը զարնեն, փայլուն դէնք ունին, ասոնց աչքերը արիւնոտ են, ետ դացէք :

— Շեխը, շեխը վերցուցէք, արիւն կը կորսնցնէ, ըսաւ յիսուննոց մարդ մը :

Երկու հոգի առին տարին ծերունին : Բայց Ալի ոտքի ելած՝ կ'ուզէր անպատճառ իր եղբոր վրէժն առնել. նա աչք տնկած էր Գալիանէի վրայ, այդ սիրուն մանչն սպաննել՝ Ալլահին լաւագոյն նուէրը պիտի ըլլար : Հաստ փայտ մ'առած վազեց աղջկան վրայ : Ձին ետ ետ դնաց եւ ետեւի ոտքերուն վրայ տնկուեցաւ :

— Գալիանէ, զա՛րկ ատրճանակով, այդ շունը քու վրագ եկեր է, պոռաց Գեղամ :

Աղջիկը քաշեց ատրճանակը, բայց բլթակը չբանեցաւ, դարձեալ փորձեց եւ այդ պահուն թաթարը քաշեց փայտը աղջկան թեւին. ատրճանակը վար ինկաւ :

— Թե՛ւս, հոտաչեց աղջիկը :

— Գուրդէն, կրակէ՛ ասոր վրայ պոռաց Գեղամ : Կրակեց Գուրդէն եւ թաթարին աջ աչքին մխուեցաւ գնդակը, գետին գլորեցաւ :

— Ալին մեռաւ, Ալին մեռաւ, պոռացին ասդիէն անդիէն :

— Թող սատկի, ըսին ծերունիներ, արժանի պա-

տրժն առաւ. միշտ կը կրկնէր թէ կեաւոր մը պիտի սպաննեմ. տեսաւ կեաւորը :

Գալիանէի ատրճանակը գետին մնաց, բայց ոչ մէկ գիւղացի համարձակեցաւ մօտենալ եւ փախցնել : Սահակ ձիէն իջաւ, վերցոց եւ քովն առաւ :

— Թեւզ շատ կը ցաւի՞, հարցոց Գուրգէն Գալիանէին :

— Գաստակիս դպաւ փայտը, բաւական կը ցաւի :

— Առաջ երթանք, հրամայեց Գուրգէն. ճամբան բաց է, Ալին սատկած է :

Կարեցին գիւղը որ ողբի մէջ մնաց, եւ աւելի արագ ընթացքով անցան ձորը եւ դիմացի լեռան կողմ բռնեցին :

— Սա աղբիւրին մէջ պաղ ջրով լուանք թեւզ, ըսաւ Սահակ, եւ կապենք որ ուռեցքը անցնի :

— Այս լեռներուն վրայ բուժիչ բոյսեր շատ կան, ես կը ճանչնամ, ըսաւ Գեղամ :

— Զրկոտեմը լաւ կ'ընէ, փնտռենք, ծեծենք եւ վրան կապենք, ըսաւ Կատար :

Զրկոտեմ դտան, ջրկոտեմ ծեծեցին եւ աղջկան թելին վրայ կապեցին :

— Արիւն չէ ելած, բայց կապուտցեր է, ըսաւ Գուրգէն, աղջկան թեւը նայելով, վախ չկայ, շուտով ցաւը կ'անցնի : Քիչ մը ժամանակ ձախ ձեռքովդ ձիուն սանձը բռնէ :

Բայց Կատար շատ ազդուած էր վերջին դէպքէն, միշտ եղբորը փակած, չէր բաժնուեր անոր քովէն :

— Մի՛ վախնար, քոյրիկս, տեսա՞ր ո՞վ տուժեց, մէկն սպաննուած, չեխ մը վերաւոր մնաց :

— Ինչո՞ւ այս ատրճանակը չգործեց, ըսաւ Գա-

լիանէ. Գուրգէն, մէյ մը նայէ ի՞նչ ունի : Մե՛ղք, այդ ստահակը ես պիտի սատկեցնէի :

— Մէջն երկու գնդակ իրարու մխուած են, ըսաւ Գուրգէն, ատրճանակը բանալով :

— Դեռ թաթար գիւղերու պիտի հանդիպի՞նք, հարցոց Կատար :

— Երանի թէ, պատասխանեց Գալիանէ, այս անգամ քանի մը հատ կը պառկեցնենք, եթէ յանդուին մեր վրայ դալ : Կուտիլ կը սորվինք, սիրելի Կատար, կեանքը կռիւ է :

Գրեթէ անխօս քալեցին խոր ձորերու մէջէն, հանդիպեցան թաթարներու, որոնք խոնարհ բարեւ տալով անցան :

— Տեսա՞ր Կատար, ըսաւ եղբայրը, ինչպէս սարսափ ունին. որքան առաջ երթանք, այնքան Դաւիթի ախուռը սոսկում կը պատճառէ այդ անիրաւներուն :

— Այս երեկոյ կը հասնինք Վասակաչէն եւ երկու օր յետոյ Սիսեան. հօրաքուրիդ մօտ երկար հանգիստ մը կ'ընենք, ըսաւ Գեղամ :

— Ես կը խորհիմ թէ նախ Հալիձոր անցնինք, յետոյ ի դարձին Սիսեան կը հանդիպինք. կը վախնամ որ հօրքուրս արգելք ըլլայ Հալիձոր երթալու, խորհեցաւ Գալիանէ :

— Ճիշտ ես, Գալիանէ, ըսաւ Գուրգէն, մեզ սիրով կը կապէ եւ ալ չենք կրնար մեր նպատակին հասնիլ :

Որոտան գետին վերի ահերը հասան, հազարաւոր առուակներ կը հոսէին լեռներէն վար : Խոր ձորերու մէջ մտան, այլեւս լեռ բարձրանալու պէտք չկար, ճամբաները խորերէն կ'անցնէին : Երեկոյեան հասան փոքրիկ գիւղ մը, այնքան փոքրիկ, որ կարծես երեխայ էր եւ մկրտուած չէր անուն մը ունենալու համար :

Ունէր սիրուն եկեղեցի մը՝ հին սրբատաշ քարերով. արուեստի սիրուն դմբէթ մը ձորին մէջ բարձրացած էր, կանաչ լեռներու լանջին, կարծես մատնիի տըպազիոն մ'էր:

Պառաւի մը տունը իջան, բարի կին մ'էր, աղքատ, բայց սրտով եւ հիւրերու համար հոգի կու տար:

— Հաւ մորթեմ, սեր զնեմ, կերէք, ըսաւ, տաք լաւաշ հաց ունիմ: Մէկ սենեակ ունիմ, հոն կը յարմարցնենք որ զիշերն անցընէք: Ձեռքդ ի՞նչ եղեր է, տղաս, հարցուց Գայիանէին:

Գայիանէ պատմեց անցածը:

— Այ մի՛ վախճաք, ասկէ անդին թաթար մը ձեր մազին չի դաշիր: Կեցիր թթու խմոր տաքցնեմ եւ ձէթով վրան կապեմ, այս զիշեր ուռեցքը կ'իջնէ, ցաւը կ'անցնի:

Այդպէս ալ եղաւ: Առաւօտեան Գայիանէ ցաւ չըզդաց, թեւը շարժեց եւ տեսաւ որ իր սովորական ոյժն առած էր:

— Երկու ճամբայ կայ, ըսաւ պառաւը, Տաթեւ երթալու համար. մէկը Սիսեանի բերդի տակէն կ'անցնի, երկար է. միւսն անոր հիւսիսէն կ'անցնի, կարճ բայց քիչ մը լեռնային: Ես այդ ճամբաները կտրած եմ, շատ անգամ Տաթեւ ուխտի դայեր եմ:

— Քանի՞ օրէն կրնանք հասնիլ, հարցուց Սահակ:

— Գուր լաւ ձիււորներ էք, երկու օրէն Տաթեւ կը հասնիք: Հիանալի վանք է, մեռնիմ շինողի հոգիին. կարծես քարերը երկինքէն բերած է, սիրուն է, Աստուած հոն կը բնակի: Որքան ուխտ ըրեր եմ, այնքան ալ ուխտս ընդունուեր է. հրաշագործ սուրբեր կան: Գիշերն հոն անցուցէք, տեղ շատ ունին, հիւրասէր են հայր սուրբերը:

Բռնեցին Սիսեանի հիւսիսը տանող ճամբան: Խոր բարախներով թաթարներ հանդիպեցան եւ բոլորն ալ խոնարհարար

— Սալամ, ըսելով կ'անցնէին:

— Տեսա՞ք թէ ինչ ըսել է զէնք եւ քաջութիւն. այս աշխարհիս մէջ մարդու պէս ապրելու համար ոյժ պէտք է, մենք դայլերով չըջապատուած ենք, ոյժ եւ զէնք է մեր կեանքը, ըսաւ Գայիանէ:

Անցան Սիսեանի հիւսիսէն. հեռուն, շատ հեռուն, լերան մը կատարին բերդ մը կը տեսնուէր, շատ անորոշ:

— Անցորդի մը հարցնենք թէ ի՞նչ բերդ է, ըսաւ Գուրգէն:

— Բարեկամ, հարցուցին անցորդ զիւղացիի մը, հեռուն տեսնուող այդ բերդը ի՞նչ կը կոչուի:

— Վերին Խաչենի իշխանին բերդն է, Սիսիանի բերդ կը կոչուի:

— Գայիանէին աչքերը լեցուեցան, նայեցաւ դէպի բերդը, սիրտը տրոփեց, բայց զսպեց իր յուզումը: Հալիձորն աւելի քաշեց իր սիրտը. երթալ Ստեփանը տեսնել, Դաւիթ բեկին սոքերը համբուրել, սրբազան ուխտ մը կատարել:

Երկու օր չտեւեց մինչեւ Տաթեւ, արագ քալած էին: Գիշերեցին վանքին մէջ, համբուրեցին սուրբ խորանները, զիտեցին հրաշալի տեսարանը որ դէպի Որոտան գետը կը բացուի:

— Հալիձորը մօտ է, չէ՞, հարցուցին երիտասարդ վանականի մը:

— Կէս օրուան ճամբայ է, պատասխանեց:

— Բայց այս կողմերը թաթար, պարսիկ, թուրք,

աճեմ չեն տեսնուիր, միշտ ա՞յսպէս եղած է, հարցուց կատար :

— Քանի մը տարի առաջ մտեղի պէս կը վխտային, հիմա չկան: Ազատեցանք այդ վայրենիներէն:

— Դէպի ո՞ր կողմը պէտք է երթանք, Հալիձոր հասնելու համար, հարցուց Գուրգէն:

— Դէպի հարաւ-արեւմուտք, արդէն ճամբան ուղիղ է, չէք սխալիր, յետոյ ստէպ հայ գինուորականներու կը հանդիպիք, որոնք հսկողութիւն կ'ընեն ճամբաներուն վրայ:

Հինգին աչքերն ալ ուրախութեամբ լեցուեցան, ձիերէն արագ իրենց հողին թռաւ: Բռնեցին ցոյց տըլած ճամբան: Կէս ժամ յետոյ տեսան երկու հայ զինուորներ:

— Բարե՛ւ, հայրենիքի զաւակներ, ըսաւ Գայիանէ, ուրախ շեշտով: Հալիձորի մէջ զօրավար Շահումեանը կը գտնե՞նք:

— Մենք չենք գիտեր, թերեւս, նա ստէպ կը բացաւայի. իրեն յանձնուած է մեր տէրութեան սահմանները հսկել:

Ալ չխօսեցան եւ առաջ անցան: Կէս ժամ յետոյ ժայռի մը կատարին փոքրիկ բերդ մը տեսան:

— Արդեօք ա՞յս է Հալիձորը, հարցուցին իրարու:

— Ի՞նչ բերդ է, բարեկամ, հարցուցին անցորդի մը:

— Հալիձորն է:

— Հալիձո՞ր, Հալիձո՞ր, կրկնեցին հինգն ալ եւ ձիերէն վար իջնելով գետինը համբուրեցին:

— Հալիձո՞ր, Հալիձո՞ր, կրկնեց յուզումով Գայիանէ:

Զիւարները բարձրացան փոքրիկ արահետէն վեր.

ձիերը զժուարաւ առաջ կ'երթային. հարկ եղաւ սանձերէն բռնել եւ զրեթէ վեր քաշել զիրենք:

Յանկարծ զինուած պահակ մը իրենց առջեւ ելաւ:

— Ո՞վ էք, ո՞ւր կ'երթաք, հարցուց զիրենք կեցնելով:

— Բերդը պիտի բարձրանանք, մենք հայեր ենք, հեռու տեղէ կու գանք, պատասխանեց Գեղամ:

— Հալիձորի հերոսները կ'ուզենք տեսնել, կրկնեց Գայիանէ:

— Ո՞վ կը ճանչնաք Հալիձորի մէջ:

— Ստեփան Շահումեան զօրավարը, ըսաւ Գայիանէ:

— Առաջ մի՛ անցնիք, ըսաւ պահակը, պէտք է պահակապետին լուր տամ:

Պահակը վեր բարձրացաւ: Գայիանէ քիչ մը զգացուեցաւ. իրենք հայեր են, հաւատքով եւ փափաքով եկած են Հալիձորը տեսնելու եւ ահա հրամանի պէտք է սպասեն:

— Մի՛ զարմանար Գայիանէ, ըսաւ Գուրգէն, իրաւունք ունին, կրնան ծպտուած լրտեսներ դալ, դաւաճաններ, թշնամիներ Դաւիթն սպաննելու համար: Խոհեմութիւնը լաւ բան է, մանաւանդ զինուորականի մը լաւագոյն զրահն է:

— Ես ալ այդպէս կը կարծեմ, վրայ բերաւ Սահակ: Կ'ըսեն թէ շատ պատերազմներ կորսուած են լըրտեսներու եւ դաւաճաններու պատճառով:

Գայիանէ քիչ մը հանդարտեցաւ, ան սարի աղջիկ էր, ի՞նչ կը հասկնար զինուորական զաղանիքներէ: Քիչ վերջ պահակապետն եկաւ, նայեցաւ մէկուսն, նայեցաւ միւսին. աչքը հմայուած մնաց Գայիանէի վրայ:

— Դուն զիւղացի չես թուիր. արդեօք մեկիքի գաւա՞հ ես, հարցուց աղջկան:

— Այո՛, մեկիքի գաւահ եմ. Արցախի Մելիք Աւանի տղան եմ:

— Լսեր եմ, լսեր եմ, յիսուն հազար մարդ ունի եւ յիսուն հաւ չեն արժեր:

— Ծառը պտուղէն կը ճանչնան, պատասխանեց Գայիանէ քիչ մը կարմրած, դուն չես դիտեր թէ զիմացդ ո՛վ է. կանչէ զօրավար Շահումեանը եւ ան քեզի պիտի պատմէ թէ ես ո՛վ եմ:

— Կրնաք վեր բարձրանալ, բայց զէնքերնիդ պէտք է հոս ձգէք. երբ վերագառնաք նորէն ձեզի կը յանձնենք, ըսաւ պահակապետը:

Այդ պահուն երկու բարձրատիճան մարդիկ վար կ'իջնէին. մօտեցան եկուորներուն:

— Ստեփա՛ն, Ստեփա՛ն, կանչեց Գայիանէ եւ զնաց զրկեց երիտասարդը:

— Ո՛րքան Գայիանէին կը նմանի. բայց ասիկա մանչ է, անիկա աղջիկ էր:

— Այո՛, ես եմ, Գայիանէն եմ, ըսաւ աղջիկը:

Ստեփան կարօտով զրկեց քաջարի աղջիկը եւ յուզումով համբուրեց զինքը:

— Ինչո՞ւ մանչու զղեստ հազուեր ես: Կը հասկընամ, կը հասկնամ քու հոգիդ ուրիշ է. դու մանչ պէտք էիր ծնիլ: Պայինթուր, ըսաւ քովի զինուորականին, եթէ մենք այս աղջկան պէս քանի մը հազար ունենալինք՝ Պոլիսն ալ կը զբաւէինք:

Բռնեց աղջկան թեւէն.

— Վեր երթանք, քեզ կ'ուզեմ մեծ զօրավարին ցոյց տալ:

— Մեր զէնքերը հո՞ս ձգենք, հարցուց Գեղամ:

— Ո՛չ, մենք թշնամին զինաթափ կ'ընենք, առէք ձեր զէնքերը, ըսաւ Ստեփան: Ձիերը վեր քաշեցէք, հրամայեց պահակապետին:

Բերզն երթալով հասակ կ'առնէր, խիստ կերպարանք կը ստանար, կարծես ամպերուն մէջ կը նազէր: Հսկայ ժայռ մը զինքը մանուկի պէս գրկած, դէպի երկինք կը բարձրացնէր: Պարխպներուն քարերը մէկիկ մէկիկ կարելի էր համբել. ահա փոքրիկ մուտք մը եւ յետոյ բաւական լայն հրապարակ մը. քարաչէն տուներ, եկեղեցի մը, մանուկներ որ կը ճոռուղէին բակին մէջ:

— Ասիկա քաղաք է, ըսաւ Գայիանէ, հեռուէն Հալիճուրը արագիլի բոյնի կը նմանի, բայց մեծ է եղեր: Ո՞րքան բնակիչ ունի, հարցուց Ստեփանին:

— Քահանաներ կան, կուսաններ կան, զինուորականներու ընտանիքները եւ զինուորականներ. Ի՛նչ զիտեմ, կը պակսին եւ կ'աւելնան, թերեւս հինգ հարիւր հոգի մը ըլլանք:

Այդ պահուն ժամին կոչնակն հնչեց եւ վեղարաւորները շարքով եկեղեցի մտան, անոնց հետեւեցան կուսաններ եւ քանի մը կիներ:

— Երեկոյեան ժամերգութեան կ'երթան, ըսաւ Ստեփան: Պատերազմներու ժամանակ ասոնց ողբալից աղօթքը պէտք էիր լսել, երկինքը կը պատուէր: Սուրբ Հաղորդութիւնը խորանին վրայ դրած՝ լացին եւ աղօթեցին, եւ Աստուած լսեց իրենց ձայնը եւ յաղթանակ շնորհեց:

— Հայու հաւատք, հայու սիրտ, ըսաւ Գեղամ իր զիւղացիի պարզութեամբ:

— Ստեփան, սիրտս կը վառի, շատ կը փափաքիմ Դաւիթ բեկը տեսնել, ըսաւ Գայիանէ:

— Շատ հիւանդ է, Գայիանէ, չեմ գիտեր թէ քանի՞ օրեր դեռ կ'ապրի, խստիւ արգելուած է որ մէկը քովն երթայ եւ անհանգիստ ընէ, բայց քեզի համար ամէն դուռ բաց է, միայն քեզի համար: Ընկերները պէտք է ներեն որ չեմ կրնար չորս հոգի իր սենեակը տանիլ:

Գուրգէն, Սահակ եւ զիւղացի Գեղամը տրտում երեսներ ցոյց տուին. երկար ճամբայ կտրած էին հայրենիքի հերոսը տեսնելու համար, եւ դուռն իրենց առջեւ կը փակեն:

— Կարելի՞ է հետը խօսիլ, հարցում ընել, հարցուց Գայիանէ:

— Մէկ երկու բառ, ո՛չ աւելի, պատասխանեց Ստեփան:

— Գուրգէն, Սահակ, Գեղամ, ըսաւ Գայիանէ, ես ձեր տեղն ալ կը տեսնեմ, ձեր սրտով ալ սուրբ ձեռքը կը համբուրեմ:

— Լաւ նայէ, կանչեց Գեղամ, որ քու պայծառ աչքերուդ մէջ իր պատկերը լաւ նկարուի եւ մենք իր հերոսական դէմքը նայինք ու տեսնենք:

— Ոչ հին օրերու հերոսը, այլ հիւանդ եւ տըժգոյն մէկը, պատասխանեց Ստեփան:

— Ո՞վ են ասոնք, հարցուց Ստեփանին բարձրահասակ վեղարաւոր մը՝ որ իրենց մօտէն կ'անցնէր:

— Արցախի Աւան մեյրիքին աղջիկն է այս մանկահասակը, միւսները իր ընկերներն են, Հայր Աւետիք, պատասխանեց Շահումեան: Դառնալով Գայիանէին եւ միւսներուն՝ ըսաւ. Համբուրեցէք այդ ձեռքերը՝ որոնք աւելի թշնամի սպաններ են քան թէ «Հայր մեր» համբուրեր են:

Երբ չորսերն ալ մօտեցան եւ քահանային ձեռքն

առին, նա բռնեց Գայիանէի ձեռքէն եւ հարցուց Ստեփանին.

— Ասիկա մա՞նչ է թէ աղջիկ:

— Աղջիկ է, պատասխանեց Շահումեան:

— Ի՞նչ ամօթ բան է, աղջիկ մը մանչու զգեստ հագուի, ըսաւ Աւետիք քահանան, հաստ յօնքերու տաշկէն լաւ մը Գայիանէն զննելով:

— Ամօթ անոնց՝ որ զէնքէն կը վախնան, ասիկա քաջարի կին մըն է, հայր սուրբ, եթէ կուրի ժամանակ քովդ ըլլար, թերեւս քեզ ամչցնէր:

Քահանան քա՛հ, քա՛հ խնդաց եւ քայլն առաւ ու զնաց:

Գայիանէ երբեք չզարմացաւ Աւետիքի խնդուքին վրայ. անշուշտ տարօրինակ բան էր, մեր երկրին մէջ չլսուած բան, որ մանչն աղջիկի զգեստ հագուի եւ աղջիկը՝ մանչու. ինքն այդպէս ծնած, այդպէս մեծցած էր, լեռներու զաւակ էր եւ լեռը առիւծ կը ծնի. մէկ լեռնցի կին տասը դաշտային երիտասարդ կ'արժէ:

Ստեփան ազատ մուտք ունէր Դաւիթ բեկի սենեակը երթալու. հերոսին ամէնէն սիրած զէնքի ընկերն էր, հաւատարիմ, պաշտող եւ հիացող, երբեք իր խօսքը զետին չէր ձգած, երբեք զէնքը վար չէր դրած, պէտք եղած տեղը ճարտասան էր, վարպետ աղուէս էր, քաջ էր կուրի ժամանակ եւ անխառն սէր ունէր հայրենիքին հանդէպ: Բռնեց աղջկան ձեռքէն եւ զային բերդին աբեմտեան կողմը, բաւական լայն սանդուղէ մը վեր բարձրացան եւ մտան անշուք սենեակ մը. պարզ անկողին մը կար, սուր մը պատէն կախուած, հրացան մը մէկ անկիւնը դրուած եւ պատուհան մը՝ որ դէպի Մուղանի դաշտերը կը նայէր: Յաղթանդամ ու թաւ մօրուքով մէկը պառկած էր խոտէ անկողինի մը վրայ,

աչքերը խուփ էին, դոյնը մեղրամոմի պէս, անշարժ, անխօսուն. սակայն այդ վիճակին մէջն ալ վախ ու պատկառանք կ'ազդէր տեսնողին վրայ: Աջ թեւը անկողինէն վար կախուած էր, ափը դոց: Գայիանէ քարացած կանդ առաւ, երեսը խաչակնքեց եւ քաջութիւն չունեցաւ մօտենալու:

— Իշխան, ըսաւ Ստեփան, այս աղջիկը Արցախէն եկած է քեզ տեսնելու. Հայաստանի ամէնէն քաջ եւ հայրենասէր աղջիկն է:

Գաւիթ բեկ աչքերը բացաւ եւ անչուշտ ազօտ տեսաւ Գայիանէն, ժպտաց եւ կախուած ձեռքը ջանաց վեր բարձրացնել աղջկան երեսը շոյելու համար: Գայիանէ փութաց ու թեւը վեր վերցուց, տարաւ շրթներուն, համբուրեց. այնպէս համբուրեց որ իր սիրտը կուրծքին տակ թփրտաց:

— Ստեփան, ըսաւ զօրավարը, իմ օրերս համբուած են, վազը կանչէ քովս Մխիթար սպարապետը, Պայինթուրը, Աւետիք քահանան, թող քովս գան, դուն ալ եկուր, համբուրեմ ձեր երեսները, իմ գէնքի հերոս ընկերներ:

Գայիանէ յուզումէն չկրցաւ լացը բռնել, երկու ձեռքով իր երեսը գոցեց, խածաւ շրթները, բայց հեծեծուքը կը լսուէր:

— Երթանք, Գայիանէ, ըսաւ Ստեփան փափախով, յուզումը գէշ կ'ընէ հիւանդին:

Աղջիկը չկրցաւ դսպել իր սիրտը, մօտեցաւ Գաւիթին, գլուխը թեւերուն մէջ առաւ, սեղմեց իր կուրծքին, եւ ճակտին համբոյր մը տուաւ:

— Հայաստանի համբոյրը թող ըլլայ, անմահ հերոս, ըսաւ ետ քաշուելով եւ հեծկտաւով աւելցուց:

— Ո՛չ, դուն պիտի ապրես, դուն պիտի ապրես եւ քեզի հետ Հայաստանը պիտի ապրի:

Ստեփան քաշեց աղջկան թեւէն եւ դուրս ելան սենեակէն:

— Ասոր համար թոյլ չենք տար որ մարդ իր սենեակը մտնէ, Գայիանէ. տեսնողը թշնամի ըլլայ, քար սիրտ ըլլայ՝ ամպի նման կը յուզուի եւ կու լայ:

— Այսպիսի մարդ մը պէտք էր անմահ ըլլալ, ըսաւ Գայիանէ:

— Եւ ի՞նչ տխուր բան, հերոսաբար յաղթանակներ տանիլ եւ իր փառքը ոսկի երազի պէս աչքերուն առջեւէն հեռանայ:

Իջան բակը: Գուրգէն, Սահակ ու Գեղամ տակաւին այն կողմը կը նայէին, այն դրան՝ ուսկից ներս մտած էր աղջիկը: Վաղեցին ու շրջապատեցին Գայիանէն, բայց աղջկան աչքերը արցունքոտ էին, կարմրեր էին:

— Ինչո՞ւ կու լաս, Գայիանէ, մեռա՞ւ արդեօք, հարցուց Կատար:

— Ո՛չ, Աստուած չընէ. տեսե՞ր ես մահամերձ առիւծ մը, այնպէս էր: Մի՛ հարցնէք, նայեցէք աչքերուս մէջ, հոն պիտի տեսնէք հսկայ մէկը, թաւ մօրուքով, երկար հասակով, երկարած խոտէ անկողինի մը վրայ, դոյնը մեղրամոմի պէս, աչքերը խուփ, աջ թեւն անկողինէն կախ ինկած: Կատար, Կատար, լացը քիչ է այդպիսի մէկուն համար: Լաւ էր որ բոլորս ներս չդացինք, թերեւս լացով քարէ սենեակը վար առնէինք: Ես իսկ զջջացի յուզուելուս համար, արդեօք մէկ վայրկեան զինքը գէպի մա՞հ տարի:

— Ո՛չ, Գայիանէ, խիղճ մի՛ ըներ, ըսաւ Ստեփան, անիկա վարժած է մարդկային կեանքի բոլոր երեւոյթներուն:

Թէպէտ ամառնային եղանակ էր եւ վերջալոյսն երկար կը տեւէր, սակայն պէտք էր գիշերելու տեղ մը գտնել: Գուրդէն, Սահակ եւ Գեղամ կրնային զինուորներուն բաժինը անկիւն մը երկարիլ, բայց Գայիանէն պէտք էր լաւ տեղ մ'ուենենալ: Ստեփան ընտանիք չունէր որ իր տունը տանէր, միւս զօրավարները հազիւ մէկ մէկ սենեակ ունէին իրենց ընտանիքներուն համար:

— Գայիանէ, այս գիշեր կուսաններուն քով պիտի տեղաւորեմ քեզ եւ Կատարը: Ընթրիքը մեզի հետ կ'ընէք, ուտելիք շատ ունինք, բայց բնակարանի տեսակէտով նեղն ենք: Քանի մը օր ալ մայրապետ կ'ըլլաք:

— Հոգ չէ, սիրով, ըսաւ Կատար, անոնք մեր սուրբ քոյրերն են: Բայց պիտի ընդունի՞ն մեզ:

Ընթրիքը այնքան զուարթ չանցաւ: Ստեփան ջանաց զուարթացնել եւ յոյսեր տալ զօրավարին առողջութեան մասին:

— Երկաթէ ջիղեր ունի, առիւծի սիրտ, վստահ եմ թէ շուտով կ'առողջանայ:

Գայիանէ պատմեց իրենց արկածալից ճամբորդութիւնը. թէ ինչպէս իր հայրն ալ փոխուած էր, Հայաստանի մասին կը մտածէր, եւ Արցախն անբաժան մաս կը համարէր մեծ Հայաստանին:

— Թէպէտ ուշ է, սակայն միշտ լաւ է, Գայիանէ, պատասխանեց Ստեփան: Վէրքերը բոլորը մէկէն չեն առողջանար, կամաց կամաց կը գոցուին, մենք դեռ շատ վէրքեր ունինք, հսկայ Հայաստանն օտարներուն ձեռքն է, փոքրիկ ամու մը փրցուցինք եւ ան ալ...:

— Ան ալ... պիտի մեծնայ, վրայ բերաւ Գուրդէն... յոյսն ամէնէն գեղեցիկ ոյժն է մեզի համար, դարեր յուսացինք եւ դեռ կորով ունինք մեր սուրբ երկրին ազատութեան համար զոհուելու:

Շահումեան սեղանի վրայ բերաւ երկու շիշ Գողթնի կարմիր գինիէն: Լեցուց գաւաթները եւ ըսաւ.

— Խմենք Հայաստանի կենացը եւ մեծ զօրավարին արեւշատութեան:

Կատար եւ Գայիանէ ետ տարին գաւաթները, երբեք գինի չէին խմած, կարծես ամօթ կը զգային այդ գլխատար հեղուկն իրենց բերանը տանելու:

— Խմէ՛, Գայիանէ, խմէ՛ Կատար, Գողթնի բանաստեղծներուն արիւնն է եւ Հայաստանի արեւուն ոսկի արցունքներն են:

Աղջիկները մէկ մէկ ումպ առին, ուժով գինի էր եւ երկուքը միասին դռնէն.

— Կեցցէ՛ Հայաստան, Աստուած երկար արեւ տայ մեր Հերոսին:

Ընթրիքէն յետոյ երկու աղջիկներն առաջնորդեց կուսաններու յարկաբաժինը. զանգը զարկաւ: Տարեց կուսան մը, մոմը ձեռքը, դուռը բացաւ:

— Դո՞ւք էք իշխան, օրիորդներուն տեղը պատրաստեր ենք:

Կուսանը վերէն վար չափեց երկու օրիորդները եւ զարմացած ետ ետ գնաց.

— Ասիկա աղէկ, բայց միւսը մանչ է, իշխան, չենք կրնար տեղ տալ, անկարելի է. մեր օրէնքը չի ներեր, ուրիշ տեղ տարէք:

Շահումեան խնդաց. Գայիանէ քիչ մը կարմրեցաւ եւ ապա Կատարին հետ ճշող խնդուկ մը փրցուց. այնքան քնարական եւ սուր էր խնդուքը՝ որ միայն կրակոտ օրիորդները կրնան ունենալ:

— Ձե՞ս լսեր այդ խնդուքը, ըսաւ Ստեփան, ո՞ր մանչը այդպէս սուր ձայնով կրնայ ծիծաղիլ: Մանչու

զգեստով աղջիկ է, քոյր, մի՛ վախեր: Աստուած չընէ
ձեր սուրբ օրէնքին դէմ երթամ:

— Քոյր Աննա, կանչեց կուսանը դէպի ներս, եկուր
դուն ալ բան մը ըսէ, մա՞նչ է թէ աղջիկ: Նայէ, մէջքէն
զէնք ալ կախեր է:

— Դէմքը աղջիկի է, սակայն զգեստը եւ զէնքը
մանչու են:

— Իշխան, ի՛նչ փորձանք բերիր մեր գլխուն, ըսաւ
դուռը բացող կուսանը:

Քսանի չափ կուսաններ մէկիկ մէկիկ դրան վրայ
եկան, նայեցան երկու օրիորդներուն, վա՛հ ըսին ու
ներս դացին:

— Ի՞նչ ալ դեղեցիկ երիտասարդ է, ըսին իրարու:

— Անշուշտ աղնուական մեղիքի տղայ է:

— Իսկական մօր կաթ ծծեր է, կրկնեցին ուրիշներ:
Ստեփան երզում պատառ եղաւ համոզելու համար
թէ Գայիանէ աղջիկ է եւ ոչ թէ մանչ:

— Իշխանը մեզ չի խարեր, ըսաւ քոյր մը:

— Նա մեր բարերար հայրն եղած է, իսկական բա-
րեկամ, կրկնեց ուրիշ մը:

— Ներս առնենք, ըսաւ ուրիշ մը, եթէ մեզ խարէ՛
մեղքն իր վիզը:

— Դժոխքն ոտքերուն տակ, աւելցուց պառաւ կու-
սան մը:

— Դժոխքին կրակները վրաս՝ եթէ անխելք կա-
տակով ձեր սուրբ կանոնը խանգարեմ, պատասխանեց
Շահումեան:

Նախ Կատար ներս մտաւ:

— Զէնքը ոչ, ըսաւ քոյր մը Գայիանէին, Աստու-
ծոյ տունը սիրոյ եւ խաղաղութեան տեղ է, զէնքով կա-
րելի չէ ներս մտնել:

Գայիանէ քակեց մէջքէն ատրճանակը, հրացանն
ուսէն վար առաւ եւ Ստեփանին յանձնեց եւ ինքն ալ
ներս մտաւ: Դուռը փակեցին եւ մութը պատեց կուսա-
նոցն ու Հալիճօրը թաւիչէ ստուերի մէջ: Առաւօտեան,
կուսաններն համոզուած էին թէ Գայիանէ իսկապէս
աղջիկ էր:

Առաւօտեան շաղով օծուած արեւ մը զարկաւ բեր-
դի կատարներուն, բակը դարձեալ զգոյշ քայլերով ար-
թընցաւ: Գիտակի երկու մանչերն ու դիւղացի Գեղամն
արդէն բակն էին, երկու աղջիկներն ալ իրենց միացան
օր ցերեկով բերդը լաւ մը տեսնելու համար: Դարձեալ
եկեղեցիին կոչնակն շնչեց եւ դարձեալ սրազազաթ վե-
ղարաւորներ ժամ մտան. անոնց մէջն էր նաեւ Աւետիք
քահանան իր լեռնցիի հասակով, վեղարը գլխուն, կար-
ծես թէ մեծ Մասիան էր որ կը շարժէր երկինքի տա-
ճարն երթալու համար:

Շահումեան աճապարանքով իրենց մօտն եկաւ:

— Լաւ քնացա՞ք, հարցուց օրիորդներուն: Կոյսերն
համոզուեցա՞ն թէ աղջիկ էս, Գայիանէ:

— Յուսամ թէ համոզուեցան:

— Ո՞վ է այդ գէր եւ հուժկու մարդը, հարցուց
Կատար, մատով ցոյց տալով մէկը որ դանդաղ եւ խը-
րոխտ քայլերով դէպի իրենց կողմը կու գար:

— Մխիթար սպարապետն է, պատասխանեց Ստե-
փան եւ դառնալով սպարապետին կանչեց զինքը:

— Մխիթար, եկուր Արցախի հերոսուհին տես:

Որքան սպարապետը կը մօտենար, այնքան անոր
հաստ ու մազոտ բազուկները, մայրիի պէս հուժկու
ոտքերն ու մարմինը կը մեծնային: Միջահասակ էր
բայց այնքան հաստատուն էր հողին վրայ որ կարծես
թէ պինդ հողը տեղիք կու տար:

— Ասիկա մէկ ափով հազար թշնամի կը ճզմէ, ըսաւ Կատար Գայիանէի ականջէն:

— Սպարապետ, ըսաւ Ստեփան, քեզի կը ներկայացնեմ Արցախի մեղիք Աւանի հերոս ազջիկը եւ իր ընկերները:

— Է՛հ, փառք քեզ Աստուած, որ Արցախէն ալ դիւցազներ կ'ելլեն:

Գայիանէ եւ Կատար մօտեցան հերոսին ձեռքն համբուրելու. Մխիթար ետ քաշեց իր ձեռքն ըսելով.

— Մի՛ համբուրէք, արիւնոտ է: Դեռ եօթն ազրիւրի մէջ չեմ լուացած որ մաքրուի:

— Արիւնոտ դրօշակը բանակի մը փառքն է, պատասխանեց Գայիանէ, եւ արիւնոտ ձեռքը դիւցազի մը ոսկի շքանշանն է:

— Սիրեցի այդ խօսքդ, ըսաւ Մխիթար, խեղացի ազջիկ կը թուիս:

— Խեղացի եւ քաջարի, պատասխանեց Ստեփան:

Սպարապետը շատ սակաւախօս մէկն էր: Արցախէն եկողները պիտի ուզէին որ ան երկար խօսէր ու պատմէր իր քաջութիւնները, բայց ան հեռացաւ դէպի Դաւիթ բեկի սենեակը.

— Ստեփան, ըսաւ Մխիթար, Պայինթուրը կանչէ եւ իշխանին երթանք, ես շատ լուրջ կը տեսնեմ իր վիճակը եւ Հայրիճորի ապագան:

— Սպասենք Աւետիք քահանային, պատասխանեց Ծահումեան, ան աղօթքի մէջ է:

— «Ամէն», լսուեցաւ փոքրիկ եկեղեցիի մէջէն: Աւետիք դուրս ելաւ եւ միացաւ Մխիթարին, որուն քով ինքը բարձրագագաթ լեռ մ'էր. Ծահումեան եղեւին մը եւ Պայինթուր նիհար բարտի մը:

Գայիանէ աչքով հետեւեցաւ երեք հերոսներուն,

կարծես բակին մէջ միայն իրենք մտահոգ էին եւ իրենց վրայ իջած էր տրամութեան ամպը, բայց բոլոր բերդը սրտատրոփ լուրերու կը սպասէր: Պառաւնեւը սարերէն ամէն տեսակ խոտ բերին, բժիշկները դեղը դեղի խոտնեցին, յոյսին վրայ յոյս դրին, կուսան եւ վարդապետ աղօթք աղօթքի միացուցին: Բոլորին աչքերը դարձած էին դէպի այն փոքր ու քարաչէն սենեակն՝ ուր կը պառկէր իրենց պետը, իրենց կեանքի պահակն ու պատիւը:

Գայիանէ եւ ընկերներն ալ բակին մէջ քարացած կը սպասէին յուսալից լուրի մը: Չորս զօրալարները շուտով բակ իջան, իրենց դէմքերը պայծառ էին, սակայն կը հասկցուէր թէ կեանքի արեւը չէր լուսաւորած:

— Լաւ է, մեր յոյսերը աւելի պայծառ են, առժամապէս իր տեղը Մխիթար սպարապետն անուանեց. դիտէք թէ բերդ մը առանց հրամանատարի ոչխարներու փարախ կը դառնայ, պատմեց Ստեփան:

— Եթէ Աստուած ինձ կեանք չընորհէ, ասիկա է ձեր ապագայ պետը, ըսաւ յուզուած մեր առաջնորդը. յետոյ աջ բազուկն երկարեց, երդում ըրէք, ըսաւ, որ ցմահ պիտի հնազանդիք քաջարի սպարապետին եւ պիտի մարտնչիք Հայրիճորի եւ Հայաստանի համար: Մենք աջ ձեռքերնիս դրինք իր գունաթափ բազուկին վրայ եւ ըսինք միարեան. «Թող Աստուած եւ այս անմահ բազուկը վկայ ըլլան մեր հաւատարմութեան եւ զոհարեութեան»: Իսկոյն դուրս ելանք, յուզումը դէ՛ռ կ'ընէ այդպիսի հիւանդներուն, դուռ երէկ տեսար, Գայիանէ, լացը հիւանդին մահ է, մեռածին մխիթարանք եւ աղօթք է:

— Նա պիտի չմեռնի, ըսաւ Կատար ձեռքով արցունքները սրբելով:

— Ո՛չ, պիտի չմեռնի, կրկնեց Սահակ:

— Զինքը կը փափաքինք փառքով Արցախի մէջ ընդունիլ. Հայաստանի նոր թագաւոր, աւելցոց Գուրգէն:

— Ես իմ բոլոր ոչխարներս պիտի մորթեմ մատաղ ընելու համար իր ոտքերուն տակ, ըսաւ Գեղամ:

— Այո՛, պիտի չմեռնի, վստահացուց Շահումեան. կա՛մ մենք կու գանք Արցախ, կամ թշնամին:

— Ո՛չ թշնամին, Դաւիթ բեկը, Դաւիթ բեկը, կըրկնեցին հինգն ալ միասին:

Ստեփան կը խորհէր թէ ինչ հնարք մտածէր որ եկուորները Արցախ դառնան: Ան դիտէր թէ զօրավարին կեանքը մաղէ թելէ մը կախուած է, չէր ուզեր որ մահ եւ յուզարկաւորութիւն տեսնեն, յոյսով ու խանդով եկան, անյոյս վերադառնան:

— Դուք միայն բերդը տեսաք, ըսաւ արցախեցիներուն. դացէք մօտակայ լեռան գագաթը, դիտեցէք ընդարձակ դաշտերը, թերեւս մինչեւ Ազուլիս քաղաքն ալ երեւայ, եթէ օդը պայծառ է: Մեր իշխանութիւնն այժմ փոքր է, բայց սուրով պիտի ընդարձակենք ու մինչեւ Արցախ հասնինք:

— Այո՛, մինչեւ Արցախ, մինչեւ Գուգարք ու Վրաստանի սահմաններն, աւելցուց Գայիանէ:

— Կը խորհիմ թէ լաւ է որ շուտով վերադառնաք եւ հայ զիւղերուն ու լեռնցիներուն իմաց տաք թէ մենք շուտով կը հասնինք. կը սպասենք իշխանին ատոյջութեան...:

Ստեփանին ձայնը արտում շեշտ առաւ, հազաց, ոյժ տուաւ թոքերուն, կեղծ ժպիտ մը ըրաւ, ծածկել, պէտք էր ծածկել տխուր իրականութիւնը:

— Կու գանք, Գայիանէ, ապա թէ ոչ թշնամին կը հասնի: Ազգերուն կեանքը բախտի խաղալի է, ոմանք

վարդերու վրայ քալելով առաջ կ'երթան, ոմանք փուշերու վրայ արիւնոտ ոտքերով կը քալեն, եւ սեւ բախտը պայծառ հորիզոն մը ցոյց չի տար:

— Պիտի զարգարեմ Աւետարանոց զիւղին բերդը, դրօշակներ պիտի շարեմ, ըսաւ Գայիանէ, ընդունելու համար հերոսներու բանակը:

— Այո՛, զարգարեցէք բերդը, դրօշակը բարձր բռնեցէք, թող ամպերուն մէջ ծածանի, թող արծիւներուն հետ խաղայ եւ Աստուած տայ որ թշնամի չտեսնէ: Բայց հիմա ելէք սա լեռան գագաթը, տեսարանը գեղեցիկ է, դիտեցէք որ ձեր հողիները լեցուին Հայաստանի գեղեցկութեամբ եւ հայրենիքի սէրը ձեր սրտերուն մէջ անոյշ խունկի պէս մխայ:

— Պէտք է որ շուտով վերադառնանք, հարցուց Կատար:

— Այո՛, օրերու ինդիր է մեր բանակին ճամբայ ելլելը, թերեւս ուշ մնաք Աւան մեղիքին բերդը զարգարելու: Դիմացի լեռը պիտի բարձրանաք, դառիվերը դժուար է, բայց վարժ էք ժայռերէն ալ վեր մազըրցելու:

Շահումեան զլուխը դարձուց եւ մեկնեցաւ իր սենեակը. ճամբան ինքնիրեն խորհրդածեց.

— Ի՞նչ դժուար բան է լեղին մեղրով օծել, սուս խօսիլ եւ յոյս տալ երբ ապագան մութ ու վտանգաւոր է:

Նա կը ճանչնար բերդին զօրավարները. դիտէր իւրաքանչիւրին հպարտ բնաւորութիւնը. միայն Դաւիթի բազուկը զսպած էր այդ վայրենի հերոսները: Միւրթար թերեւս Դաւիթ բեկէն աւելի քաջ կուտոյ էր, բայց չունէր անոր հեղինակութիւնը, տղու պէս միամիտ ու բարի էր:

Գայիանէ եւ ընկերները լեռան կատարէն դիտեցին

հեռակայ դաշտերը, մշուշի մէջ աղօտ դմբէթներ տեսան:

— Անշուշտ Ադուլիսն է, ըսաւ Գեղամ. ո՞վ գիտէ որքան մեծ է:

— Ես լսեր եմ որ այդ քաղաքին հայերը տեսակ մը լեզու կը խօսին որ միայն սատանան կը հասկնայ, ըսաւ Գուրգէն:

— Հարցնենք Ստեփանին թէ ի՞նչ լեզու կը խօսին, ժպտելով աւելցուց Սահակ:

— Ի՛նչ լեզու կ'ուզեն թող խօսին, ես հոն հարս պիտի չերթամ որ, ըսաւ Կատար:

— Վար իջնենք, ըսաւ Գայիանէ, սիրտս տեղը չէ. իշխանին հետ ես ալ հիւանդացայ:

— Է՛հ, դուն ալ, դոչեց Կատար, հիմա թոյլ աղջիկ դարձար. ես քեզ սրտով ալ քաջ կը կարծէի:

— Ձեռքս չէ Կատար, դուն չես հասկնար թէ Գաւթին մահը Հայաստանի մահն է:

Լեռնէն կամաց կամաց վար իջան, սարի ծաղիկ, սարի խոտ փրցնելով: Բակի մէջ դարձեալ մանուկներ կը խաղային, մարդիկ կ'երթային ու կու դային. եկեղեցին բաց էր ու պառաւներ պատերը կը համբուրէին:

— Տես, Գայիանէ, ըսաւ Գեղամ, այս պառաւներն են մեր օճախներուն պահակները, մեր հաւատքին ջահերը: Ո՞վ գիտէ քանի հերոսներ մեծցուցեր են իրենց ծունկերուն վրայ:

Իշխանին վիճակը կայուն էր, անմիջական վտանգ չէին տեսներ. Ստեփան թոյլ տուաւ որ քանի մը օր եւս մնան արցախեցիները: Իրեն մօտ կը ճաչէին եւ կ'ընթրէին: Գայիանէ եւ Կատար կուսաններուն մօտ կը գիշերէին, որոնք շատ սիրով կապուեցան օրիորդներուն հետ: Գայիանէն աղջիկ էր, լեռնային առողջ գոյներով

ծաղիկ մը. Կատար նազիկ էր մանուշակի թերթերու պէս փափուկ այտերով: Ո՞ր պիտի տեսնէին այդպիսի արեւոտ երեսներով օրիորդներ. իրենք մութ սենեակներու մէջ, մեղրամոմի գոյն ունէին:

Շարաթ մը չէր անցած. Ստեփան բռնի ժպտով վար իջաւ Գաւթի թեկի սենեակէն:

— Իշխանը առողջանալու վրայ է, այսօր զինքը շատ լաւ դտայ: Ըսածը սուտ էր. շուտով մեկնեցէք որ Աւետարանոց դիւղին բերդը դարգարէք եւ ձեր անցած տեղերէն աւետիս տաք հայերուն թէ մենք կը հասնինք:

— Կը սպասենք, Ստեփան, ըսաւ Գայիանէ երիտասարդին պլլուելով: Գուրգէն, նոյնիսկ իսկոյն Արցախ մեկնինք առանց Սիսեան երթալու հօրքուրիս հանդիպելու համար:

— Ո՞չ, գացէք Սիսեան եւ հօրքուրիդ ու մեկիք ամուսինին իմ կողմէս ալ բարեւ ըրէք: Թող ինքն ալ բերդը դարգարէ եւ հայրենի դրօշակը բարձր բռնէ:

Ձիերը դուրս քաշեցին ախոռներէն, բակին մէջ Գայիանէ ցատկեց իր փրփրոտ ձիուն վրայ, հրացանը ուսը, ատրճանակը կողքին, կուսանները վանքէն նայեցան, պառաւները երեսներն խաչակնքեցին եւ մեկնողները դէպի ժամ նայելով ըսին.

— Քեզի դուրպան, Ս. Աստուածածին, պահէ այս բերդն ու բերգակալը:

— Դէպի արեւմուտք զարկէք, ըսաւ Ստեփան, եւ բռնեցէք Սեւանայ լիճին արեւմտեան ափերը. Գեղամայ լեռներու լանջերուն վրայ գրեթէ բոլորն ալ հայկական դիւղեր են: Բայց շատ կամաց իջէք Հալիճորի զառիվայրը, շատ խիստ է:

Ինքը դնաց մինչեւ բերդին դուռը, բռնած էր Գայիանէի ձիուն սանձէն:

— Գայիանէ, ըսաւ աղջկան, կարծես թէ քեզ հարս կը տանինք հրեղէն ձիով դէպի ոսկեղէն պալատները: Պահեցէք ձեր հայկական սրբութեան պատիւն ինչ օրեր ալ հանդիպին:

— Ազաւնին, պատասխանեց Կատար, ցեխին վրայ բոյն չի չիներ:

Վար իջան բերդէն ու բռնեցին հիւսիս արեւմտեան ուղղութիւնը: Երբ քիչ մը հեռացան՝ Հալիձորը երազային դարձաւ:

— Վար իջնենք, ըսաւ Գայիանէ, ձին կեցնելով:

— Ի՞նչ կայ, Գայիանէ, հարցուց Սահակ:

— Վար իջնենք վերջին համբոյրը տալու Հալիձորի ոտքերուն:

Գարձան դէպի բերդը, համբուրեցին հողը, խաչակրնքեցին իրենց երեսները, կարծես Երուսաղէմի դիմացն ըլլային եւ ծարաւի ուխտաւորներ:

— Աստուած չէն պահէ, ըսաւ Կատար:

— Թ՛չնամի չանցնի գլխուդ վրայէն, կրկնեց Գուրդէն:

— Դրօշակդ միշտ երկինքին մէջ, ըսաւ Գայիանէ:

— Իմ մարալ ցուլիս պէս միշտ անյաղթ մնաս, դու չեց Գեղամ:

Երեք օրէն հասան Սիսեան. ժամ տեսան խաչակրնքեցին իրենց երեսները, ճամի տեսան՝ երեսնին անդին դարձուցին: Սիսեանի բերդը թէպէտ նոր էր, բայց չունէր Հալիձորի անառիկ դիրքը եւ ոչ ալ Աւանի բերդին պէս աստամնաւոր աշտարակներ ունէր: Բարձր բլրան մը դադաթին բազմած էր. լայն դուռ ունէր եւ ապա ուրիշ երկաթապատ դռներ կամար կամարի կապող:

Դրան առջեւ կանգ առին. Գայիանէն դուրսէն պուռաց:

— Հօրքո՛ւր, հօրքո՛ւր, դուրս արի:

Բերդակալները դարմացած թոյլ տուին որ ձիաւոր խումբը ներս մտնէ դռներէն: Գայիանէ բակին մէջն ալ պոռաց:

— Հօրքո՛ւր, հօրքո՛ւր, դուրս արի: Ո՞ր կողմն է իշխանուհիին սենեակը, հարցուց կնոջ մը, որ նեղ դրան մը առջեւ նստած երեսային ծիծ կու տար:

— Այդ վերի լայն դռնէն մտնես՝ իշխանուհիին յարկարատիւնը կ'երթաս:

Իջան ձիերէն. Գայիանէ մինակը վեր վազեց հօրաքուր կանչելով: Միջակ տարիքով կին մը դուրս ելաւ. թէպէտ մազերը ձիւնախառն էին, բայց պահած էր իր վայելուչ հասակը եւ հասունցած գեղեցկութիւնը:

— Ո՞վ է գիս կանչողը, ըսաւ նայելով Գայիանէին:

— Ես եմ, հօրքուր, Գայիանէն, Աւան եղբօրդ աղջիկը:

— Գայիանէ՞ն, այս զգեստներո՞վ, հրացանո՞վ, ատրճանակո՞վ:

— Այո՛, Գայիանէն, գէնքի Գայիանէն:

Ու գիրկն ինկաւ իր հօրաքրոջ:

— Ո՞րքան մեծցեր ես, քեզ մատի մը չափ տեսած էի, հիմա սարի եղեւին դարձեր ես:

— Բակին մէջ չորս ընկերներ ալ ունիմ:

— Վեր կանչեցէք, դարձաւ իշխանուհին իր նախնիներուն:

Կատար համբուրեց տանտիկնոջ ձեռքը, միւսները ձեռքերին կուրծքերնուն՝ խոնարհեցան ու բարեկեցին: Նստեցան կաշիէ փափուկ բազմոցներու վրայ: Գայիանէի ձեռքերը հօրաքրոջ ձեռքերուն մէջն էին, հարցումներ, կարօտի խօսքեր, բարեկամներու, ծանօթներու առնունք իրար յաջորդեցին: Խօսակցութիւնն Աւետար-

բանոց գիւղէն անցաւ Աւանի եւ Ծովինարի վրայ, հոն երկար մնաց, հոն սիրտ հալեցուց: Խեղճ մելիքուհին, տարիներ հեռացած էր հօրենական տունէն եւ հիմա Գալիանէի աչքերուն մէջ հին յիշատակները վարդերու պէս կը բացուէին:

— Ամէնէն ջիշ երկու ամիս մեր քով պիտի մնաք, ըսաւ մելիքուհին: Հօրեղբայրդ, ամուսինս, մեր իշխանութեան սահմանները քննելու գնաց, երկու օրէն հազիւ կը վերադառնայ. ժամանակները շատ գէշ են: Ի՞նչպէս անվտանգ եկաք, հասաք:

— Հրացանն ամէն ճամբայ կը բանայ, ըսաւ Գալիանէ. բայց մենք հազիւ երկու երեք օր կրնանք հոս մնալ: Հալիճորէն կու գանք: Գացինք մեծ իշխանը եւ բերդը տեսնելու: Մեղք, Դաւիթ բեկը շատ հիւանդ է, հօրքուր. սակայն Շահումեանը ըսաւ թէ բաւական լաւցեր է. երբ առողջանայ՝ իր բանակով մինչեւ Արցախ պիտի հասնի: Մանաւանդ թէ ձեզի շատ բարեւներ զըրկեց Շահումեանը:

— Ամէնէն ազնիւ եւ խելացի զինուորականն է, պատասխանեց հօրքուրը:

— Պիտի երթանք մեր բերդը զարդարելու որ փառքով ընդունինք հայկական բանակը. դուք ալ ձեր բերդը զարդարեցէք. դրօշակը բարձր տնկեցէք եւ փառքով պահեցէք:

— Նայէ թէ ինչ բաներ կը լսեմ, ե՞րբ հայրենասիրութեան քարոզիչ դարձար:

— Ամէն ճամբարիտ հայ իր պատիւով, գործերով եւ խօսքերով իր ազգին քարոզիչը պէտք է ըլլայ:

Կերան, խմեցին ու պառկեցան. կերան խմեցին ու պառկեցան եւ ահա երեկոյեան մօտ մելիքի ձին բակին մէջ խրխնջաց:

— Հօրեղբայրդ հասաւ, ըսաւ մելիքուհին եւ Գալիանէի հետ բակը վազեցին:

Նիհար ու բարձրահասակ մարդ մը, ինչպէս են Սիւնեցիները, ձիուն սանձը ծառային տալով դէպի իրենց կողմը եկաւ:

— Ո՞վ է այս երիտասարդը, հարցուց իր կնոջը: Կինը խնդաց եւ պատասխանեց.

— Եղբորս, մելիք Աւանի աղջիկն է, Գալիանէն, միւսները իր ընկերներն են. մեզի հիւր եկեր են:

Երկու սուր եւ երկար պեխերով մելիքը նայեցաւ Գալիանէին, թաւ յօնքերու տակէն.

— Մաշալլա, ջան Ֆիտան է, ըսաւ եւ զրկեց աղջիկը իր լայն բազուկներով:

Միւսներն ալ բարեւեցին, խոնարհելով դէտին: Գալիանէն զինքը լաւ չէր յիշեր եւ ոչ իսկ կրցաւ մանկութեան ժամանակ տեսած մելիքը միտքը բերել:

— Գալիանէն կ'ըսէ թէ հազիւ երկու օր մեր քով պիտի մնան, ըսաւ կինը: Հալիճորէն կու գան. Ստեփան Շահումեան շատ բարեւներ զրկած է. պատուիրելով մեր բերդին դրօշակը շատ բարձր տնկել: Դաւիթ բեկին առողջութեան կը սպասեն ամբողջ Հայաստանը դրաւելու համար:

— Երջանիկ փափաք, պատասխանեց մելիքը: Ես ալ յոյսեր ունէի. ես ալ խանդավառ էի, բայց հիմա գըլուխնիս պահելու համար ուրիշ ճար պէտք է խորհինք:

— Ո՛չ, ամի, ըսաւ Գալիանէ, իշխանը պիտի առողջանայ եւ դրօշակը միշտ բարձր պիտի ծածանի այս բերդին վրայ: Երկու օրէն մենք ալ պիտի մեկնինք Աւետարանոց բերդին աշտարակները դրօշակներով զարդարելու. պիտի գա՞ն, պիտի գա՞ն եւ Տիգրակ լերան թուրք բեկերը մեր ախոռները պիտի մաքրեն:

Մելիքը չուզեց աղջկան ոսկի երազները մարել, ժպտեցաւ, հայրենասիրական խօսքեր ըսաւ, գոլկեց Հալիձորը եւ Դաւիթի արեւշատութեան համար բաժակներ պարպեցին:

Գեղամ կեանքին մէջ մելիքներու հետ ճաշ չէր ըրած, ջանաց ինքզինքը ազնուական ցուցնել, նոյնիսկ դուստր եղաւ ուտելու մէջ: Մելիքի արծաթէ պնակներուն մէջ յաճախ իր դէմքը կը նայէր եւ կը սրբէր հացի փշրանքներն հագուստներէն:

Գայիանէ կարծես փուշերու վարչ նստած էր, միշտ դէպի հիւսիս կը նայէր, աչքին առջեւ իր բերդը դրօշազարդ կը տեսնէր, կարծես կը լսէր Դաւիթի յաղթական բանակին փողերը: Երկու օր յետոյ ըսաւ Գուրգէնին.

— Գուրգէն, ձիերը պատրաստել տուր, այսօր պէտք է անպայման մեկնինք:

Հակառակ հօրքրոջ աղաչանքներուն, կարելի չեղաւ զինքը կեցնել: Համբուրեց զիրենք եւ թաւ ձիուն վրայ: Հօրաքոյրը բերդին բարձր պատուհանէն դիտեց դէպի դաշտադետինը, հինգ հոգի փուշերից ճամբայէն քառատրոփ դէպի հիւսիս կ'արշաւէին:

Հակառակ որ ճամբան աւելի երկար էր, քան երթի ժամանակ, ձիաւորները աճապարանքով կտրեցին Գեղամայ լեռներուն լանջերը, աւետիս տուին հայ գիւղերուն, սարսափ տուին թաթար գիւղերուն: Սեւանայ լիճն հեռուէն տեսնուեցաւ, ճամբան երբեմն կ'եղբերէր, երբեմն կը հեռանար: Լերան ետեւ լեռ կը բացուէր, ձորը ձորին ճամբայ կու տար: Որ հայ գիւղն հասնէին՝ հանդէս էր, ո'ր թաթար գիւղն հասնէին՝ պաճի եւ դարտաչ (քոյր, եղբայր) էին: Երկու շարաթ հազիւ տեսեց

արդէն կտրած էին Դիլիջանը եւ Արցախի մելիքութեան սահմաններն էին:

— Շարաթէ մը թերեւս Աւետարանոց հասնինք, ըսաւ Գուրգէն:

— Աւելի շուտ, Գուրգէն, պատասխանեց Գեղամ. ես այս կողմերը լաւ կը ճանչնամ, երբեմն անասուն գնելու եկած եմ:

Կատար ինքզինքը շատ յոգնած կը զգար, Գայիանէի կորովը չունէր, փափուկ էր, կողմերը կը ցաւէին ձիուն շարժումներէն: Գիշերները, քարէ անկողին ալ ըլլար, մեռելի պէս անշարժ կը քնանար:

— Քաջութիւն, ըսաւ Սահակ, քաջութիւն, Կատար, քիչ ատենէն կը հասնինք:

Ամէնէն անհամբերը Գայիանէն էր, ոչ այնքան իր ծնողքն համբուրելու, որքան Աւետարանոցի բերդին վրայ դրօշակներ շարելու:

Երկու օր եւս, ահա բերդը ժայռի դաղաթին, ահա գիւղն անոր շուքին տարածուած:

— Բե'րդը, բե'րդը, գոչեց Գուրգէն:

— Նոր Հալիձոր մը պիտի ըլլայ, ըսաւ Գայիանէ: Հոս պիտի ծագի կեանքիս ամէնէն գեղեցիկ օրը:

Կէսօրուան մօտ մտան բերդին բակը: Լուրը կայծակի պէս տարածուեցաւ: Իջաւ Մովինար, համբուրեց իր աղջիկը. եկաւ Աւան, համբուրեց իր աղջիկը: Գիսակի գրկեց Կատարն ու եղբայրները, գիւղացին հպարտ քայլերով իր տունը գնաց:

— Հայրիկ, ուխտ մը ունիմ, ըսաւ Գայիանէ. հանցէք մեր բոլոր դրօշակները:

Գուրգէնի եւ Սահակին հետ բերդին աշտարակները բարձրացաւ, բարձր տնկեց Արցախի մելիքութեան դրօշակը, անոր մօտ շարեց դուռնագեղ եւ ասեղնագործ

դրօշակներ, նայեցաւ դէպի հարաւ, դէպի հեռուն տա-
րածուած նազելագեղ Հայաստանը եւ ըսաւ...

— Պիտի գա՞ն, պիտի գա՞ն:

Պիտի գա՞ն, պիտի գա՞ն, կրկնեց Գայիանէ, երբ
Աւետարանոց բերդին կատարէն վար կ'իջնէր:

— Գիտե՞ս, Կատար, ի՞նչ ուրախութիւն պիտի ըլ-
լայ, ըսաւ խնդութեամբ:

Մինչ ինքը դրօշակներ կը շարէր, անդին Հալիճո-
րի մէջ տրտում՝ յուզարկաւորութիւն կը կատարէին:
Դաւիթ բեկ մեռած էր. ափը փակ, աչքերը խուփ, դրօ-
շակներով ծածկուած, իր կողքին սուրն ու հրացանը,
բոլորին արցունքը աչքերն ու սրտերը լալկան ուռնիի
պէս վրան կարկառած:

Կոչնակը կը հնչէր, վանականներ եւ կոյսեր թա-
փօրով կը տանէին այն հողին յանձնելու մեծ զօրավա-
րը, որ այնքան սիրեց այդ հողը եւ պատառ մը փրցուց
թշնամիներէն:

Բայց մինչեւ որ Դաւիթի մահուան լուրը հասնէր
Աւետարանոց դիւղը՝ ամիսներ կ'ուղէին: Գայիանէ ա-
մէն օր աշտարակ կը բարձրանար, կը նայէր դէպի հա-
րաւ արեւելք եւ տրտում վար կ'իջնէր:

— Աղջիկս, ըսաւ մայրը, դուն պիտի խենթեմաս.
եթէ պիտի գան, փողերով եւ աղմուկով կու գան, ին-
չո՞ւ շարունակ աշտարակներուն վրան ես:

— Առաջին տեսնողը կ'ուզեմ ես ըլլալ, պատասխա-
նեց Գայիանէ:

Արդէն գրեթէ վեց ամիս անցած էր այն օրէն որ
դրօշակներով բերդը զարգարեց: Կատար եւ Գուրգէն
սկսեցին ինչ խոր տարակոյսներ ունենալ, բայց Գայիա-
նէին բան չէին ըսեր. դիտէին թէ սիրտը շատ կը վերա-

տրուի, իրենք ալ յաճախ աշտարակներուն վրայ կ'ել-
լէին եւ կը նայէին դէպի հարաւ արեւելք:

— Ճիշտ այդ կողմէն պիտի գան, կ'ըսէր աղջիկը,
մատով ցոյց տալով հեռաւոր հորիզոնը:

Գիւղացիները վարժեր էին մեղիքի աղջկան կեան-
քին, անոնք դիտէին թէ ան ուրիշ աշխարհի մէջ կ'ա-
պրի. շատեր հերոս մը կը տեսնէին իր մէջը, ուրիշներ
խենթ մը. պառաւանները՝ չարաճճի մը որ քիչ ժամ կ'եր-
թայ, մանչերուն հետ կը պտըտի, զէնքերու հետ կը
խաղայ:

— Կրակին հետ խաղացողը կըրակով կ'այրի, կ'ը-
սէին իրարու:

— Որ սուր առնուցու՝ սրով անկանի, ասիկա Աւե-
տարանին մէջ գրուկ է, ըսաւ ծերունի մը, երբ Գայիա-
նէ ճամբայէն կ'անցնէր ատրճանակը մէջքին:

— Դուն կողիտ գիւղացի, ի՞նչ կը հասկնաս աշ-
խարհէն, պատասխանեց միջին տարիքով մէկը, լսելով
ծերունիին խօսքը:

Գայիանէ ուշ չզարձուց ծերունիներուն, ելաւ աշ-
տարակը եւ երկար մնաց: Երբ տուն կը վերադառնար,
ախոռի մը առջեւ երեք հողի բարձրաձայն կը խօսէին,
անոնցմէ մէկը հեռուներէն եկած էր:

— Մե՛ղք, մե՛ղք, հերոս Դաւիթը մեռած է, ես ինքս
լսեցի Դիլիջանի կողմերը: Գիւղէ գիւղ տխուր լուրը կը
չըջէր: Թուրքեր, Լեզկիներ, Թիւրքմէններ, Աճէմներ,
Օսմանցիներ, ալ ի՞նչ ըսեմ, ալ ի՞նչ համբեմ, ակռայ կը
կըճտէին Հայերուն վրայ: Նոյնիսկ թուրք գիւղեր կա-
յին որ սուրերը կը սրէին հայ մորթելու համար:

Գայիանէ չհաւատաց իր ականջներուն, ներս խու-
ժեց եւ բռնելով եկուորին կուրծքէն, պոռաց.

— Ըսէ՛, շիտակ ըսէ՛, Դաւիթ բեկը մեռա՞ծ է :

— Ի՞նչ ըսեմ, պատասխանեց զիւզացիին, սուտը ըսեմ՝ Աստուած կը պատժէ : Դաւիթ բեկը ամիսներ առաջ մեռած է, իր զօրավարները շփոթած, ելք մը կը խորհին որ Հալիճորն իր գլուխը պահէ : Քուրք զիւզերէ անցայ, դանակ կը սրէին. հայ զիւզերէ անցայ, ժամին դուռը տխուր կը խօսէին : Ի՞նչ ըսեմ, ազնիւ օրիորդ, Աստուած վկայ, ականջներովս լսեցի, աչքերովս տեսայ :

Աղջիկը թողուց զիւզացիին կուրծքը եւ առանց խօսք մը ըսելու տուն վերադարձաւ : Սրտին մէջ փոթորիկ մը կը պատրաստուէր, ձեռքերը պրկուած եւ դողդոջուն, շրթներուն կը տանէր, կը խածնէր, կը հեծկլտար, կը գոսպէր իր յուզումը, բայց չէր կրնար սիրտն հանդարտեցնել, ինքզինքը մխիթարել. — Դաւիթ մեռաւ, Հայաստան մեռաւ, կ'ըսէր ինքնիրեն : Բայց Մխիթար սպարապետը կայ, կ'աւելցնէր ետեւէն : Իր հասարակուհիներով, անյաղթելի է, քառասուն զըլուխ մէկ անգամէն կ'որոտէ : Եթէ անոր չհնազանդին, եթէ ամէն մէկ զօրավար ուզէ պետը դառնալ, ի՞նչ պիտի ըլլայ : Խեղճ Ստեփան, խեղճ Ստեփան, քովդ պէտք էի ըլլալ :

Իր Մովինար մայրը երկար աթոռի մը վրայ նստած Սաղմոս կը կարդար. հասաւ այնտեղ ուր գրուած էր.

— Յոյց տուր ինձ ճամբան ուսկից պիտի անցնիմ, որովհետեւ, Տէր, աչքերս քեզի բարձրացուցած եմ : Մայրը խփեց գերքը : Գայիանէ հեղեղի պէս բացուեցաւ եւ նետուեցաւ մօրը վրան, գլուխը կուրծքին դրաւ, լացը խեղդեց զինքը. հեկեկաց, շրթները բաց մնացին, բերանը խօսք չկար, սիրտը կը խօսէր :

— Ի՞նչ եղաւ, աղջիկս, հարցուց Մովինար, շոյե-

լով անոր սեւ սաթի պէս վարսերը : Ըսէ, հոգիս, ի՞նչ ունիս, ո՞ր կողմդ կը ցաւի, ո՞վ քեզ վշտացուց : Յաւդ առնեմ, հոգիս տամ, դուն միշտ քաջ եղար, ինչո՞ւ հիմա տղու պէս կու լաս :

— Դաւիթ բեկը, Դաւիթ բեկը...

— Ի՞նչ, ի՞նչ եղած է, հարցուց անձկութեամբ մայրը :

— Մեռա՞ծ է, ա՛խ, մեռա՞ծ է :

— Մի՛ լար աղջիկս, Հայաստան ուրիշ Դաւիթ բեկեր ալ կրնայ հանել :

Այդ պահուն հասաւ Մելիք Աւանը :

— Ի՞նչ կայ, ինչո՞ւ կու լաս, հարցուց Գայիանէին :

Աղջիկը չպատասխանեց եւ դառն ակնարկ մը նետեց իր հօրը վրան :

— Դաւիթ բեկը վախճաներ է, պատասխանեց Մովինար, անոր համար կու լայ :

— Ես ուրեմն խելքով դործեցի, կրակին հետ չխաղալով. զիտէի թէ հայկական դործ է. մէկը կը շինէ՝ հազար հոգի կը քանդեն : Լսածիս համեմատ, Դաւիթ միակն էր որ Հալիճորը կը պաշտպանէր, միակն էր որ զսպած էր այդ լեռնցի խենթերը :

Գայիանէ ինքզինքը քիչ մը զսպեց եւ յանկարծ պայթեցաւ եւ հօրը դէմ պոռաց .

— Այո՛, խելքով դործեցիք : Յիսուն հազար պատերազմիկներ ունէիք, եւ անոնց մէկ հատին դործը չկըրցան կատարել, քանի մը յիմար բեկերու ոտքերը լղկցիր, եւ եթէ վաղը Օսմանցիին հասնի՝ գլուխդ ո՞ր պիտի պահես :

— Ես օձի պէս զխտեմ գլուխս պահել, պատասխանեց հայրը : Ուր որ դէնքը չի դործեր, խելքը կը դործէ :

— Թերեւս ես զքեզ ազատեմ ամօթէ եւ գերութենէ , ոչ թէ քու յիսուն հազար մարտիկներդ , ըսաւ աղջիկը :

— Այժմ ատենն է որ հազուիս աղջկայ զգեստ , հրացան եւ ատրճանակ մէկզի զնես եւ մօրդ հետ խոհանոց քաշուիս :

— Ես ուրիշ միս ունիմ ջարդելիք , պատասխանեց Գայիանէ :

Քիչ վերջ եկաւ Գիսակ՝ Կատարին հետ : Երկու աղջիկները սենեակէն դուրս ելան . այրերը քով քովի նըստած տրտում երեսով իրար նայեցան :

— Բարեկամս , Գիսակ , ըսաւ Աւան , Դաւիթ բեկը մեռած է եւ զօրավարներն իրարու հետ անհամաձայն . իրենց հիմնած փոքրիկ պետութիւնը սարդոստայնի պէս պատառ պատառ պիտի ըլլայ : Ես լաւ ըրի կրակին հետ չխաղալով . մատներս այրելէն զատ սիրտս ու տունս ալ պիտի այրէի . եթէ Օսմանցին գայ , վա՛յ Հալիճորի հերոսներուն , վա՛յ զէնք առնողին , աքաղաղի պէս կը մօրթեն :

— Շատոնց լսած էի այդ դժբախտ բերդին ճակատադիրը : Պահակը մեռաւ . ամէն վայրի զազան հոն պիտի թափի մսի կտոր մը յափշտակելու համար :

— Անմիջական վտանգ չեմ տեսներ . եթէ Թուրքը գալու ըլլայ , լաւ ընդունելութիւն կ'ընենք , մեր զէնքերը կը յանձնենք եւ հլու հպատակ կը դառնանք :

Ապրուստի համար մեզի պէտք պիտի ունենան , կու տանք , թող կշտանան եւ մեզ չխաճեն :

— Ուտելիք ստիպուած ենք տալ , բայց զէնքերը ո՛չ . լաւ է որ ապահով տեղ մը թաղենք , ո՛վ գիտէ , խելքը զէնքի հետ աւելի զօրաւոր կ'ըլլայ :

— Մենք ալ այդպէս չե՞նք ընենք , զարնան եզին կո-

տոջները կը կոտրենք , բարի եզին խոտ կու տանք , պատասխանեց Աւան :

— Եկողը մեզի պէս չի մտածեր , չորն ու թացը միասին կ'այրէ , ըսաւ Գիսակ :

— Գայիանէ , պրոպ Աւան սենեակէն դուրս : Ինծի նայէ՛ , վաղը բերդին վրայէն բոլոր դրօշակները վար կ'առնես , ոչ մէկ հատ ծածանի : Եկող գացողին դուրս ծոկցինք , թող դալիք փոթորիկն ալ անցնի :

— Ո՛չ , երբեք , պատասխանեց աղջիկը : Աւելի բարձր , երկինքի մէջ պիտի պարզեմ , թող գիտնան թէ Հայաստան ամէն կողմ Հալիճոր է :

— Նայէ սա անխոհեմ եւ հպարտ աղջկան , հիմա տունս կրակի պիտի տայ :

— Քիչ ատենէն կ'իյնայ այդ կրակը ու թերեւս ես մարեմ :

Յաջորդ օրը Աւան մարդ զրկեց եւ բոլոր դրօշակներն հաւաքեց ու տուն բերաւ : Աղջիկն ուզեց յափըլտակել հօրը ձեռքէն .

— Հեռացի՛ր , հիմա մելիքն է որ կը հրամայէ : Ծոն վինա՛ր , խոհանոցէն խանձող մը բեր , ըսաւ կնոջը : Բըռնկեցան մետաքս , ոսկի , արծաթ կերպասները եւ Գայիանէն լացաւ զարնան ամպերու նման :

Այդ օրէն աղջիկը իր հօրը հետ մտերմութիւն չունեցաւ , հազիւ կը խօսէր , հազիւ կը պատասխանէր . սիրտը կոտրած եզնիկ մ'էր , որ իր սէրը կ'երթար սարերուն յայտնելու : Գուրգէն , Սահակ գործի գացին , Կատար միշտ հետն էր : Հմայուած էր Գայիանէի բնութենէն , անոր մէջ կեանք եւ հոգի կը տեսնէր , Հալիճորը կը տեսնէր : Միշտ յոյս ունէր թէ մելիքի աղջկան ճամբան զէպի պատիւի եւ փառքի ճամբան էր :

Ամիսներ անցան , Հալիճորի լուրերը հետզհետէ

մութ եւ վհատեցուցիչ էին: Հայ գիւղերը ինքնապաշտպանութեան միջոցներ կը մտածէին. Սիւնեցիքն իր ազատարար լեռներուն կը նայէր:

— Գէթ Ստեփանը դար, լուր մը բերէր, գէթ մարդ մը զրկէր, կ'ըսէր Գայրանէ Կատարին: Գաւիթ մեռաւ, բայց կայ Մխիթար սպարապետը, այդ հաստ բազուկներով մարդը, որ միակը հազարներ կրնայ ջարդել:

— Է՛հ, երբ տան մէջ կրակ իյնայ՝ ամէնէն հաստ գերանն ալ կ'այրի:

Լուրերը դեռ աւելի մութ դոյներով եկան, տիուր լուրը կայծակի պէս կը հասնի: Մխիթար սպարապետն սպաննած էին Ազուլեցիները, զօրավարները բաժան բաժան հեռացեր էին. Ստեփանէն լուր չկար:

Գայրանէ արդէն տասնեւեօթ տարեկան եղած էր, բարձրահասակ եւ առողջ դոյներով: Հիմա գէնքին հետ խելքն ալ սկսեր էր աւելի հատու դառնալ:

— Եթէ թշնամին հասնի այս կողմերը, ի՞նչ կըրնանք ընել, Կատար, հարցուց մտածկոտ:

— Ամէնէն աւելի պահել մեր պատիւն ու անմեղութիւնը, պատասխանեց Գիսակին աղջիկը:

— Ատոր կասկած չկայ, կը մեռնիմ, հազար անգամ կը մեռնիմ եւ թոյլ չեմ տար որ մէկն ինձ ծուռ աչքերով նայի: Մեր գիւղացիները զայլերն ի՞նչպէս կը բռնեն:

— Որոգայթ լարելով:

— Լաւ ըսիր, պէտք է խորհինք որոգայթներ լարել՝ թշնամի դազանները փոսը ձգելու համար:

— Ուղեղիդ մէջ ի՞նչ կը դառնայ, Գայրանէ, հարցուց Կատար:

— Ձեմ գիտեր. ամէն գիշեր երազիս մէջ մահ, թըշնամի, կռիւ, խառնակութիւն, դաւազրութիւն կը տես-

նեմ: Արի՛ւն, արի՛ւն, գետերու պէս արիւն կը հոսի մեր լեռներէն վար:

— Դուն հալումաչ պիտի ըլլաս, սիրելիս: Հանդարտէ, ժամանակը կու գայ իմաստուն կերպով ամէն բան կարգադրելու համար: Ձեմ գիտեր, վրադ ցաւի՞մ թէ նախանձիմ: Սիրոսս դող կ'իյնայ այդ բաները լսելով: Երէկ յաղթական քայլերդ, այսօր տրտմութեան եղանակ, խեղճ Հայութիւն, մէկ օրը միւսին չի նմանիր:

— Յաղթակա՛ն քայլերդ, յաղթակա՛ն քայլերդ, սիրելի Կատար: Հայրս դրօշակներն այրեց, ես արիւնի դրօշակ պիտի հիւսեմ:

Քանի մը ամիս չանցած, անազանդի լուրեր հասան. կարմիր դրօշակներ տեսած էին, վրան մահիկով, ճիւղերներ, հետեւակներ փոշիւից ճամբաներէն դուրսի պէս դէպի հիւսիս կը քալէին: Գիւղերը գրեթէ ամայի դարձած էին, հազիւ պառաւներ ու ծերունիներ մնացեր էին, տեսակ մը անպէտ ապրանքներ գիշատիչներուն համար: Գիւղէ գիւղ կը շրջէր Սարը Մուսքաֆա անունը: Սարսափն եկաւ հասաւ նաեւ Աւետարանոց գիւղը:

— Գայրանէ՛, կանչեց հայրը տագնապով, տունէն դուրս չելլես, միշտ իմ եւ մօրդ քովն եղիր: Խոհեմութիւնը մայր է ամէն յաջողութիւններու: Եկողները չենք ճանչնար, հաւատքով թշնամի, օրէնքով թշնամի, քրիստոնեան իրենց համար հաւի արժէք ալ չունի:

Ինչպէս փոթորիկն երբ մօտենայ, դուռ պատուհան անապարանքով կը փակեն, այսպէս գիւղացի եւ տանուտէր ամէն բան դոցելով լեռ բարձրացան, ոմանք տան խորերը ապաստանեցան: Մեղիք Աւան փնտուեց իր աղջիկը, բայց նա մանջու զգեստ հագուած գիւղէն դէպի

դուրս հարաւը, ճամբուն վրայ եկողներուն կը սպասէր : Եկան ձիաւորներ, եկան կառքեր, թնդանօթներ, Ենի-չէրիններ, հասան ձիեր վրանին հսկայ թմբուկներով, եկան ջորիներ բեռնատար կառքերով : Գրոշակներն իրար կը դպչէին եւ ամէնուն առջեւէն երիտասարդ մը, սրած պեխերով, ճերմակ ձիու մը վրան աշտանակած, հանդարտ տրոփիւնով դէպի Աւետարանոց գիւղը կու գար :

Գայիանէ ճամբուն վրայ բարեւի կեցաւ : Առաջին անգամն էր որ թուրք բանակը հայ բարեւ մը կ'ընդունէր :

— Հնչեցուցէք թմբուկները, հրամայեց առջեւէն քալող երիտասարդը :

Ուժդին հարուածներով զարկին պիրկ թմբուկներուն, ձորեր եւ լեռներ ձայն տուին : Գիւղը սրտադող վեր ցատկեց . Գայիանէ ձեռքերը կուրծքին խաչաձեւած դիտեց անցնող բանակը :

— Ալի՛, ըսաւ առաջնորդը, տե՛ս, ի՞նչ գեղեցիկ երիտասարդ է, ասոնց աղջիկներն ի՞նչ պիտի ըլլան :

— Երկինքի հրեշտակներ, Սիւլէյման զօրավար, պատասխանեց Ալի զնդապետը : Ես անպայման հաս մը կը փախցնեմ :

— Ամէնէն գեղեցիկը իմս է, ըսաւ Սիւլէյման : Այս ի՞նչ գիւղ է, դարձաւ Գայիանէին :

— Աւետարանոց գիւղն է, բերդը Արցախի մեծ մելիքութեան կեդրոնն է . ես մելիք Աւանի մանչն եմ, եկայ ձեզ հրաւիրելու մեր տունը, որ հանգչիք երկար ճամբորդութենէ : Հայրիկս ձեզի կը սպասէ :

Երբ մտան գիւղը, զայն ամայի գտան :

— Ո՞ւր են բնակիչներն, հարցուց Սիւլէյման Գայիանէին :

— Տէր իմ, պատասխանեց աղջիկը, հիմա Սեպտեմբեր ամսուն մէջն ենք, դիւղացին լեռ կը բարձրանայ, անասուններն արածելու, կաթ կթելու, պանիր կարագ շինելու, ձմրան պատրաստութեան համար : Մեր կենդանիներուն խոտը սարերէն կը բերենք, բոլոր աղջիկ, մանչ լեռներուն վրայ աշխատանքի լծուած են :

Երբ հասան մելիքի տան առջեւ, աղջիկը դուռը զարկաւ եւ պոռաց .

— Հայրիկ, ահա մեր ազատարարներն հասան, ալ Պարսիկին հոտը չենք քաշեր :

Մելիք Աւան դուռը բացաւ, խելքին չեկաւ թէ ի՞նչ կը պատահի, իր աղջիկը թուրք բանակին հետ, մէջքին աղուոր սուր մը կապած :

— Հայրիկ, մեր բարեկամ բանակին զօրավարներն ու զինուորները անօթի ծարաւ են, լաւ սեղան մը տանք . եկան յանուն ողորմած Սուլթանին որ Ստամպուլ կը նստի ոսկի թախտի վրայ, մեզ հոտած Պարսիկներէն ազատելու համար :

— Այդպէս է, պատասխանեց Սիւլէյման պեխերը սրելով : Ով որ բարեգուժ Սուլթանին հնազանդի՝ մեր սիրելի հպատակը կ'ըլլայ, մեր պաշտպանութիւնը կը վայելէ, իր մալին տէր կ'ըլլայ :

— Վարի Հայաստանի մէջ Հալիձոր անունով բերդ մը կար, քանի մը բախտախնդիրներ փակուած մէջը՝ Սուլթանին դէմ երան, ըսաւ զնդապետ Ալին, մենք մեր թմբուկներու ձայներով կործանեցինք զայն :

— Հալիձորին անունը մի՛ տար, ըսաւ աւանջէն Սիւլէյման, ասոնց միտքն ալ բան կ'իյնայ :

Կերան հաւ ու իւղոտ ոչխարի միս, ձեռքով կերան, պեխ ու բերան իւղով լեցուցին : Խմեցին լեռնային ուժեղ դինին, մոռնալով Մահմէտն ու Ղուրանը :

— Մեղիք Աւան, ըսաւ թուրք զօրավարը, ես հետս հազար զինուոր ունիմ այս կողմերը պաշտպանելու համար: Մեր մեծ բանակը՝ Սարը Մուսթաֆա, մեր անյաղթ զօրավարը, Գանձակի կողմերը տարաւ: Գիտէ՞ք թէ Մոսկովներուն կայսրը այս հողերը մեզի յանձնեց:

— Բայց որո՞ւն հողը որուն կը յանձնէ, այս հողերը մեր պապերուն պապերէն մեզի ժառանգութիւն անցած է: Մենք սիրով կը հպատակինք, ոչ թէ Մոսկովներուն կայսեր հրամանով, պատասխանեց Աւան:

— Այդպէս է, մենք ալ այդ Մոսկովը չենք սիրեր, եւ յաջողեցանք Կուր գետէն անդին նետել: Սուլթանին բանակները հաշիւ չունին, Ստամպուլի ոսկիները աստղերէն աւելի շատ են:

— Այդպէս է, ըսաւ Աւան:

Գայիանէ կատաղութենէն շրթները կը խածնէր: Կ'ուզէր արեւու գունդ ըլլալ, բոլորը, բոլորն այրել:

— Ես կը խորհիմ, ըսաւ թուրք զօրավարը, բանակէս մաս մը ձեր բերդին մէջ տեղաւորել, ուրիշներ բաժնել շրջակայ զիւղերուն մէջ, մէկ երկու տուներու մէջ խմբելով: Ասոնց կերակուրը դուք պիտի տաք:

— Տէր իմ, մէջն ինկաւ Գայիանէ, եթէ ինծի կը հարցնէք, ես ուրիշ լաւագոյն խորհուրդ մը պիտի տամ, պիտի ըսէք թէ պէիս մօրուք չունիս, տուած խորհուրդդ ինչ պիտի ըլլայ: Լաւագոյն է որ մէկ մէկ կամ երկու երկու զինուոր տուներուն մէջ բաժնէք. թէ՛ պահելը դիւրին կ'ըլլայ եւ թէ՛ մտերմանալով բնակիչներուն, ամէն գաղտնիք կամ դաւադրութիւն իսկոյն կը լսեն: Մեր ժողովուրդը լեռնցի է, երկար բարակ չի մտածեր, մատը քարին կը զարնէ եւ կայծ կը հանէ: Դուք եւ զընդապետ Ալին մեր հիւրն էք, հանգիստ սենեակ ունինք, ուտելիք առատ, գինի՝ տիկերով լեցուն:

Սիւլէյման Ալին նայեցաւ, Ալին Սիւլէյմանին նայեցաւ:

— Շատ խելացի կը դտնեմ, Ալի՛ ըսաւ զօրավարը, մենք կերակուր դտնելու համար, ստիպուած էինք աղուէսի պէս հաւնոցները թափառիլ. այսպէս ամէն զինուոր տան մը սեղանէն կ'ուտէ ու կը խմէ:

Շուրջ 200 զինուորներ բաժնեցին Աւետարանոց զիւղին մէջ, մնացածները ուրիշ զիւղեր փոխադրեցին: Սիւլէյման եւ Ալի մեղիքին հիւր եղան. թմբուկները բերդին մէջ դրին, ձիերը ախոռները քաշեցին: Խոտն ու կերակուրն իրենցն էր, ծառայութիւն՝ խեղճ զիւղացիին:

Հասնումի յաջորդ առաւօտ Սիւլէյման հրամայեց Գայիանէին սուլթանական դրօշակը բերդին վրայ բարձրացնել:

— Տէր իմ, ըսաւ աղջիկը, դրօշակը շատ սրբազան բան է, վեհափառ Սուլթանը կը ներկայացնէ, յարմար պիտի ըլլայ որ ձեր սպաներէն մին զայն տնկէ, քովն ալ հօրս մեղիքական դրօշակը:

— Ո՛չ, ուրիշ դրօշակ երբեք, պատասխանեց թուրքը:

— Նայէ՛, Սիւլէյման, ըսաւ աղջիկը, մեր ժողովուրդը վարժեր է մեղիքի դրօշակին. երբ միասին տեսնէ, պիտի ըսէ թէ բարեկամ բարեկամի ձեռքը կը սեղմէ, ապա թէ ոչ թշնամի համարելով, կրնայ կայծ հանել: Ամէնէն ապահով տիրապետութիւնը խաղաղ կենակցութիւնն է:

— Իրաւունք ունիս, Հալիճոր չստեղծենք: Թող միասին բարձրանան աշտարակին վրայ:

Մեղիք Աւան ապշած կը հետեւէր աղջկան, կարծես թէ տղայացեր էր, բան չէր հասկնար, զարմացեր էր թէ

այն հայրենասէր աղջիկն ինչպէս հիմա համակամ ու խոնարհամիտ եղած էր: Թմբուկներ զարկին դժոխային աղմուկով, փողերն հնչեցին եւ երկու զբօշակներ իրար քով քամիին հետ խաղացին:

Գայիանէ իր հմայքով տիրապետեց թուրք զօրավարին, որ աղջկան խորհրդով կը վարէր իր իշխանութիւնը: Ինքն ալ վախ ունէր այդ հեռաւոր եւ թշնամի աշխարհին մէջ. լաւագոյն զէնքն էր համակրանք շահիլ: Յաճախ կը զսպէր իր զինուորները աւելորդ պահանջներ կամ դողութիւններ չընել. մանաւանդ կիներուն չզպչել:

— Հայը, իր պատիւին համար, աշխարհիս կրակ կու տայ, կ'ըսէր իր զինակիցներուն:

Միւլէյման ինքզինքը Աւանի տան անդամ կը նկատէր. համակրանքով կապուած էր Գայիանէին. յաճախ միասին կը տանէր շրջակայ լեռները քննելու համար: Գայիանէ Գուրդէնն ու Կատարն ալ հետը կ'առնէր. թուրք է, ինչ գիտես:

Տիգակ լերան կողերուն բազմաթիւ հօտեր տեսաւ սուլթանին զօրավարը:

— Որո՞նք են այս հօտերը, հարցուց աղջկան:

— Պարսիկ բեկերուն են. անոնց Շահը կը ճանչնան եւ Սուլթանը կ'արհամարհեն:

Քանի մը օր վերջ թուրք զօրավարը յիսուն զինուոր զրկեց հրամայելով ոչխարներն հաւաքել եւ Աւետարանոց զիւղն իջեցնել: Թաթար հովիւներն եկան ազգեցին, բեկերն եկան աղաչեցին, բայց Միւլէյման չհաւատաց թէ անոնք Սուլթանը կը ճանչնան:

— Քրիստոնեաներէն աւելի թշնամի են մեր կրօնքին, ըսաւ ինքնիրեն, Մարգարէին խորթ զաւակները: Շարաթներ եւ ամիսներ անցան, զիւղերն աղբա-

տացան, կովերն ախոռներու մէջ առանց խոտի մնացին, թուրք ձիերը գերցան, զիւղացին չոր հացով մնաց, թուրք զինուորը գերցաւ: Մեյլիք Աւանին մազերն օրէ օր կը ճերմկէին. Գայիանէ անհամբեր կը դառնար:

Թուրք զօրավարը շատ ուշ հասկցաւ թէ իր բարեկամ Գայիանէն աղջիկ էր. պառաւէ մը լսած էր, բաց բերան պառաւէ մը եւ հիմա իր մէջ ուրիշ սէր մտած էր աղջկան հանդէպ: Լսեցին նաեւ Ալի, զօրավար, զընդապետ. առանց իրարու բան ըսելու սիրահարուեցան հէզ աղջկան վրան: Կատար իր տան մէջ երկու սպաներ կը պահէր, կը նմանէր այն եկեղանիկին, որ կատուններու վախէն գերանէ գերան կը թռչի: Խեղճ աղջիկը ըստիպուած էր յաճախ իր ազգականներուն տունը ապաստանիլ, պատիւը պահելու համար:

Միւլէյման յայտնի կերպով Մեյլիքէն Գայիանէի ձեռքը խնդրեց: Աւան չէր կրնար մերժել, սուտ խոստումներ տուաւ, ժամանակ խնդրեց մտածելու համար: Ծովինար լացաւ, աղջիկը արհամարհոտ ժպիտ մը ըրաւ:

— Հայրիկ, ըսաւ, ինձի ձգէ, ես այդ փեսային արջու պար կը խաղցնեմ:

Նկաւ Ալի, ինքն ալ Գայիանէին ձեռքը խնդրեց: Աւան աւելի շփոթեցաւ:

— Ինձի ձգէ, հայրիկ, ըսաւ աղջիկը, ես այս արջն ալ կը խաղցնեմ:

Օրերն անցան, Միւլէյման անհամբեր էր պսակուելու:

— Գիտես, Միւլէյման, ըսաւ Գայիանէ, Ալին զիս հանդիստ չի թողներ: Կ'ուզէ զիս բռնի առնել ու փախչիլ բանակէն: Նթէ զիս չպաշտպանես՝ մեր սէրը յաւիտեանս երջանկութիւն չի բերեր:

— Ալի^ոն, այդ շունը, գոչեց թուրք զօրավարը :
Վաղը հանդիստ կ'ըլլաս :

Յաջորդ օրը ղնդապետը բակը կանչեց, հետն էր նսեւ Գայիանէ :

— Ծո՛ւն, պոռաց Ալիին երեսին, Գայիանէն ի՛մս է, վա՛յ դպչողին :

— Դո՛ւն ես շունը, Գայիանէն ի՛մս է, վա՛յ դըպչողին :

Աղջիկը անխողով, ձեռքերը կուրծքին վրայ խաչածեւած կը դիտէր. երբ երկու մրցորդներ սուրերը քաշելով իրար վրայ խոյացան. փոքրիկ մենամարտ մը եւ ահա Ալի սրտին վէրք մը առնելով հոնդիւն մը հանեց եւ դետին փոռեցաւ :

— Ծոն մը պակաս, ըսաւ Սիւլէյման, ճակտի քրտինքը սրբելով : Հոգիս, հիմա քու մազիդ դպչող չկայ : Յոգնած եմ, բաժակ մը ջուր բեր, երթամ եւ հանդչիմ :

Ջուրը խմեց եւ երկարեցաւ իր անկողինին վրայ :

— Հայրիկ, ըսաւ Գայիանէ իր հօրը, ստիկա մէկ :

— Ի՞նչ մէկ :

— Ալին ղնաց Մահմէտին, կարգը Սիւլէյմանին պիտի դայ : Մտիկ ըրէ, կը տեսնես որ մեր ժողովուրդին կեանքը, կեանք չէ : Այս Կիրակի կանչէ՛ Արցախի բոլոր մեղիքները, ըսելիք ունիմ :

— Խենթ, քու խօսքովդ մա՞րդ կու դայ :

— Իրբեւ թէ դուն կը կանչես : Մեր տանը մէջ չէ, այլ անտառին մէջ սաստիկ դաղտնի ժողով մը, սատանան ալ պիտի չդիտնայ : Դանակը մեր ոսկրին հասաւ : Եթէ Հալիձորը քանդուեցաւ, Աւետարանոցի բերդը պիտի բարձրացնէ իր դըրօշակը առանց մահիկը քովն ունենալու : Կը դրես մեղիքներուն տանըհինդ օրէն հոս

ըլլալ, թէ աղջկանս նշանտուքը պիտի կատարեմ, հրամանեցէք :

Երկու շաբաթ վերջը բոլոր Արցախի եւ Գուգարքի մեղիքները հաւաքուեցան Աւետարանոց գիւղը : Մեղիք Աւան իր իշխանական զգեստները հագած էր, Գայիանէ դարձեր էր իսկական փերի մը : Սիւլէյման ղինուորական տարազով գեղեցիկ ասպետ մը դարձած էր, մետաքսէ ապարօշը գլխուն, փայլուն սուր մը մէջքին : Գիւղին բոլոր ղինուորները տողանցքի կեցան : Նշանտուքը կատարեցին : Գայիանէ կեղծ համբոյր մը տըլար թուրքին ըսելով .

— Հարսանիքը շուտով կ'ըլլայ, եւ ի՞նչ հարսանիք, բոլոր աշխարհ պիտի դարմանայ :

Մեղիքները քանի մը օր հիւր եղան Աւանին : Ոմանք տրտում, ուրիշներ անտարբեր խեղճ Գայիանէին համար : Սիւլէյման Տիղակի կողմերը գնաց, թաթար բեկերը խողովութեան մէջ էին, իրենց հօտերը տարեր կերեր էին :

— Այս նշանտուքը կատակերդութիւն էր, ըսաւ աղջիկը, թուրքին տուած համբոյրս Յուգայի համբոյրին միւս կողմն էր : Դուք գիտէք թէ մեր գիւղերը անօթի եւ գերի մնացին, պէտք է ազատելու ճար մը խորհիլ : Ես շատոնց խորհած եմ, եւ անոր համար խորհուրդ տուի թուրք զօրավարին տունէ տուն բաժնել իր ղինուորները : Մինչեւ Գանձակ քանի՞ հազարի կը հասնին :

— Քսան հազար են, պատասխանեցին մեղիքները :

— Մենք եթէ մեր ուժերը միացնէինք, 200.000ի կը հասնէինք, բայց հիմա ուրիշ ճամբայ պէտք է բռնենք : Գայլ մը որսալու համար գիւղացին որողայթ կը լարէ : Մեր որողայթն այս է : Հիմա Սեպտեմբեր մէկն է, ամիսէ մը Հոկտեմբեր մէկը . Կիրակի է : Հրահանդ

կը զրկէք գիւղէ գիւղ, խիստ գաղտնի, որ այդ օրը ամէն տուն իր մէկ կամ երկու զինուորին առատ զինի եւ կերակուր տայ: Տան դրան ետեւ պատրաստ ըլլան կացիները եւ նոյն օրը նոյն ժամին, երբ կոչնակներու ձայնը լսեն՝ ջարդեն այդ բարբարոս զլուխները:

Մելիքներն իրարու երես նայեցան:

— Կ'ըլլա՞յ, մելիք Աւան:

Մելիք Աւան զլուխը շարժեց, աւելի այոյի կողմը քան թէ ոչի:

— Կ'ըլլայ, պոռացին երիտասարդ մելիքները: Կեցցէ՛ Գայիանէ, Աստուած իրեն ներշնչեց այդ խորհուրդը:

— Մի՛ վախնաք Ստամպուլի Սուլթանէն. արդէն Պարսիկներու Նատիր շահը ոտքի ելած է եւ մեր բարեկամն է, ըսաւ Գայիանէ:

Անոնք ժողովի մէջ կարգախօսք մը առաջարկեցին, ասիկա Աւանին գիտն էր. Հոկտեմբեր մէկին բարեխրամ Սուլթանի բանակներուն Հայաստանը գրաւելուն երկրորդ տարեդարձն է, լաւ փաշ մը տուէք:

Սիւլէյման անհամբեր էր հարսանիքը շուտով կատարելու:

— Գիտե՞ս, սիրելի փեսաս, ըսաւ Գայիանէ, հայրիկս վերջապէս որոշեց Հոկտեմբեր մէկին կատարել մեր հարսանիքը. այդ օր բարեխնամ Սուլթանին բանակներուն հոս հասնելու երկրորդ տարեդարձն է: Ի՞նչ տօն, ի՞նչ հարսանիք, ի՞նչ ուրախութիւն: Երկինքէն արեւն ալ պիտի կանչենք որ գիշեր չըլլայ, միշտ լոյս, միշտ պար եւ կերուխում:

Թուրք զօրավարին աչքերը ապակիի պէս փայլեցան, սրեց իր պէխերը եւ ըսաւ.

— Սիրելիս, այդ օրը ի՞նչ կ'ուզես որ քեզի նուր-

բեմ. փառքս, հարստութիւնս տամ քիչ է, հոգիս տամ՝ նուսխայի պէս պահէ:

— Ես հարստութիւն չեմ փափաքիր, եթէ հոգիդ տաս, արդէն ամէն բան տուած կ'ըլլաս: Ո՛չ բերդ, ո՛չ Ստամպուլ աչքիս չեն գար, միայն դուն եւ քու հոգիդ զիս պիտի երջանկացնեն:

Հոկտեմբեր մէկին, Սիւլէյման տաք բաղնիք մը առաւ, հազաւ իր զինուորական շքեղ տարազը: Հարսանիքը երեկոյեան պիտի կատարուէր: Մելիքի տան մէջ եռուզեռ կար: Գայիանէ հրամայած էր աղախիներուն իր շքեղազոյն զգեստները պատրաստել. հագուեցաւ, շքեղացաւ, գեղեցկացաւ քան թէ Աստղիկ աստուածուհին: Կէս օրուան մօտ Սիւլէյման գնաց տուները շրջելու, որ զինուորներն առատ ուտելիք ունենան: Տեսաւ որ կերակուր եւ զինի սեղաններուն վրայ շարուած էին: Արեւն հորիզոնին դադաթը բարձրացած էր: Ժամին կոչնակն ընդհատ ընդհատ հնչեց, պղինձ էր, խոր եւ ոլորուն արձագանդ տուաւ: Երիտասարդ կամ ծերունի բարձրացուցին կացիները եւ ամէն տան մէջ մէկ կամ երկու զլուխներ թռան: Ոմանք սաստիկ վիրաւոր փողոց թափեցան: Մէկը վազեց թուրք զօրավարին ետեւէն, բայց ան փախաւ Աւանի տունը, պոռալով.

— Գայիանէ՛, Գայիանէ՛, զիս պաշտպանէ, ի՞նչ կ'ըլլայ չեմ հասկնար:

Ներս խոյացաւ դռնէն. աղջիկը դրան ետեւ դաշոյնը ձեռքին՝ անոր կը սպասէր. խոթեց իր ատելի փեսային կուրծքը եւ սիրտը ճեղքեց:

— Սիւլէյմա՞ն, Սիւլէյմա՞ն, ահաւասիկ իմ հարսնութեանս երջանիկ օրը: Հա՛, հա՛, հա՛, հա՛...:

Այս էր Գայիանէի վրէժը:

Տպագրութիւնը աւարտեցաւ

31 Յունուար 1971ին

Ս. Ղազարու տպարանին մէջ

Վ Ե Ե Ե Ի Կ